




ԲԱԳԻՆ

Ք. ՏԱՐԻ 1971 ՆՈՅԵՄԲԵՐ
digitised by A.R.A.R.®

ԹԻԻ 11

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Բ. ԿՈՒՆԵԱՆ	Երազ ունեցող ժողովուրդը
Պ. ԳՈՒԲԵԼԵԱՆ	Եռանկյուն
Ա. ՆՈՒՐԵԱՆ	Անապարհ, կարօտ
Յ. ԶՈՐԵՅԻ	Հայկական ռեզեռավեպ
Խ. ԱՍՈՅԵԱՆ	Պատը
Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ	Բանաստեղծութիւն մը այլ ժամ անկերու մէջ
Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ	Զրոյց առժամօք ձայներու միջեւ
Է. ՍԱՐԱՃԵԱՆ	Որպէսզի կրկին
Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ	* * *
* * *	Մնացեալը
ՅՈՎԷ. ԳՐԻԳՈՐԵԱՆ	Քեզ հետ եւ քեզ համար
Դ. ՅՈՎՀԱՆՆԷՍ	Եւ իմ աշխնը, եւ իմ տառ ու փափակ արիւնը...
Ա. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ	Թիքեռը գիտէր...
Հ. ԷՒՅԵԱՆ	* * *
Թ. ԲՈՂՈՐՋԵԱՆ	Թմկայ ձորում
Ե. ՍԱՀԱԿԵԱՆ	Կարապետը
Ջ. ԳՐԻԳՈՐԵԱՆ	* * *
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԸ	Բանավէն
Պ. ՍԵՒԱԿ	Ինչ-ը, ինչպէս-ը եւ որպէս-ը
Բ. ՓԱՓԱՋԵԱՆ	Պ. Սեւակի դիմագծի աշագատ պահպանման համար
Լ. ՄԿՐՏՉԵԱՆ	Յ. Մանուկեանի ճշմարտական հաշիւը

Բազմ

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՎ ԱՐՈՒԵՍՏԻ

Ժ. ՅԱԼԻՆ. ԹԻՖԼ 11

ՆՈՅԵՄԲԵՐ 1921

ՊԵՏԵՐԲՈՒԹ

ԵՐԱԶ ՈՒՆԵՑՈՂ ԺՈՂՈՎՈՒՄԻՆ

— Հիմա ի՞նչ, սիրտ իմ:

Դ՛ուքի ա՛ր, ասկէ հտա՛: Մեծ հարցումները պատասխան չստացան: Առեղծ-
ւածը մնաց առեղծուած: Հիմա հարցումները չեն տանջեր զիս: Կ'երբա՛մ հա-
սանքի՞ն հետ:

Կոր ժամանակ երիտասարդ էի. խանդավառ եւ ըմբոստ. Կ'ուզէի աշխարհը
փոխել, վերակերտել կեանքը՝ պատկերիս համաձայն: Փռիսի կարելի էր՝ ու-
րանալով, բնագոյտելով, քանդելով: Եւ դարձայ յեղափոխական:

Հիմա: Կ'արտորամ հաւաքած խիճերս իրարու մօտ քերել, կերտել երազս:
Տալ իմեզինքն քանի ուշ չէ: Հետք մը քաղալ: Հրահրել ցեղին ժառանգու-
թիւնը: Նարեք պիտի ստանանքն զայն շուտով: Ո՛հ, իմաստուն եմ եւ հիմա:
Հիմա կը հասկնամ ժողովուրդս: Անհատը անցաւր է, ցեղը միայն յաւիտե-
անական: Իմ ժողովուրդս կառուցանելով ընկնած է կեանքը. շինելով, կրկին
շինելով, միշտ շինելով:

Պատմութի՛ւնը — Պայքարը ստեղծագործող փոքրամասնութեան եւ քանդող
ամբոխին: Տենդը, մեծութիւնը, գեղեցկութիւնը, երազը եւ — ճախանձը:
Կառուցանողներն ու քանդողները: Դժբախտութեան մէջ հզօր, պարտութեան
մէջ յաղթական: Երազ ունեցող ժողովուրդ: Նիւթը կը տարրալուծուի, երազը
անմահ է: Երկրագունդէն մեծ է, արեւէն, աստղերէն մեծ: Երազը տիեզերքը
կ'ընդգրկէ: Կը յաղթէ ժամանակին ու միջոցին:

Երազ ունեցող ժողովուրդ, կը գգամ ինչ հիմա: Խանդավառ եմ եւ իմա-
ստուն: Չեմ փնտռեր, չեմ վերլուծեր, կը գգամ ինչ իրրեւ հորհուրդ հորին,
անհատնում քրթաքցում Լոյսի, չմարող Ջայն ժամանակին մէջ...

ԲԻԻԶԱՆԴ ԿՈՒՆԵԱՆ

ՊՕՂՈՍ ԳՈՒԲԵԼԵԱՆ

Ե Ռ Ա Ն Կ Ի Ի Ն Ը



Կարկաշտող ցայտաղբիւրներու խոնաւութիւնը մեղմօրէն շոյեց գէմքս, երբ գամբուի մը առաջնորդութեամբ մտայ ներս:

Երեւակայութիւնս ինձմէ առաջ բարձրացաւ ոլորադարձ սանդուխին ըստեղնաշարէն, փնտռեց ու գտաւ ձեզ, ջղայնօրէն բազմած լաշի վերանտային վրայ նետուած պանպուէ բազկաթոռներուն վրայ, ձեր միջիւ մօեղէն եռանկիւն մը կազմած:

Կը սպասէիք ինծի: Օրուան հիւրն էի, ճիշդը՝ հանդիսատեսը: Պարսպ սրահի գիմաց խաղացող դերասանի ջըղային տաղնապը, որ ձերն էր, անհետացաւ յանկարծ: Բոլորդ ալ գիտէիք, թէ տեղեակ էի ձեր միջիւ զարգացող եռանկիւնի մը գոյութեան: Փայմերայի ակնարկութեամբ, սեւ ու թափանցող աչքերէս ո՛չ մէկ երեւոյթ աննշմար կ'անցնէր: Սակայն զաղտնապահութեանս վըրայ չէիք տարակուսեր. զեղուն կապկեւ գիտնայը, — ըսած է մտածող մը, — մարդկային արժանիքներուն եթէ դերագոյնը չէ, դոնէ ազնուագոյնն է: Առանց այլ արժանիքիս, պատիւը պիտի չունենայի:

Նայի ամենի ընկերութեան մը անդլիացի կառավարիչին հիւրը ըլլալու:

Առաջին դաւաթս չթօթուած՝ կառավարիչը, ալքոլի եւ յետմիջօրէի խաղացած կոլֆին առթած յոգնութիւններու ճնշման տակ՝ մրափել սկսաւ: Կառավարիչները, եթէ իրենց կենսայորդ կիներուն եւ անոնց սիրահարներուն դիմաց չմրափեն, հասպա ո՞ր քարին զարնեն իրենց գլուխը:

Ճիճ, խոստովանիմ, թէ կ'ուզեմ ձեզ հասկնալ, դատելու ու վճիռներ արձակելու տրամադրութենէն մղոններ հեռու եմ այս պահուն: Արդէն իմ փոթորկոտ կեանքովս, Ամազոնի ահազնութեամբ յորդող, թաւալող, իր հունին վրայ ամէն ինչ կործանող սէրերովս, նմաններս դատելու դիւքին վրայ չեմ գտնուած բնաւ: Ձեր պարզած եռանկիւնը, հաւատա՛, Ճիճ, նման է ժիլետաւոր ուրիշ եռանկիւններու:

Փնտռեցի զինչո՞ւն, ուզեցի միջին խորը թափանցելով յայտնաբերել պատճառը: Իմ պարադայիս, չկրցայ անոր դոյութեան հետ հաշտուելու չափ նրբանալ, եռանկիւնին գլուխը գտնուող եղ-

ընթերցել՝ կառավարելին նման... Գիտելիք անտաշ ըլլալու ու գիտնալով ընտրելիքի գիտ քու մտերիմդ։ Ձեռք գիտեր, զեռ վտանգ չեմ, ընտրութիւնդ պատի՞ւ էր, թէ բեռ... Ճիւղ, ըսէ՛, մկանուտ թեւերուս, ապառաժեայ ուսերո՞ւս, թէ տկար հոգիիս վստահեցար։

Հոգեկան կապ մը, եղբայրութիւն մը ստեղծուեցաւ մեր միջեւ, երբ առանց տեսած ըլլալու Արարատը՝ զայն նկարեցիք իր ամբողջ վեհաթեմա՝ Գոյնեղով, գոյնեղու խառնուրդով՝ քառակուսի կիւսամեթիւրի մը վրայ, ժողովուրդիս գերւած մեծութիւնը նկարեցիք, վրձինդ աստանդական հայու վիշտերուն մէջ թաթախելով։

Երախտապարտ եմ քեզի ու պատրաստ արուեստագէտի քու ձեռքերդ համարելու, հոգ չէ՛ թէ անոնք մէկի տեղ հազար հումանուիտի մարմինն խորչեցը շրջած ըլլան ու հոն փնտռած՝ կը բազ, կեանք, ներշնչում...

Ճիւղ, բարեկամս, դէմ դէմի նստած ենք գիշերուան զովութեան մէջ։ Լուսաւորդ պատշգամբ մութին ընդմէջէն կարծես ամբողջ ովկիանոսը գրկած ըլլար։ Ազգակիցներդ քաղաքին բարձրաբերձ ու զեղատեսիլ վայրերը ընտրած են բնակութեան համար, հետո միւսներէն... Այս մարդը, սիրուհիիդ ամուսինը, իր երկրին մէջ քանի մը սենեակներ քով քովի բերելու պատշաճութիւնը պիտի ունենայր։ Ետասէր ժողովուրդի մակդիրին արժանացած էք։ Դարերով, դարերէ ի վեր ափրիկեցիներուն խրճիթէ մը աւելին չէք տուած, ասկէ աւելին յարմար չէք տեսած։ Խրճիթային կեանք, խրճիթային ուսում ու մտայնութիւն յաջողած էք կամ զիջած էք տալ, ու, բարեկամ, փոխարէնը նոր օրերու ափրիկեցիին կը խորչի՝ ձեռքէ ու թուանաւոր ատելութիւնը չի ծածկեր այլեւս։

Դուք իմ բարեկամս ես. այդ առանձնաշնորհումէն կ'օգտուիմ՝ դառնութեամբ լեցուն խիստ խօսքեր շարունակ երեսիդ։ Թէ՛ իրերու հայ եւ թէ՛ իրերու մարդ խան-

ձարութիւն ի վեր տեսած անիրաւութիւնները գիտ ըմբոստութեան կը մղեն։ Ամէն առիթով մեղրածոր խօսքեր շալկելով, կիրթ ու հանելի երեսալու դիւրին ճամբան չի խանդավառեր գիտ։

Այս, հակառկ գիտ հիւժոյղ ներքին տաղանդներու՝ օդին մէջ արբեցուցիչ բան մը կայ։ Անընդհատ կ'ըմպեմ այն տիպէին, զոր խափշիկ սպասաւորը կը մատրուակէ, անոր աչքերուն սպիտակը, ատամներուն մարգարիտը եւ հազուադէպ ճերմկութիւնը իր զանգուածային սեւութեան հակադրելով։ Կը բանամ պահ մը անոր ուղեղը, փորձ մը կ'ընեմ մտածումները կարգաւոր, մարդ է՝ միտով, ոսկորով շինուած. տարիքը չի մատներ, զեղադիմ երիտասարդ մըն է, կիրթ են շարժումները։ Մարդ չի նկատեր զինք, ոտպոդ մը ըլլար կարծես, որ տիրուհիին պահանջին վրայ, կրքոտ սիրահարի պարտականութիւն ալ կը կատարէ։ Ինք սինիզմով հանդիսատես կ'ըլլայ բեմադրւած փիեսին, առանց ներկայութիւնը զգալի դարձնելու՝ կը հետեւի մեզի։ Տիրուհիին մասին շատ բան գիտէ, անոր ունեցած տարփածութիւնն իրաւարդեցանքը ճանչնալով հանդերձ, տեղին համեմատ սուտ խուլ, համբ եւ կոյր կը ձեւանայ։

Այս ժողովուրդին գաղտնասիրութիւնը կ'աղչեցնէ գիտ։ Սպիտակներս ի՞նչ շատախօս ենք, դիմացինին մութը կը մարենք, եթէ միայն պահ մը տկարանայ...

Խափշիկը ինծի հանդէպ մասնաւոր հոգածութիւն ցոյց կու տայ, թեւեւ գիտ Փալմերային քով կանգնեցուցած է արդէն ու քեզ, Ճիւղ, քուրջի կտորի մը պէս մէկ կողմ շարտած։ Մարդ Աստուծոյ, ձեռք ձեռքերը գրպանիդ նեւտելու փորձ մը ըրէք, օր մը, խափշիկ է, կը սպասէ։

Ճիւղ, սիրուհիիդ ամուսինը, ամենէն ընկերութեան կառավարելը գրեթէ կը մրափէ... Դուք եւ Փալմերան, զոր ձէն շարք կը կոչենք մտերմութեան մէջ՝

աչքերով գիրար կ'ուտէք, յաւիտենական
անօթիներու պէս...

Քիչ ետք, խափշիկ սպասաւորը սի-
րունիից եփած համեղ ճաշերը կը տր
սե-
ղանի մը վրայ պիտի զետեղէ. կարգով
պիտի ելլենք մենք մեզի սպասարկելու:
Դանդաղօրէն սեղանին բոլորտիքը պիտի
զառնանք, արարողութիւն մը, երկրորդ
պատերազմէն ժառանգ մնացած պարե-
նաւորման նմանոյ: Յետոյ լեցուն պնակ-
ները սպիտակ թաշկինակներով ծածկը-
ւած մեր ծունկերուն վրայ պիտի զետե-
ղենք ու անպարարներու նման, առանց
փշրանք մը թափելու, պիտի լափենք,
հիշող ասնտիբուհին լափածիդ պէս,
զրեթէ նոյն թացագանձութիւններուն ար-
ձազանգներով լեցնելով միջոցը. «Ախ,
ի՞ք քէյսքս սո նայս, աւնտըրֆուլ մի,
լավըլի, պիտիթիֆուլ...»:

Կառավարիչը, ճաշի ատեն, շտեմար-
ւած աշխուժութիւն ցուցաբերեց: Կռկէն
ետք, Կռկ Գլապի մէջ կոնծած գարննու-
րը ախորժակը գրգռած էր: Յամառ աշ-
խատող է: Ընկերութեան քարտուղարու-
հիններուն զլխուն պատուհասը...

Անցեալ օր, միասին կողֆի մըցում
մը ունեցանք: Լաւ խօսակից է: Զօրաւոր
հիմարով համեմուած պատմելիքներ ու-
նի: Անշուշտ, քու եւ փալմերային մասին
խօսք չբացինք, եթէ բացուէր, անգամ,
այսպէս պիտի յառաջանար.

«Ո, ձիւմ իգ է նայս լէտ, օհ եկտ,
Փալմերա իգ է սուիթ կըրլ, ետ նո,
ար է լաֆի մէն... Խէրը անծաւ'ծս: Փալ-
մերան եւ կառավարիչը, իրենց աճուա-
նութեան երկոտասանակ մը տարիներուն
կէսէն աւելին իրարմէ բաժնուած ապրած
են. զերջին չորս տարիներուն, համա-
ձայնութեամբ, դադրեցուցած են իրենց
մտերմիկ կեանքը: ձիւմ, յիսունիդ մէջն
ես, փալմերան՝ տասր տարով քեզմէ
պզտիկ: Տարիքը՝ ոչի'նչ, երիտասարդի
եռանդ ցոյց կու տաք: Ի՞նչ անդրդուելի
կը մնաս, տեգի չես տար ձեր կողակից-
ները լեռնով հեռանալու փալմերայի ա-
ռաջարկին:

«Պայ, ի՞ք աւտընդ ուրքէս, չի տե-

ւեր, կը մարի հուրը, մի մոռնար, որ
Փալմերան կը քուտ է, անշուշտ է, աչքը
զուբսը: Օրինաւոր դուռնէն ներս մտար,
անոր սիրակէզ աչքերը պատուհանէն
դուբս պիտի փնտռեն միւսը: Գիտեմ,
գիտես մանաւանդ, բոլորս գիտենք. ին-
չո՞ւ փորձել փորձուածը:

Եթէ կայ երիտասարդութիւն, խիղ,
տենդ, աւիւն, կայ նաեւ ծերութիւն —
անշարժացնող անդամներու կոյտ դառ-
նալու անդառնալի հեռանկարը: Եթէ օ-
րերը բան չըբերեն իսկ, անտարակոյս
բան մը կը տանին իրենց հետ: Բարեկամ,
նստիլ ողորհիւ անցնող, անվերադարձ
մեկնող տարիներու մասին ու երիտա-
սարդի խանդով խելակորոյս նստելի
նոր արկածախնդրութիւններու մէջ, կար-
ծես էթէլին չքաւուած հին մեղքերն
վրէժ լուծելու անյադ տենչին վառ-
ւած...»

Եո խորասուզուած էի այս մտքերուն
մէջ, մինչ դուն պերճախօս լուսթիւն
մը կը պահէիր: Այո, այդ լուսթեան մէջ
հարպիկօրէն, նախասիրած սիրոյ երգիչ-
ներդ խօսիլ տուիր: Սերտած եմ կէտը-
նկարել էս, երաժիշտ ու սիրահար: Ես
ստիպուած եմ փալմերային հետ զրոյց
պահել: Կառավարիչը ամբողջ երկնայթի
ընթացքին երկու անգամ խօսեցաւ, թե-
րեւս՝ երեք:

Երեւանի մէջ, կողֆի գնդակ մը,
ծովեզերեայ երկրէ մը երեսուն առ հա-
րիւր աւելի հեռուն զրկելու հնարաւո-
րութիւն կար, եթէ հոն կողֆի մարզա-
դաշտ մը կառուցէին...

Պահ մը թողուցինք էրեքունին իր
մարդադաշտերով — ձեր մօտ ընդուն-
ւած է մէկ նիւթի առջեւ երկար շյամե-
նալ — կառավարիչին երկրորդ խօսքը
սեւի եւ սպիտակի փոխյարաբերութիւն-
ները ընդգրկեց: Սպառիչ նիւթ, սպան-
նիչ ակնարկութիւններով ու երկար խոր-
հրդածութիւններով լեցուն:

Ինչ հող, թէ անցեալին ո՞վ՝ որո՞ն
բեռ էր: Յիսնամեակ մը՝ եւ դերերը չէր-
ջուած են: Սարուկը տէր դարձած է իր
ճակատադրին: Անցեալին, երբ ինքնա-

չարժները հազուադիպ էին, քաղաքին բարձունքէն, ուր գաղութարարներուն գաղութատիրական ոճով կառուցուած բնակարանները կը բարձրանային ծաղիկներու ու կանաչութեան ընդմէջէն: Երբ հեկառքի աղազուն դիմ մը առանձնաշնորհաներուն միջնաբերդը կը միացընէր քաղաքին մէջ բարձրացող պետական հաստատութիւններուն: Բնակարանէ կայարան տարածքը նորին վաճառքեան պաշտօնեաները ուսամբարձ լատակի վրայ բազմած կը տարուէին: Մինչև հոս ոչինչ կայ անբնական: Երգեկառքը իր ֆլուորով քաղաք չմտած, նոյն խափշիկները իրենց տէրերէն առաջ պէտք էին դիմին միւս ծայրը կազմ ու պատրաստ ըլլալ, անոնց ութունն քրիստները դրանք անհեղինակ փոխադրելու համար:

Կառավարիչին խօսքերէն սահմակած լուցիկը: Սրտին խորէն, ինքնագոհ, բարձրանց այդ պահը ու յետոյ մեզ իր խօսքերու կախարդանքէն ձերբազատելով զոչեց. «Հիմա ալ կը փորձեն իրենց մեր ուսերուն բառնալ: Բայց այդ օրը պիտի չտեսնեն»:

Ժիմ, դուն հանրութեան դիմաց, յատկապէս կառավարիչին ներկայութեան, չես բարբառիր, եռանդդ Փալմերային ականջին, հեռանային փողով, փափուկ խօսքեր փոփոխուլ կը պահես:

Փալմերա, անտէր աղջիկ, դուն քու էութեանդ մէջ համողուած ես, թէ տարփածուով մը չես զոհանար: Քիմիական բաղադրութիւն կոչուած հարց մը կայ, զոր հասարակ մակնայեցունքը երբեք պիտի չհասկնան: Եթէ դուն Արեւելքի մէջ ծնէիր, քու խառնուածքովդ քարկոծման պիտի արժանանայիր: Ես, Արեւելքի մէջ ծնած, արեւելքցի տղայ, քարկոծման իմաստը չեմ հասկցած, արդէն քարկոծողներէն հասկցուիլը առաջին մտահոգութիւնս չէ եղած: Բոզի տարազ կը կրեն անոնք, որոնք իրենց նմանները կը դժբախտացնեն — Փալմերա, դուն կիւն ես՝ հարիւր տոկոսով, բո՛ւ՛ք՝ երբեք: Ձէ՛ որ շուրջիններուդ կեանքի հոսք կը բաշխես...

Փալմերա, եթէ քու համբոյրներուդ հուրին ու բոյրին անտարբեր մնացի, դուքէ կարծեցիր, թէ կը մերժեմ քեզ ու ընդմիջեցար: Ո՛չ: Քեզի նման վառվառ կեով մը դէմ դնելը, անտարբերութիւն կեղծելը ամէն տղամարդու զործ չէ: Հասկցիր դիմ, մենք մեր ծնած ու սնած հողերուն վրայ, բարեկամութիւն բառած բառի մը գոյութեան կը հաւատանք դեռ: Այդ բառը, նոր օրերու զակաղիկներուն ծիծաղը կը շարժէ, դիտեմ: Սակայն, տակաւին, հոգիներու ստուար բազմութիւն մը կը շնչէ, կը ներշնչուի եւ ուղղութիւն կ'առնէ անկէ: Ձեր մօտ ալ գոյութիւնը կ'որոշուցնած այդ զգացումին սիրոյն զոհեցի տաք շրթներդ... Այդ մասին ձիմին բան չըսի: Դուն աստաւածային հուր ունիս մէջդ: Իմ տկար էութիւնս պիտի սնկանար անոր ցոլեւորէն. բայց, անտէր աղջիկ՝ հաւատա՛, այդ հուրը չկրցաւ մաշեցնել ու կործանել — ամուսնիդ ոչինչ — ձիմին հանդէպ ունեցած բարեկամութիւնս:

Բոլորէն աւելի լուս գիտեմ — հաւատարիմ չըլլալով ամուսինիդ, հաւատարիմ չես նաեւ ձիմին: Գիտե՛ս, ձիմը արուեստագէտ տղայ է, զգայուն արարած մը: Ինծի Արարատը նկարեց, քեզի՛ շունդ... Այո՛: Լաւ յիշեցի, տմուսինիդ երրորդ խօսքը շան մօտին էր: Հսկայ դամբալ, զոր ձիմը ծաղկեղբը կը տանի պտտցնելու, ամէն իրիկուն, ու անոր աշփերուն մէջ կը դիտէ ափրիկեան խենթեանայի մայրամուտը. այդ շունը երկու բնտանիք ապրեցնելու չափ սուղ կ'արժէ ձեր վրայ: Եուն մը՝ տասնըհինգ ափրիկեցի:

Ձեմ դիտեր, ինչպէ՞ս պահպանողական ու անցելապաշտ ձիմը ցանցիդ մէջ ինկաւ: Անոր կիւնը՝ էթէլ, անցեալին դեհուհի մը եղած է: Ամուսինէն քանի մը տարի մեծ ըլլալու պարագան ոչինչ պակասեցնած էր կնոջական իր հմայքներէն: Վերջին ընդհանուր պատերազմին, բնատանիքներու ծոցէն ներս խաղցուած սահմանեցող շարժանքներէն զերծ չմնաց քու նորակազմ բոյնդ: Ձորս տարիներ անվերջ, Լիպիոյ աւազներուն վը-

րոյ զոյապայքար մղեցիր: Գեղադէմ էթէլը, շորս ամուսնու հարսդ, տարիքոտ դրացիի մը սիրուհին դարձաւ: Դուն չղաւառեցիր իր սիրոյն: Հակառակ այն իրողութեան, որ պատերազմի վախճանին, Աւարիոյ մէջ, իբրեւ հրամանատարի տեղակալ, երեսուննոց փայլուն սպայ, շրջանի գեղուհիները կրնայիր գերել պահածոյ տուփերով...

Տուն դարձիւ միայն իմացար ախուր եղելութիւնը: Զաւաղանց քաղաքակիրթ ըլլալով, ձեր մօտ աղծուած բառը կորուսնցուցած է տարադր: Տուն դարձէ՞ր ետք անգամ յամենոց սեռային յարաբերութիւններուն սկանաւետի գիրքէն ելլելով, ազնուօրէն խնդրեցիր էթէլէն, որ ընտրութիւն մը ընէր քու եւ սիրականին միջեւ: Ան քեզի վերադարձաւ, մարդկօրէն ներեցիր:

Տարիներու երկար ու միապաղաղ կեանք: էթէլը չխաբեց քեզ, գէթ դուսն չնկատեցիր... Յիսուէնդ վերջ, Ափրիկէի արեւուն տակ, Փալմերային հանդիպելով պատանեկան տենդ ու ջերմութիւն զգացիր յանկարծ ներսդ: Գու քացատրութեամբդ, առաջին անգամ ըլլալով կնոջ մը քիմիական բաղադրութիւնը այսքան հարազատօրէն կը յարմարէր քու բաղադրութեանդ, որպէ՛ս առաջ կու գան մեն հրդեհներ: էթէլը ծերացած է, նոր արկածային դրութիւններ տենչայ անգամ... օտրի ֆոր հըր...

Հիմա հերթը քուկդ է, քամ ան, պոյ, զարկ որքան որ կրնաս: Պարզուած զորշ խորքին վրայ ոչինչ ունիմ աւելցնելիք: Դունք իբրեւ եռանկիւն, կեանքի բեմին վրայ քիչ մը եւս պիտի յամենաք ու հեռանաք անկէ ստուերի նման...

ՊՕՂՈՍ ԳՈՒԲԵՆԵԱՆ



ԱՆԱՊԱՐԷ՛, ԿԱՐՈՍ

ՀԱՅԿԱՅԻՆ ԳԼԽԱՎՈՐ ԳԼԽԱՎՈՐ

Ե՞րբ պիտի բա՛խտ ալ իջնես ճօճաթռռէդ, որ երկար
Օրօրեց գիւս, կ'օրօրէ՛ յոյսէն ցնարք ու դադրիմ
Սպասումիդ համրիչին կապելէ յոյս քառ քառ
Այ միմչեւ ե՞րբ չմեկնող ճամբարդ մնամ ու այրիմ:

Որքան չիջաւ, ես այնքան՝ չվազեցի ետեւէդ
Զվագելուս համար ալ... յոգնած ու ցարդ՝ կ'աղաչեմ,
Որ Երեւան դրկելիք բառերս ըլլան մեղրագետ,
Կարօտի լուռ ու լալկան ուռենիին դէմ առ դէմ:

Ու այն ատեն՝ մահամամ ու աչքս բաց չմեկնիմ.
Այս ի՛նչ սարսուռ, Աստուա՛ծ իմ — մարդոց ծարաւ ու ճօրի
Դիմաց սարքել կերութեամբ ու նայուածքով... Եթե՛րիմ՝
Պարպել շիշեր «Ախթամար» ու «Նայիրի» կոճեհակի:

Ո՞վ քեզ սիրեց, ա՛վ ատեց, հայրենասէրն ա՞վ էր, ես՝
Այդ բոլորէն դուրս ու վեր՝ մնացի լոկ անունիդ
Հրդեհին մէջ առանձին ու միշտ հպարտ, որ հանդէս
Զսարքեցի ուրացման, յանուն կարմիր տոմսակիդ:

Մի՛նչ Անանի կապոյտէն ու աշառատ աշունէդ
Դրօշակիդ ուզեցի բերել գոյներ ու այդպէ՛ս
Համբուրել քեզ ու մնալ՝ շատ... սիրողներ, որոնք «Խենթ
Հայրենասէր» կոչուեցան՝ «ոնե հաց» բերին լոկ հանդէս:

Անցեալն հիմա յիշատակ, դալար ծառիդ եկած թառ
Ազոաւի պէս, որ թռաւ արնակարմիր արձանին
Խորտակումէն ելած դադ, որպէսզի դուն բոցավառ
Կերտես... կապոյտ ապագայ, մոռցած Բերիա, Ստալին:

Ո՞ր ես կարօտ, տես ինչպէս մեր «Արարատ տրեստ»ի
Չգմոցներուն մէջ այգիմ՝ մառան-մառան կու տայ ձայն,
Թէ ինք պիտի Արարատ-Խօյարշաւին արիւնի,
Բաժակներս ալ համար, որոնք գինի չտեսան:

(«Լսէ՛ Երեւան» շարքէն)

ԱՇՈՏ ՆՈՒՐԵԱՆ

3. ԶՈՐԵՑԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՈՒՂԵՒՈՐԱՎԷՊ

«Խեճ» Հայք էին քիւզանդակամ եւ հայկական ճամբաներու վրայ

ԺԸ.

ՌՈՒԲԻՔՈՆԸ ԱՆՑԱՅ

Միջերկրական կամ Ak, Marmara, Kara, ծովը ծով է, ծովային ճամբորդութիւնն ալ, որեւէ ուղղութեամբ եւ որեւէ ջուրի վրայ կ'ուղէ ըլլայ՝ ճովային ճամբորդութիւն, զոր կատարելու... «կապոյտ հերոսութեան» փափաքը, պատանեկան օրերէն, դեռ վառ կը մնար մէջս:

Արդ, երբ... թափառական «թուրքը» վէշա թափառական «թուրքի» որդին» դարձեր էի այլեւս, հետեւաբար՝ ո՛չ միայն պատճառ չունէի նաւ բարձրանալով հին իզմա շոհապնելու, այլեւ... առկաւին ենթակայ կը մնայի երէկ զիշերուան դիմումութեանս առաւօտեան չողիացումներուն վերջին քմաբքին, քմայք՝ որ կը մղէր դիտ... պատմութեան հակադրելու թաքուն եւ զուարճօրէն հայրենասիրական սխրանքի մը արժանացնել կատարելիք «կապոյտ հերոսութեան»...

— Talasa! Talasa!...

Տառը հաղար նահանջողները մեր հայրենիքէն անցնելով հասան Սեւ ծով,

— ARMENIA ! ARMENIA !...

Եւ Սեւ ծովէն աննահանջ անցնելով շահիմ հայրենիք հասնելու յաղթանակը...

Սակայն, Արմէնիայէն ու Սեւ Թալասայէն առաջ, դիմացս կար անցք՝ թէականացնող «Թուրքերն» մը, պատմութեան եւ անձնատուութեան ճերմակ սաւանդօղով դիտ պատանքելու հաւանականութեամբ տոյճա՞ն ճակատագր-

բական ի՞մ մեութիքոնս, որ դեռ չէր, նեղուց էր, Վոսփո՛րը դարձեալ. առնոր պոլսական սկիզբին անձնաթուղթ պէտք էր ցոյց տայի ոստիկանութեան, իսկ Ծէնէրեան վերջին կէտերուն վրայ՝ ծովային իշխանութեան ներկայացուցիչներուն...

Ախո՛ռ, երկիրը տեսնելու հին երազիս, որոշումիս,
Ու վա՛յ ինձի,

Եւ մե՛ղք հայ բանաստեղծներու կողմէ սքանչելիօրէն դովաւած իր գեղեցկութեան, հի՛շ... Գուրբուն տակ գտնուող նոր գաղանիքը յայտնէ թուրք փախններուն, որոնցմէ մէկը, Ղալաթիոյ նաւամատայցը, ներքին դիտերու վրայ աշխատող «Gumhuriyet» շաբաթաթի կայմի մուտքին, ահա կեցած էր արդէն եւ անձնաթուղթ կը պահանջէր ճամբորդներէն:

Իսկ ես, ռանգուրին առջեւ պոչ բռնած, վաքանուաշի մուֆուս քէզ-էլըս ցոյց տալու միշտ պատրաստ, անհամբերութենէ կը տառապէի ուղղապի եւ Ռաբրէրէնը չկարենալ անցնելու յոռետեսութիւններ ունենալով, կը տարուէի... կանխիկ լսել արձագանդները Շնէ՛ հոշ օլուք մահբուսիւնէ հաւաքը թրքական բանտերգին...

Ձախողութեան պարագային իմ զնտանային հաւատս ո՛չ միայն հօշ, այլեւ պէ՛շ կընար ըլլալ...

Թող ըլլա՛ր. միայն թէ՛ ըլլալէ առաջ խնայուէր ինձի խանդ խանդաւորող, աշխուժութիւն քայքայող սա պոչ բռնելը, որ քիչ ետք օճիքը ձեռք տալու վատ հաւանականութեան ենթակայ եղողիս կը զլանար զիմացը կէցող աղջկան դրեթէ մերկ կոնակը գիտելու սիրտն իսկ...

Հողիս ուղածն էր, շտապով քարափ հասնելէ ետք, վազելով՝ ենթադրականօրէն պարապ սանդուխին հասնել, ու գուարթխառն քաջութեամբ՝

հօ՛փ-լա՛,

հօ՛փ-լա՛, զոյգի վրայ բարձրանալ նաւ, անձնաթուղթս որի անտարբերութեամբ ցոյց տալ այն դատան ոստիկանին, որ ճամբորդները ասեղի ծակէն կ'անցընէր:

Հեռուէն շատ կը նմանէր Քեմալին. թերեւ... Ի՛նքն իսկ էր. իրեն հանդէպ ունեցած «անբարտաւան» անվերապահութիւնս քիթէս-բերնէս բերելու համար, Թաքսիմի օրօնները լքելով, փօրի փոլիս դարձած՝ պիտի ձերբակալէր զիս...

— Աթա՛, հոս եմ, հո՛ս... ճամբորդները շատ մի նեղեր, պո՛լը շուտով իւրացուր, որ հասնիմ քեզի... ՎՄԱՀ ԿԱՄ ՀԱՅԱՍՏԱՆՆՆՆՆ...

Ձարմանալի, սակայն իրաւ գուզադիպութիւն. ուղեւորներուն շատութեան պատճառով՝ ոստիկանին քննողական ջանասիրութի՛ւնը յոգնեցաւ, թէ ոչ... Մուսթաֆան լսեց զիս...

Այ ճամբորդները սկսան... մախաթի ծակէն անցուիլ, յետոյ, ժամանակի քիչութեան շնորհիւ ու շոգնաւուն սոյլ-հրահանգին ենթարկուելով՝ մախաթն ալ, իր կարգին, տեղի տուաւ... խարխիլին, որ վեր պիտի քաշէր շուտով...

— Փայրէ՛ք, քայրէ՛ք, քեզիքէրէկըք աչքը կ'օտքէրէկէք կիրքն իշերը... — զոյեց «Քեմալ»...

Կարեւորը հ'ս էի իրեն համար. միւսները անձնաթուղթ բանալով թող անցնէին իր առջեւէն. ինք պիտի առնէր, պիտի գննէր միայն ի՛մս...

Անպարտաճիւղ սաստկացաւ, պոռկուութիւն մէջ հայհոյանքներ ընդգրծաւ

ւեցան զանազաններու կողմէ, ու եռք տուին նաւ բարձրացողներու քայլերին, կիրթին...

— Թէ՛զ, Թէ՛զ...

Մտքէս անցածներուն եւ իրերու զսասւորման միջեւ գոյացած համապատասխան զուգընթացութիւնը ապշեցուցած էր զիս բոլորովին. այս պատճառով՝ քանի մը վայրկեան մեկուսի անշարժանալի բաւեց, որ ճամբորդ շմայ բարափին վրայ ու սանդուխը զատարկութիւն հոգիս փափաքած հօփալաններուն դիմաց...

Այլ ինչ բանի՞ կը սպասէի...

Էվէ՛ք, Էվէ՛ք, չըբըյօրում, արդէն ուլաշաւում... պէմ՝ նազում...

— Իշքէ՛ քէզէրէմ...

Դեւ՝ Հրայրը, ներաշխարհէս, խօսքս հայերէն չարունակելով՝

— Հեռուէն Մուսթաֆային կը նմանիս, մօտէն հասարակ խուզարկումըն ես, խուզարկէ ու եթէ կրնաս գտի՛ր անձնաթուղթիս դրաւոր անկեղծութեան տակ թաքնուած անդիւր կեղծիքը եւ ձերբակալէ զիս, — պիտի բռնէր, — ես նազըմ չեմ, — պիտի հերքէր, սակայն Յէֆէրը առիթ չտուաւ. ոչինչ տեսնող ակնարկ մը անձնաթուղթիս նետելն ու «սալուշ» հրամայելը մէկ ակնթարթի մէջ խտացնելով, տէֆ ըրաւ զիս իր գլուխէն...

Անպիտանը...

Իրեն դէմ պիտի բողոքեմ Աթային...

Գոնէ հարեւանցիօրէն քննէ՛ր քէզէրէմ, անձն ճակատադրական վայրկեանի մը անշնչելիութեանը ենթարկելով՝ բազկերակներուս մօտերը շարազուշակ քերութեանքնէ՛ր զգալ տար ինծի...

Կամ բանա զրկէր զիս, կամ՝ իր քննութեամբ, անուղղակիօրէն՝ կեանքս, ուղեւորութիւնս վտահայեցելէ՛ր «թրքութեան» եւ քէզէրէմս...

«Gumhuriyet» շոգենաւը ընդհատ—ընդհատ սուլելով՝

— Պո՛շ վէ՛ր, պո՛շ վէ՛ր, պո՛շ վէ՛ր... — յայտնեց,

եւ՝

— Լեցունը Վոսփորի Ֆէնէրեան վերջաւորութեան կը ստանամ... — մտածեցի ու «կապոյտ հերոսութեան» հետ, սկսաւ անցքս «Ռուբիթոն»էն...

Ո՛չ ծովային ճամբորդութիւն ընելու ուրախութիւնը, ո՛չ Վոսփորին այնքա՛ն կապտազէր ժպիտը եւ ոչ ալ... քարափի գեղունակին հասկնալիօրէն ժպտուն նայուածքները կըրցան զրաւել զիս:

Հայու իմ «պատերազմ» մղելու համար՝ թշնամիին նաւով Ռուբիթօնը անցնող անօրինակ Յուլիոս մը դարձեր էի ես ինծի ու կայսերական լրջութեամբ կը խոկայի միայն յաղթանակիս մասին. նահանջ, ընկրկում՝ veto! ... պարտութեան պարագային՝ տանջանքը ոչի՛նչ... Վանն ու Անի չկարենալ տեսնելու վշտին ահազնութիւնը կրնար մահացնել զիս թրքական բանտի մը խոնաւ յատակին վրայ...

Այսպէս՝ լրջութեան, մտահոգութեան, քաջութեան եւ հայրենաբաղձութեան խառնուրդ հոգեվիճակ մը ապրելով՝ հասայ Վոսփորի վերջաւորութեան.

ANADOLU FENERI. շոգենաւը կեցաւ, ծովային նախարարութենէն բաղմաթիւ քննիչներ, զրեթէ յարձակում գործելու ձեւով բարձրացան «Gumhuriyet» ու տեսակ մը զօրաշարժի ենթարկեցին բոլոր ճամբորդները...

— Թէզէրէլէ՛ք, Թէզէրէլէ՛ք, փափաքալա՛ք...

— Պալատումուգ, պալատումուգ, (պալատումուգ թուրք դարձեր եմ, Հայաստան կ'երթամ. թրքական անձնաթուղթն թուրքի կողմէ քննուած ըլլալու անդի՛ր վաւերականութիւն մը ստանայ դոնէ... Վաւերականութեան ի խնդիր, ես Վոսփո՛րը «Թուրքիքոնցացուցեր եմ» իշխէ քէզէրէս...)

Այս անգամ առաջին ցոյց տուողներէն հոգայ:

Թրքական զոյգ մը խուղարկու աչքեր տնձնաթուղթիս էջերուն վրայ զննական շրջապատյա՞ծ մը ընկէ՛ հտք, շնչտակի հայեցան նկարին, ապա՝ հայուածքային զննիչ նետեր արձակեցին դէմքիս, զոր «էվէթ», Գլեմ Ղազըմ Նալպանտ, կ'ամ կը ձերբակալես դիս կամ կը... պայտեմ քեզի ըսելու առակ անհոգութեամբ մը Ծպտած էի տյո՛վ վայրկեանին:

Թէզէրէն վերադարձուեցաւ «Նալպանտ... ՆԱՆԻՆ»:

Ոչ մէկ կասկած - Թո՛ւրք էի, Թրքութիւնս Թրքութիւն էր, դայի իբրեւ վա՛նս զործածելով՝ պիտի կարենայի շարունակել ողիսականս:

Թա՛ղ ուրիշնէ՛ր պայտեն դիս չձերբակալողը:

Ես՝ չար աչքի դէմ, վատ նետի դէմ, մալը «վա՛նսին» ամրացուցած, արդէն իսկ ընթացող հաւուն թոյլատրելի վերերը ելլեմ, եւ կապտա անհուսնէն անդին գտնուող, հեռաւո՛ր հայրենիքը առա՛նց տեսնելու ողջունելով, յանձնուիմ Ահարոնեանական զեղումի:

— Թուրքիքոնը անցայ, Սեւ Թալասան ալ պիտի անցնիմ ու հասնի՛մ քեզի, «ԱՐՄԷՆԻԱ՛», ԱՐՄԷՆԻԱ՛... Ե՛վ իմ հոգու յաւիտեմական ապաստան, դու իմ պաշտօնի՛ հայրենիքս...

ՏՐԱՆԿ ՆԱԽ ՕՍԹԸՆ՝

ԺԹ.

Վտանդն ու Վոսփորը հտեւ ձգելէ հտք, գտայ ինքզինքս, վերադարձայ բնականոն վիճակիս եւ սկսայ ապրիլ բանաստեղծութիւնը ծովային ճամբորդութեան, նոյն առան հետաքրքրուիլ... Դաւանտեղծի հոգւոյն պէս մերկ թրքուհիով, զոր դիտելու սիրտն իսկ չէի ունեցած քարտիին վրայ, հիմա, աւելին, սիրելու հոգի՛ն ալ ունէի...

Հապա՞... Հին հռոմէական վահանակի զինուորի պէս, «Թուրքիքոնցէն» անցնելու յաղթանակը շահելէ հտք՝ բազմասական երկրպագութեամբ, «Թեմբեք» մը վայելելու աւանդական սովորութիւնն ալ պէտք էր յարդել...

Նաղը՛մ, ո՞ւր է մերկ կռնակով այդ կիւզէլը... «Թեմբեք»... այս անգամ եթէ ժպտի, պիտի շարժամարհեմ զինք, ընդհակառակն, պիտի կանխեմ իր ժպիտը... Գնա՛ պիւֆէ: Հո՞ն է արդեօք...

Հոն էր...

Ինքնարուի ժպտեցայ իրեն:

Իսկ ան՝ փոխվրէժային փոխադարձութեամբ, արհամարհեց զինք...

Հո՞գս... Գլիւֆէի բարձր եռտասնիններէն մէկուն վրայ հստած, կըսէ՝ Նակս իրեն դարձնելով ես ուխտի խմեմ, թող ի՛նք զիջի նուրը հպումով մօտենալ ինծի... Երկար ու բարակ չիպուի մը անցուած սիկարէթ վառել տալու, կամ, իմ հաւաքս, հետս չիմ-չիմ ընելու...

Ի վերջոյ զիջեցաւ, Հալելով մօտեցաւ, սիկարէթ չվառեց, սակայն սիրով ընդունեց բաժակ մը Եւրֆիին...

Յետոյ բաժակներ... զա՛րձեալ բաժակներ...

Գիշ խօսիլ, շատ խմել...

Գերմանուհի էր Վեբերգան։ քառասուն-յիսուն բառերով թրքերէն մը հազիւ գիտէր. ես աւելի՛ անտէկ էի գերմաներէնի մէջ. պատմութենէն սորվածս՝ քաղցրակաւ Գերմանիոյ Հռչակուտը վարչապետին ծրագրային պատգամին երեք բառերն էին միայն։

Ուստի՝

Երբ Թաւրնկերուհիս ո՛ւր, դէպի ո՛ր կողմ ճամբորդելու ուզեց իմանալ, Հոգ չէ թէ լազոնական պատասխանի մը տեւողութեամբ, անհունօրէն դերմանալէս եղած ըլլալու անօրինակ հրճուանք մը պայթեցաւ թերեթեալ Թեանայ մէջ, յետոյ՝ աջ ինքնաբերաբար պարզուեցաւ ուղեւորութեան ուղղութեամբ. ու ես պիղծարքեան հանդիսաւորութեամբ արտասանեցի երեք բառերը, երեքն ալ շնչտեղով։

— Տրա՛նկ Եւրֆի Օւսթըն...

Գրո՛հ դէպի Արեւելք...

Մենք խմելով գրոհեցինք, արանկեցինք դէպի Օսթըն, հասանք Աջ-շաքոնա, անկէ Ալարի, յետոյ էրէզլի։

Վեբերգան ու Նազըմը գիրար լաւ հասկցած էին։

— Ան, էրէզլիի Վիլհելմիս փառնաւոր էրէզլի, երբ այրորսորդութիւնը զինք մինչեւ այս կողմերը հասցնէր յաճախ. այս անգամուս որսը ե՛ս էի. կամաւոր որսը տակայն... Վիլհելմի կին, Նազըմը իր Էնզիմն էրէզլի մէջ մէկ գիշերուան անոր էրէզլի թող ըլլայ, յետոյ՝ միայն, իբրեւ Հըրայր, շաքոնի դէմ, շարերի դէմ, պատերազմի նա զնայ...

Երեկոյ էր արդէն, երբ իջանք էրէզլի. այլեւս զաւառական դարձած Եւրֆիով ուղղակի գացինք փամիլոն, ուր տեղի ունեցաւ յաղթանակի բազմապիսի խրախմտեց, որ տեւեց մինչեւ ուշ գիշեր...

Անկէ ետք, ուղեցի գիշ մը քնանալ՝ առտու կանուխ արթննալու եւ ճամբորդութիւնս շարունակելու համար։ Մական զէշ նախազգացում մը արդիւնց այս մէկը, ու անիմանալիօրէն սթափեցուց զիս. ստիպուած, անձիս հետ առանձին ըլլալու համար, տարածուեցայ մահճակալին ճովի թիկնաթոռին վրայ եւ սուտ քուն ձեւացնելով՝ սկսայ մտածել դալիք օրերու մասին...

Աղօտ լոյսով խուցին խաղաղութեանը մէջ, անհնազանդ աչքերս, մերթ ընդ մերթ, ինքնաբերաբար, կը բացուէին սական, մահճակալին վրայ տարածուած գերմանուհիին գերհեթանոս մերկութեամբը զիս կրկին թարմացնելու համար...

Աւելի քան ժամ մը ետք, երբ ինքնազուխ բացուեցան գարձեալ, այլեւս ես ալ... Ի՛մ գլխուս տէր ըլլալով, շոգեցի գանոնք, այլ կիսաբաց ձգեցի՝ էդ մերկութեան շարժիլ սկսող գեղեցկութեան սիրոյն...

Պահը բանաստեղծական էր, հեթանոսօրէն խորհրդագեղ ու վարուժանահաճոյ...

Սեւ ծովեան խուլ աւանի մը հեռաւոր մէկ փամիլոնին մէջ, խաղաղ խուցի մը գողարիկ առաստաղին տակ՝ քնանալ ձեւացնելու երանութեան լանձնուած թուրք մը, կամ՝ իբրեւ հագիւ հպող թարթիչներուն արանքէն

դիտելու կախարհանքին ենթակայ, արթո՛ւն հայ մը, դեղեցկութեան գերմա-
նական եւ շարժական «արձանի» մը գիմաց...

Սակայն, ափսո՛ս, քերթուածը երկար չտեսց...

«Արձանուհին» մօտեցաւ հանդերձակալին ու վերաբերուիս ներսի գլը-
որանէն թրջական հազարնոց թղթոսկիներու հաստիկէ արցակա գողնալով,
աւրեց... Իրեն չկարենալ հասնելու խորհուրդին վսեմ բացտականու-
թիւնը...

Այլեւս, ինծի կը մնար, ի նպաստ անձիս, դրականացնել գէպքին շա-
րունակութիւնը, իրրեւ մարդ չտառապիլ երբեք, այլ իրրեւ «թուրք» հասնիլ
իրեն, տապալել զինք ու տիրանալ դումարիս, առանց որուն լուրջ արդիւթ-
ներու կրնար թափիլ ուղեւորութիւնս:

Գո՛ղ «մերեքա»...

Գողօնը կուրծքին սեղմած՝ ահա մօտեցաւ սեղանին վրայի կնոջական
իր հերձակ պայուսակին, ու խոր լուութեան մէջ, խիստ հնչունականու-
թեամբ լսուեցան անոր պղնձեայ, կղզականքին զնդիկներուն յաջորդական
ձայները, — չըթ՝ բացաւ, դրամը տեղաւորեց, եւ՝ չաթ, գոցեց:

Ապա, աճապարանքով սկսաւ հագուել. լուսով պիտի ցնդէր ուրեմն...

Այս վատ իրականութիւնը գէշ երազի մը պէս ցնցեց նութիւնս. ըն-
դոստ արթնցայ, անկնդծ վարձանքով ու կնդծ վախով շուրջս դիտելէ ետք՝
ոչինչ կուտած ըլլալու ապուշութեամբ ժպտուն, նոր դաւաթներ լեցուցի...

— Պուլաւ, իշէլըմ անգըր...

Նախ վերապահ վարանում մը ունեցաւ, յետոյ, ի տես երկրորդ յայ-
տագիր մը սկսելու սոսկ արական հակամներուս, գտաւ իր համարձակու-
թիւնը, ու գուարթօրէն կոնծեց...

— Պիր սալտ տաւա, (գո՛ղ «մերեքա», է՛դ «մուրիքոն»), չի՛ն-չի՛ն...

Բաժակները բազմաթիւ անգամներ վարնուեցան իրարու, ու նո՛ր մի-
այն թափ առաւ գինովութիւնը տոկուն գերմանուհիին...

Ապա՝ Հրայրին եւ... Նազըմին կողմէ, հրաժեշտի բուռն տրամկներ՝
անոր երկու «գերմանիայներուն», արդէն գոչ ու գեղ աչքերը գոցուեցան, ու
խոր քունը զգեստեց զինք...

Արշալոյսը սկսած էր արդէն:

Մախազս վերցնելէ ետք՝ չըթ, բացի իր պայուսակը, գրպանեցի դրա-
մը, եւ չա՛թը կամ ճաթիլը իրեն ձգելով, իջայ վար, արցակը առանց հա-
նելու, քանի մը հազարնոց թրջական թղթոսկի դուրս քաշեցի:

— Պուլաւ պայամ, փաթըմ, — ու փողոց իջնելով կորսուեցայ վաղ
առաւօտեան ծովեզերեայ մշուշին մէջ...

Սեւ Թալաւայէն եկող ցո՛ւրտ խոնաւութիւնը թէեւ կը ստուցնէր տաք
խուչէն նոր ելած մարմինս, սակայն գողչն գողցած դրամէս առանձին ջեր-
մութիւն մը կը ստանար հոգիս...

Իւրաքանչիւրին դրան վրայ IZMIT — ADAPAZAR — ZONGULDAK
զրուած բեռնատար ինքնաշարժներ կ'անցնէին էրէզլիի գլխաւոր ճամբա-
յին. անոնցմէ մէկը կ'անցնէր առաջ, փափաքեցայ, որ աչքերս ալ ջերմու-
թեան իրենց բաժինը ստանային. հանեցի ծալուած արցակը գրպանէս, դրժի
պէս բացի զայն, ի՞նչ տեսնեմ...

Ի՛նչ տեսնեմ...

Պերկ-կզակ Աթաթիւրքի հազարնոցներուն վրայ՝ առօր տոյարնոցները
կարծես խախտած ծնօտով ձորճ Ուաշինկթընին:

Իմ դրամին հետ՝ իր դրամն ալ դողցեր էի։ Երկու գողութիւն միաժամանակ։ Մէկը՝ սեփական գումարին տիրանալու համար կատարած ըլլալու՝ կատարեալօրէն արդար, միւսը, տկամայ ըլլալուն՝ բռնութիւն անմեղ...

Յիսուսն սուլար...

Անտարակոյտ, Զարմայր ծայրագոյն վարդապետին օրհնութիւնը, փրկարարութենէն հաջ, բարեբարութիւն ալ ուզած էր ընել՝ «խենթ» հայու սուղեւորութեան առ ի քաջաբանք, կանաչ բարիք մը զրկելով իննի։

ԶԱՆՂԸՐԸ ԵՒ «ԶԱՐԴ, ԶԱՐԴ»...

Ի.

Անտարակոյտն մօտ հասայ Զոնկուլտաք, ուր հազիւ կէս ժամ մնալէ ետք, յողկաւորով ճամբայ ելայ գէպի Զանղըրը...

Շատ անքուն էի. վաղնքներուն միտքինակ թըքըրտոցը քաղցր օրօրի վերածուեցաւ ու չոր աթոռին վրայ հանդիստ-հանդիստ քնացուց զիս...

Երկուշաբթի միտքին, երբ արթնցայ ու հարցուցի, պատասխանեցին, թէ չողկաւորը ետեւ ձգած էր Քարապիւք աւանն ու իսմէթփաշա, Աթթարաճա, Քուրչունլու գիւղերը եւ արդէն կը մօտենար Զանղըրին. քառորդ ժամէն ուրեմն պիտի հասնէի հոն՝ ուր, այն սեւ օրերուն, ատեն մը քանտարկուած մնացին մեր մտաւորականները, յետոյ զրկուեցան թունէյ, Այաշ, գէպի մահ...

Ուղեբերս առանց կթռտելու արդեօք պիտի կարենայի՞ անցնել այն ճամբաներէն, ուրկէ արդար ցնդիս մեծերուն հետ, արդարութիւնն ալ կալանաւորուած քուլեցաւ հեռաւոր հորիզոններ...

Փշրեցին անոր, արդարութեան, նժարին շղթաները, սուրը արին ձեռքէն ու զայն եաթաղանի վերածելով՝ ցեղասպան դարձան, մարդկութեան սպնուազոյն ցնդեցին մէկը աշխարհի վրայէն ջնջել ուղեով...

Զանղըրը, Զանղըրը...

Այդ օրէն ի վեր, այդ օրէն ասդին հայ մը քալե՞ց մայթերէդ... Հայ մը թափառեցա՞ւ փողոցներուդ մէջ...

Ես պիտի քալեմ, պիտի թափառիմ քիչ ետք. մի՛ հանդուրժեր, կոր՝ ծանկ, փլատակներուդ տակ մահացո՞ւր զիս, Զանղըրը, քար քարի վրայ չմնա՛ս դուն...

Կայարանին գիմաց պզտիկ հրապարակ մը, որուն աջին սրճարանի մը ուշադրաւ Խփիշը՝ հետեւեալ մակագրութեամբ.

— «OSMANLI KAHFESI, OSMANLI KAHFESINDE».

Սակայն ո՞վ կը ձգէր, որ հասնէի սրճարան. հրապարակը այնքա՞ն լոճողուած էր ցնցոտիւոր լոճերով. փերեղակներ էին անոնք.

— Սումն'ն, սումն'ն...

— Բանաթ լոֆն'ն... (սակայն չորցած...).

— Քիպրիթ, սղարալար, «Ուլուտա՛ղ», «Սամսո՛ն», «Պահա՛ր»...

— Պալլուրուեւոզ, Կալէյ, Ալլա՛հ Էշֆընա... — աղմկելով, աղերսե-

յով տնոնք կը շրջապատէին դիւ, կրկին ու կրկին աղաչելով կը ստիպէին, որ բան մը զնէի, ցամաք հասցի դրամ մը շահէին, հակառակ պարագային, Թերեւս քարկոծէին դիւ... անտարբերութիւնս արդէն քարկացուցած էր անոնցմէ շատերը, ու ողորմելիութեան անողորմ արտայայտութիւն մը տուած ոմանց մոնղոլեան դիմագծին... Պիր ալըշվէրի'չ տէտիւք, եսեօ! ... պիր Էֆմէ'ք փարասը...

— «Հայրերուն մեղքը որդոց»...

Թուրքողիները հացը աշապէս մուրալով թող շահին. առանց դնում ընելու «էֆմէ'ք փարասը» տուի փոքր «վաքանտաշներու», եւ... քարկոծուած է փրկուած՝ հեռացայ հրապարակէն:

Հեռու չէր Օսմանլը սրճարանը. սակայն ես չափ ուշ հասայ հոն. հին մզկիթին մայթէն անցած միջոցիս, ի փառս Ալլաին, թուրք սափալային երեկոյեան կերկերուն կանշը մոռցնել տուաւ ինծի Թափիշին ցոյց տուած ուղղութիւնը եղբայրս մարտի ցամաքեցոյց տուրճ խմելու փախաք...

Փայլերս լքած՝ ինքնաբերաբար յանձնուեցայ հին քերթուածի մը, զոր յաճախ արտասաներ էի Ապրիլ 23ի սգաւոր քեմէրէն.

— «Ես լսեցի, մալլամ կասպաւ, քերեմալ գեներն...»

Ձախդ... քախդ... պառաք ջանդարբի հին մզկիթէն...

Ո՞վ էր հեղինակը այս ահաւոր խօսքերուն...

Ո՞վ կրնար զանոնք յիշելէ ետք եղբունի այս շարաւուք նախաճամբաներուն վրայ շմուրթիլ ու շտարուիլ արիւնտա անցեալ...

Հէյ վա՛խ...

Արեւմտեան մեծ քաղաքներու լոյսի մեծ ազդիւններէն վերադարձած վարուժանը, Սիամանթոն, Ռուբէն Սեւակը եւ միւս լուսամտները ջանդարբի, Թունէյի, Այաշի, այս ու այսպիսի մութ, խոնաւ, աղտոտ փողոցներէն եւ շրթալակա՛ւ պէտք է անցնէին, մահուան հասնելու համար...

Լոյսը ինչպէ՞ս պարտուեցաւ խաւարէն...

Լոյս Եւրոպան ինչո՞ւ հանդուրժեց այս բոլորին...

«MAHPUSHANE CADDESI»... ա՛յն ճամբան, ուր Ջարգարեան ըսած է Սիամանթոնին.

— Մեզ պիտի սպաննեն, Ատոմ. մահէն չեմ վախնար. միայն կը մտաւեզուիմ, քէ ի՞նչ պիտի քլլայ մեր անտէր ժողովարդին վիճակը... մտաւորական, գործիչ, եկեղեցական. քուրմ ալ ձերբակալուած են...

Ու Սիամանթոն պատասխանած է.

— Մի՛ մտաւեզուիր, Ռուբէն, ազդիւն մեծ ապագան, գալիքի յաղթանակը մահատակներով կ'երաշխաւորուի... գաղափարակաւորէն գոհուիլը անգերազանցելի պատիւ մըն է, որուն պիտի արժամանակեմք...

Վսե՛մ մարդէր, որոնք զէպի մահ տանող ճամբուն զանաւթիւնը, յանուն յետնորդներու կենդանութեան, իրրեւ ազնուութիւն զաւանցան եւ արի՛ ազնուութեամբ յաղթեցին մահուան:

Ձմռահոգուեցան իրենց անձնական զօրախառութիւններով, այլ միայն ի մտի ունեցան արեամբ երաշխաւորուիլը հայոց ապագային...

— Մեծերը մեծ մահեր կ'ունենան», ըսած է հին իմաստասէր մը: . . Երանի՛ մեծերը, աշխարհի բոլոր մեծերը մեծ, երկա՛ր կեանք ունենային...

Այդ պարագային՝

Անաւարտ մնալու դժբախտութեան շենթարկուած իրենց մեծ գործերուն շնորհիւ, գրականութիւնը, արուեստները, գիտութիւնն ու մշակոյթը որքա՛ն տւելի գեղեցիկ ծաղկած կ'ըլլային, կեանքը ուրե՛ք բարձրացած կ'ըլլար...

Չէ՛, մեծերուն դաշինքները մեծ թշնամիներն են ո՛չ միայն զո՛րէ ազգին, այլև համա՛յն մարդկութեան, որուն կողմէ... եւ ինքզինքս լիազօրեւորմ' պիտի ուզէի վամպիրանալ, ճանկերս սրել, եւ այս փաստէին վրայ հանդիպելէ առաջին իսկ ծեր թուրքին, մեծերու հաւանական դաշինքներէն գէթ մէկո՛ւն գանկը փշրել, կուրծքը ջախջախել, ուղեղը սիրտն ու թոքը ժանիքներովս պատառ-պատառ ընել եւ նետե՛լ՝ «Ջա՛րդ, ջա՛րդ» պոռագսդներու չէր լի լաճերուն շափ սոված շանդըրըցի շուներուն...

ՎԵՐՈՒՆ ԿԷՏ ԴՆԵԼՈՎ...

ԻԱ.

Թէեւ Չանդըրըի մէջ վամպիրանալը անկարելի եղաւ ինձի համար, սակայն՝ ի՛մ ներկայութեան՝ կիրով նոր ճերմկած պատի մը առջեւ, վամպիրային դէպք մը տեղի ունեցաւ:

Թուրքիոյ համար շատ սովորական, միշտ եւ ամէն տեղ պատահող այդ դրուագը անսովոր հեռեւութեան մը թաքուն ճշմարտութեամբը ա՛յնքան կլանեց միտքս ու հոգիս, որ ինքնիրենս դարձեալ հարցուցի.

— Ո՞վ էր հեղինակը քիչ առաջ արտասանած, բայց չուարտած քերթուածին...

Ո՞վ էր...

— «Ես լսեցի, մայլամ կատաղած, բերնով գնեմ».

Ջա՛րդ... Ժա՛րդ... պոռագս, եւ... եւ... Ջարդիկ մը կատարւեցաւ, երկու թուրքեր սպաննուեցան...

Պատճեմ:

Իրիկուն էր արդէն. բաւական թափառելէ ետք՝ հասած էի «Օսմանլը» սրճարան, ու «Սէրք-Հարամն» ծխելով, սուրճի գաւաթս շատոնց պարպած:

Ուսելու ախորժակիս ցամքածութիւնը երկրորդ գաւաթ մըն ալ աւելցարել տուաւ ինձի:

Մութ ու շարագուշակ փողոցներէն հեռու, հաճելի էր քարիւղի լիւսն լամբարին առատ լոյսը:

— Հաճութեամբ... Թող նստած մնամ, թրջական սրճարանի աղմկոտ կեանքը դիտեմ, երեւոյթները ուսումնասիրեմ, ներքնապէս խնդամ, վեհանմորէն խղճամ, մեղադրե՛մ, ցաւե՛մ, — ըսի ես ինձի ու մնացի, անշուշտ առանց գիտնալու, թէ քիչ ետք, փոխան ներքին խնդուքի, ցաւի՝ ստանալէ արտաքին «բացատրութիւններ» պիտի ունենայի դիմացս. «Գործնական» «բացատրութիւններ», որոնք խնդուք չընորհելէ զատ, մարդուս ցանայ պոփոնքի վերածելու պատճառ կը դաժնան...

Պ Ա Տ Ը

Պա՛տը՝

Զինական պատը,
Միշտ՝ լացի պատը,
Եւ նաք թանձրացած՝
Ամօթի՛ր պատը...

Պա՛տը՝

Բրտութեան պատը,
Գարշութեան պատը,
Մեր սրտին կանգնած՝
Թրճակա՛ն պատը...

Պա՛տը՝

Սէրերու պատը,
Կարօտի պատը,
Ա՛խ, սիրտս կիսող՝
Պառաւի՛ն պատը...

Պա՛տը՝

Խռիւրտու պատը,
Բառերում պատը,
Իմ հագիլս հետ՝
Այս անվերջ դատը...

Պա՛տը՝

Թիւերում պատը,
Մառախլապատը,
Վատերում վատը՝
Ուղեղի՛ն պատը...

ԽՈՍՐՈՎ ԼՍՈՅԵԱՆ

**ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ ՄԸ
ԱՅԼ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒ ՄԷՋ**

Դրադիկները
 Առատտուն՝ կանաչին մէջ եմ հանգչած .
 Կարծես , կարծես
 Միլիոն աստղեր՝ ջուրերու
 Լեզօքքիմ մէջ
 Կը գուշակեն խորհուրդներ :
 Զբաւոյն ծագիկ :
 Զրաւոյն բառ առաջելի :
 Կը նախընտրեմ չխօսիլ .
 Մահեցած՝
 Իմ՝ քափամնիկ շրքներով
 հանդարտութիւն կը սպիտմ :

Արեւը
Տապէն ճնազարկ,
Կը հանգչի ծալլ՝
Ծաղիկները քաղիչի բոյր մը կը հեւան:
Օդի առշարժացած ապալիկին մէջ
Շրթունքներ անձայն կը շարժին՝
Շուկէն կանգնած է:
Քեզի երկարած ձեռք
Զի հասնիր երբեք...
Դեղին աչքեր կը ծաղկին
Կարմիր տերեւներում մէջ՝
Համաճարակի նման:
Ուզեզւ ծաղիկ կը դառնայ
Կը ծաւալի միտերում մէջ՝
Զեւ կրնար սիրել
Զեւ կրնար հաշտուիլ պատկերներում հետ:
Հայեացքս՝ սառած
Աշխարհ մը կը դիտէ,
Ուր
Մ'ախրաճոյն անճրելի մը սակ
Սպիտակ ծաղիկներ
Կը տարածուին ամենուր:
Գոյներ հալած են, ձեւեր հալած:
Ծիծաղելի արքանեակ մը
Ծիծաղելի Պառտտա մը, ծիծաղելի պատերազմներ
Զանճաղազ, ծիծաղ մանուկ մը
Զուարճացնել կը փորձեն:
Ծաղիկները կը մարդունան
Կը սպաննեն զին՝
ԶԱՌԵՆ

ՅԱՐ ՈՒԹԻՒՆ ՊԷՐՊԷՐԵԱՆ

Ջ Բ Ո Յ Յ

Ա Ն Ծ Ա Ն Օ Թ

Ձ Ա Յ Ն Ե Բ Ո Ի

Մ Ի Ջ Ե Ի



I

Ձայնն է, ձայնն է կը զանգէ՝
 Ձանգ... զանգ...
 Ու կը զանգէ հեռաձայնի երակն անյանգ.
 — Ո՞վ ես դուն:
 — Ես՝ դո՛ւն եմ:
 — Սխալեցար:
 Եւ ասիիս մէջ ընկալուչը կը սառի:

II

Կը զանգէ ձայնը, կրկին կը զանգէ՝
 Ձանգ... զանգ... զանգ
 Կը զանգէ, կը զանգէ...
 — Ո՞վ ես դուն:
 — Ես՝ դո՛ւն եմ:
 — Սխալեցար, բարեկամ:
 — Մենք երկուք եմք, — կը պոռամ:
 — Սխալած եմ: Չեմ գիտեր, թէ ո՞վ ես դուն, —
 Կը քրքշայ ձայնը նայն:
 Լռութիւնը կը չորնայ:
 Ընկալուչին մէջ տառապաղ ճանճրոյթ-մտեմ է, որ անա
 կ'արձագանգէ, կ'արձագանգէ, կ'արձագանգէ. կարծես լաց է.
 — Ո՞վ եմք մենք... ո՞վ... մե՛նք... ո՞վ, ո՞վ...

III

Ձայնն է, ձայնն է, վայն է, հայն է կը զանգէ՝
 Ձանգ... զանգ... զանգ... զանգ...
 Կարծես ջիզերս կը զանգեն.
 — Ո՞վ ես դուն:
 — Ես՝ դո՛ւն եմ:
 — Սխալեցար, սխալեցար, սխալեցար.
 — Ես դուն մէկ չենք, երբե՛ք, երբե՛ք նայնը չենք մենք, —
 ու կը լռէ:

Մեր պատմութեան տամարէն գէրօ քիւր կը քաշեմ
 Եւ անիմաստ օղակներէն իմաստութեան շղթան կրկին կը կազմեմ:
 Զէրոները կը զանգեն: Հեռաձայնը օղակ-օղակ ձայն կը դառնայ.
 — Ես չեմ գիտեր, քէ ով ենք մենք, — իմ նոր ձայնս կը հնչէ,
 Հնչուն դրամի հնչաբանութեամբ, —
 Արդեօք երկուորեան կիւմարէնք ենք խեղ,
 Իսկ մէկ նկարին հակապատե՞նք ենք,
 Որոնց միջեւ ժամանակն է երկարած
 Իրիւր երան հեռաձայնի՝ Մարտի Միլիի բունով խոր:
 — Զեմ հասկնար ի՞նչ կ'ըսես: Կը գառաճեցե՞ս...
 — Բայց ընկալուչի երանին մէջ կարծր պիտի մնամ ես,
 Հեռաձայնին մէջ, ճերմաձայնի՛ն մէջ, որ ե՛ս եմ, դո՛ւն ես...
 Պիտի պայքարիմ: Որովհետեւ ես, ներառայնիս մէջ
 Բիւրեղ ձայն մը կը փնտռեմ,
 (՛), մահացած ընկալուչին անձկութեան ձայնը ծանօթ.
 Ձայնն անծանօթ կ'արտենմ...

IV

— Սխալեցար, խելագար, գոհ մըն ես դուն, սխալ մը լսի, մեծ սխալ մը.
 Հա հա հա, ա՛... հա հա հա հա, ա՛...
 Եւ գոյգ մը ձայներ կը մահաման ընկալուչին հետ:

V

Զայնն է, հա՛յն է, յիմար վէճն է, հարցականն է՝ կը գանգէ...
 Զանգ-վանկ... գանգ-յանգ... անուն եւ ցանկ... գանգ ու կոչմանկ...
 Կը գանգէ... հէ՛յ... ա՛խ... ճոր կոչմանկներ,
 Թա՛ց կոչմանկներ, փռչի գանգեր կը գանգեն, կը գանգեն, կը գանգեն...
 Զանգ-գանգ, մարմինն՝ պսակ, մարմինն՝ կոչմանկ, մարմինն՝ պզինն,
 արիւն մարմինն կը գանգէ
 Ոկանջիս մէջ, ա՛խ, սերունդներ կը խորտակուին, աւագ կ'ըլլան, փռչի,
 փռչի...
 Ի՛նչ խորտակումներ ականջներուն մէջ կ'ընծիւղին հաշմանդամ...

 * Ոչինչ չեզմէ կամ ինձմէ, ոչ մէկ աւագ անցեալի,
 Ոչ մէկ երանգ յիշատակ, ոչ մէկ պալատ փլատակ, ոչ մէկ, ոչ մէկ...
 Հաշմանդամ, քոֆաթս վայրկեան մ'իսկ չկայ...
 Եւ այս բոլորին, այս խորտակումին վրայ արտասուող միայն երկու ձայն...
 Զայներն այդ երկու, որ եռ եմ, դուն ես, դուն ես հեռաձայն, եւ ես՝
 ունկնդիր...
 Եւ եմ քրթաւորող ձայներն այստեար, եւ դուն ցարտ երակ հեռաձայնային,
 ընդհանրական հեռաձայն՝
 Համայն ցաւերու՝ մարդոց ու հոգւոյս, որ օլ քաջակայ, յոյսու, անհասցէ
 Զայներն այդ բոլոր, արեանս, ուղեղիս հասիկներուն պէս, հասիկներուն չափ
 Կարմիր, քափանցիկ, քառերն սպիտակ, թիւր քառերն անցիր կ'ընեն
 երկու բառ...
 — Ո՞վ եմք մեմք, ո՞վ... ո՞վ... ո՞վ, ...մեմք ...մեմք ...մեմք ...մեմք
 հո՞վ, քէ ծո՞վ...
 Երկու ձայներ կը խորտակուին, կը մահանան...
 Ընկալուին հետ, չեզի հետ եւ դեռ մոյնիսկ ինծի հետ:

ՄԱՐՄԻՆՍ ԽԱՆԳԱՐՈՒԱԾ ՀԵՌԱՑԱՅԵՆ Է ԱՅԴ...:

ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

ՈՐՊԷՍՁԻ ԿՐԿԻՆ

Երբ այսօր կայծակներէ, փոթորիկներէ ու յորդ ամպերներէ հոտ,
վերստին ծիածանը կը յամառի կապոյտին վրայ անյագօրէն
Ընդարձակուիլ, գունաւորուիլ,
Ճառագայթել, գեղեցկանալ,

Երբ ցաւատանջ քանտարկեալը
կը յանդգնի կենդանաբար թռիչք մը տալ իր ուղեղին
Ու կը կառչի հրաշագործ այն գիրերուն,
Ջարս կը կոչենք «Յ», «Ո», «Յ», «Ս»...

Ինչպէս, ինչպէս, բսէ՛, ինչպէ՛ս,
Երկրաշարժէն յետոյ այն մեծ,
Ջրհեղեղէն հոտ վերստին,
Ես չխրիմ ու չփնտռեմ,
Հին թուղթերու էջերուն մէջ,
Դարակներու ծարֆերուն մէջ,
Կամ՝ հոգիիս հայելիին,
Նամակներէդ տող մը միայն,
Պատկերներէդ շաղ մը միայն,
Պատրանքներէդ դող մը միայն,
Որպէսզի խօսիմ ու արձագանգեմ քու իսկ քառերով,
Յրտանալ չըլլամ, ու վառիմ նարէ՛ն քու աչքերէդ հար,
Որպէսզի կրկին,
Դատարկութիւնն այս լեցուի դողերով, յորդիմ վերստին...

ԷԼՕ ՍԱՐԱՃԵԱՆ

★ ★ ★

Արագ ցնցում մը
 Լոյսը
 Օդակ առ օդակ
 Կը փշրուի գանկիս մէջ
 Յարստ է
 Երազներու խիտ լռութիւն
 Եւ խորակների գիմովութիւն
 Ժամանակը
 Կը մտի

Վայրկեանները կը փշափաղուին
 Մենք յագնած ենք
 Լուսամուտներու անշարժութենէն
 Երկունքի մէջ
 Հագնվարքի մը կարօտը մեզ կը կրծէ
 Ապահովութիւն
 Ամէն ինչ շուտ կը փոխուի
 Բայց դեռ միօրինակութիւն
 Մատերով
 Կուգեմք մեզ ճանչնալ
 Մոխիրի եւ կրակի միջեւ
 Հնադարեան հաշտութիւն մը եւ կուգեմք
 Բազմի

Ով ես դու
 Մանուկ մը
 Մօր գրկին մէջ
 Ուխտեց՝
 Սարսուռ

Գրգիռ
 Ու քախիծ ծով քախիծ
 Դալուկ անբջանք մը
 Ով ես դու
 Մեր միջեւ
 Աչքերու լուսնի մը հազարամեկ
 Երազներու շոյանքներու համբարներու
 Եւ քաջութիւն անբայտ մը
 Կը քաջութիւն
 Գալի
 Կուգեմք քալի
 Կուգեմք մեզ գգալ
 Լոյսի օդակներ
 Ոտներու կը կրծտին
 Զիպերս ինչու կը ճնշեն
 Աչքերս խնդրած եմ լոյսերով
 Բազմապատկութեան
 Հեռաւորութիւններ
 Ու խորութիւն
 Դեռ անհաղատ
 Դեռ չծնած
 Անծանօթի որոնում
 Գանկակրիս մէջ
 Ես կը հիւծիմ
 Այնքան փշրանք կայ լոյսի
 Բայց ոչ մտք է

ՆԱԶԱՐԵԹ ՊԵՐՊԵՐԵԱՆ



Իմացական Հարժու՛՛

Մ Ն Ա Ց Ե Ա Լ Ը...

Հայաստանի երես֊տարդական բանաստեղծութեան մասին Վնականցի գրականու-
րինքն ամսագրին եւ Վերական շքերքին մէջ բացուած բանավէճը տրդէն ուժէնուն ծանօթ
պատմութիւն է: Մեր նախորդ թիւով ներկայացուցած էինք Հեղինակներուն աշակցութեամբ
եւ զինաբար ընթերցողներին ներկայացնելու մտադրութեամբ ընտրուած այն կտորները,
թիւով շուրջ քսան հասո, որոնք Նիւթ Հայթայթեցին աւելի քան տասնըհինգ ամիս տեւող
զրական վերոյիշեալ թուարկին: Բանաստեղծութիւններուն կողքին՝ մէկական էջ արտագրած
էինք նաեւ բանավէճին մասնակցած երես֊տարդ չորս բանաստեղծներու հիմնադրած տեսու-
թիւններէն, առանձնէ՝ Նայն Երեւանցի քննարկող Գորոշը Սեւակի յոգուածին ամբողջութիւնը:
Վնացիներն ներկայ Համարին մէջ ընթերցողը կը գտնէ այդ մասին խոսող խոստացուած
միւս գրութիւնները, Հատուածներ՝ բանավէճին մասնակցած միւս 21 զէմբերուն հետեւեւ-
պումներէն:

Առաջին թնձը՝ երես֊տարդ բանաստեղծներէն Արմէն Մարտիրոսեանի, Յովհաննէս
Դրիգորեանի, Եսայի Սահակեանի եւ Հենրիկ Լեյտիանի պէս վիճարանութեան մասնակցեցած
ճառարուն զբոսթիւններով, իսկ միւսները իրենց կարծիքները բանաստեղծին Վնակիտական
գրականութիւնն ամսագրի խմբագրութեան հրաւիրած յատուկ խորհրդակցութեան ընթացքին:
Վնացիներն նախորդ թիւին մէջ մեր արտագրածներէն ետք, Հետագայ էջերուն վրայ ինք
զրոյցներէն մեր անընտան ինքը էջերը եւ անոնց վրայ գումարուած միւս զրոյցներուն առան-
մին կարծիքները, կը կարծենք, թէ բաւարար չափով պատասխար մը կու տան Հայաստանի
դրականութեան մէջ թուական կազմող այս նոր հոուզեմբի մասին:

Բացառելով քննադատներէն մէկ երկուքը, միւսները եւ միւսներուն հետ միւս բոլորը՝
բանաստեղծներն ու զրոյցները, որոշ Համակրանքով մը մօտենալով Հանդերձ երես֊տարդնե-
րուն, ընդհանուր գործ մը ընթացքներած են անոնց զէմ, հիմնուելով առարկութիւններու
ա՛յն դու մարին վրայ, ըստ որում՝ զրական մար սերունդը այսօր միայն անուններ չարք է...
անուններ չարք, որից բանաստեղծ աւ անհետական բանաստեղծական մտածողութիւն ա-
նանմանից պարտաւ գրագումմ է, թէ՛ նորերը աւելի տուրք կու տան զննապատկան
նանմանից, զգրկայնութեան, զմտածման մեծամտութեան ու զպատկերապաշտութեան
անյուսայի խորխափումներին:

Ընդհանրապէս այս դիտողութիւնները հ'ըլլան նորերուն ու նաեւ ա՛յն՝ որ շրջա-
նարդական ամենաանպատկան բերացուցն անյիշի պակամ է: Միշտ էլ անյիշի չունե-
նելու զէպքում տաւար է գալիս այն դժուարամարս, առարկայազուրկ խօսքը. որի մէջ շատ է

մութը, ինչ՝ լուրը: ... Առնիքի պակասի հիմնական պատճառն այն է, որ երկաթաուղու շնան նկողմ մեծամասնությամբ սնունդ է ստանում գրական ազդիւրներից և ոչ թէ կենսո՞րէք: Վաղէ Մաթթարեանի կողմէ հրատարակած այս ախտահանումը համարեա՞նք հոյակապեմք կըրկենք: Պարսիք Սեւակի հիւսիսէն: Եւ պատասխան իմ այս անգով հարցի՝ կարող է սոցալայն իմաստ(ս)իքարանէ՞ր կամ այն իմաստ(ս)եւութիւնը: Եւ մեզ հիմա չեն հասկանում, յետոյ կը հասկանան:

Եւտի՞ն հիմա կամ յետոյ հասկանալու համար պիտի լինի, որ հասկանան կամ չհասկանան:

Իրեն. Թերութիւն մտանշանայ միւս հիմնական խնդիրը հայկականութեան պարզան է:

Համարանկում եմ յայտարարել. — Գ'ւ-է Պարսիք Սեւակ, — որ մեր երկաթաուղու ներքէ շատ ու շատ քրտնասեղծութիւնները կարելի է կարգաւ վերջից գէղի սկիզբ... Նոյն անակ կարելի է մէկ երկաթաուղու գրեւորիկէ կէտից աւելիմ էքստրաիտիւնով դնել մէկ այլ երկաթաուղու գրեւորիկէ մէջ. և գրեւորից որեւէ այլաճայնութիւն, որեւէ գիտնական չի տեսցուի:

Վաղէ Մաթթարեան:

Եւհե՞ն թիւ կարգով և ինչ-ինչ առանձնայնութիւններ սանձաւով հանդերձ, չի տես քրտնէ դառնում եմ նայնալով. նայնալով:

Սերգէյ Աթաբեկեան:

Եւստրալայ մեր երկաթաուղական պնդիւնայնութիւնը քաջապիկ կրճով մուկնում է համարած գրեւորիկն ու իրարման շարունգը: Նման եմ իրար այնպէս, որ անմեղքի տեսլակութիւնից համարեա՞նք այնչէ չի տեսնի:

Բայց դիտարկեալ այս շնորհաւորութիւններուն առջեւ ձեռնածուլ հասած ու եղած բոլոր գիտագիտութիւնները խելագար-խելագար մտաւոր անհասկանալիութիւնները չեն այս անգամ երկաթաուղները. ըսինք որդին անգամ մը, որ անտեղ գիտակից են իրենց ընթացքին և արագորէն գիտարկել ըլլալու շատ արագորէն չեն թուիր: Իրենցմէ մէկը, ամէնուհէ կողմէ ու մէկէն աւելի հաշիւում անունը, Յովհաննէս Պրիգորեան, անդադրականով, որիմակ, երկաթաուղներուն եղած վերջին գիտագիտութեան, ժողովականութեան, շուշանցներ իր հակադէսութիւնը, նախ անգիտութեամբ ընդգծելով, թէ՛

Գիտնագրականից խոստովանում միտումը ինչ-որ տեղ այս սերնդի ներկայացուցիչներին նմանցում է իրար: Անբացի մէջ գիտականով որպէս բնական ու գրական երևոյթ, այդ ընդհանրութիւնը երբեք չպիտի է ստիպի շփոթելու նրանցից մէկին միւսի հետ: Դա անդի կ'աննայ միայն միտումնաւոր մտանքման գիտելում, երբ կարցնեմ նայնիսկ Զարեհիկ Մայակովսկուց, Մայակովսկուի՝ Ռիսովմից տարբերելու ունակութիւնը:

Յայնապէս, կը գտնուինք վերին ստախան շահեկան բախումի մը առջեւ: Հասկնալի նախադրեալներէ բխած բուն կարծիք մը գրեւորումն է երկաթաուղներուն առաջ մղած այս շարժումը, որ, ինչպէս պիտի տեսնէք զիջ անգին, ա՛յ միայն բանադանդութեան միտումնայնութիւնը Զարեհիկից, այլև բանադանդութեան հետ ստիպից, որ Զարեհիկ, խորանայ, և միանգամայն նորագոյն նաեւ ինքը՝ շնորհաւորութիւնը Մեր յաջորդ թիւով մէկական բանադանդութիւն պիտի տանք նաեւ միանգորէն, Արտեմ Պարութիւնեանին, Մամուկ Կոստանին, Սլովենի Տիլոյեանին, Անտիա Պարտեանին և ուրիշներէ:

Ետքումին մասին մտաւոր զազաժար մը տալու մտքով մէկտեղում կարծիքներէն առաջ՝ ներկայացուցչական գէժքերէն ստորագրական ահաւորիկ շարք մը բանադանդութիւններ ևս, այս անգամ մ'ը ընտրութեամբ:

Ամէն պարագայի, ուրիշային տեսից խոսնաւորային խմորին առկայութիւնն է ու մտնելը, մտնելը ինչ ու ժամանակը չէ, մտնելը, այնինքն՝ բերեղացումը ժամանակի հարց է, որ կընայ յանկարծորէն հասնիլ կամ ուշանալ գիշ մը, բայց չի կընար չլալ...

ՔԵՉ ՀԵՏ ԵՒ ՔԵՉ ՀԱՄԱՐ

Ես այս երգը երգում եմ կանգնած,
որովհետեւ դու նա ես,
ուս խաղաղության հայմար կոհում եմ առանց կասկածելու,
որովհետեւ դու նա ես,
ուս համար կռուի եմ ելնում առանց հրամանի,
որովհետեւ դու նա ես,
իննց նա, որին ասում են միակ,
որին կարոտում են հեռուից,
որի համար արտասում են օտար սրճարաններում եւ նաերի վրայ:

Ես այս երգը երգում եմ սկզբից,
որովհետեւ դու նա ես,
որին կորցնելուց յետոյ էլ ոչինչ չենք ունենայ կորցնելու,
որովհետեւ առանց քեզ անձրեւը ջուր է սովորական,
յետները քարերի կուտակում,
սէրը ջրեղութիւն աւելորդ
եւ որդի ծնելը յանցագործութիւն:

Դժուար է խօսքով ասել այն, ինչ-որ
սրտում է պահուած,
առաւել ես դժուար է լեզու...
Լուսամուտներից թափուող լոյսերի յորդացումի հետ,
իմ մտքի հոսքը պարկուտ է ու դառնում յստակ,
ես որոնում եմ կապը, որն իր հետ
ճշմարտութեան լոյս կը տայ խօսքերիս
ու շաղախելով ես այս ամէնը,
հարապատութեան տաք լզգացումին
վերադարձնում եմ ահա նորից քեզ:

Ներիր, որ քո գովքը ես չեմ գունապարզում
Նոյի տապանի որոնման տենդագին ջանքով
կամ վարդանների եւ վասակների
քաջագործութեան մանրամասներով,
որովհետեւ երգը, որ պիտի ուղղուի քեզ,
պիտի նոր լինի քո նման,
որովհետեւ դու նոր ես ամէն օր
եւ պիտի լինես այդպէս շարունակ:

Ես այս երգը երգում եմ գլխաբաց,
որովհետեւ դու նա ես,
ուս ձեռքը պէտք է ինչնի մեր զիւին օրհնութեան նման,
երբ որ մենք ճանապարհ ենք ընկնում,

երբ որ մենք սկսում ենք օրը,
երբ որ մենք ծնունդ ենք տալիս տողին ու մտքին:

Իսկ ես ահա չեմ դնում վերջակէտ,
որովհետեւ այս երգը չպէտք է վերջանայ,
որովհետեւ ես ու իմ երգը
միշտ քեզ հետ ենք
եւ միշտ քեզ համար

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳՐԻԳՈՐԵԱՆ

ԵՒ ԻՄ ԱՐԻՆԸ, ԵՒ ԻՄ ՏՄԲ ՈՒ ՓԱՓՈՒԿ ԱՐԻՆԸ...

Եւ իմ արինը, եւ իմ տափ ու փափուկ արինը, որ չի դաւաճանել ինձ ու քեզ,
երկիր իմ, երբեք,
եւ իմ արինը. իմ երակների տափ ու փափուկ արինը, որ նոր ու իմաստուն՝
արեան երգեր է այսօր ուզում ցնծալ,
հեղափոխ ու խռնարհ խռնարհ մասին է ուզում խօսել միայն, երկիր իմ,
Քեզ է ուզում միայն պատմել, թէ ինչպէս ամէն օր ու ամէն ժամ խլեցին
ինձանից քեզ մօտենալու ու հասնելու իրաւունքը՝
Մոռանալով, չլիշելով, ու չուզեմք անգամ յիշել հեռու-հեռաւոր, ու
չգրաւած ու ճշմարիտ օրէնքների մասին,
Որ քաղածս յիշատակների տիրութիւն են խօսում, որ արինն են խօսում,
ու ծնունդ —
Եւ իմ արինը, իմ տափ երակների փափուկ արինը քեզ, միայն քեզ է ուզում
պատմել, երկիր իմ, հիմա:
Եւ ես, որ ցեղիս ապրած երկար ճամբաներն ու այրուած օրերը, նրա սգին
եւ ձուլիլ արեանս մէջ,
Եւ ես, որ ցեղիս՝ փշեպրտակ միայն հաւաքած լուսաւոր ու հանճարեղ
մեռելների տփուքինն ու լոյս գիշերներն ու քամի օրերիս օդում,
Եւ ես, որ ցեղիս եեզ ու ուղմիկ քանաստեղծներից իրենց ապրած կեանքերի
նման մերկ ու անկրկնելի բառեր եւ վերցրել ինձ գորավիզ հիմա —
Քեզ եւ կոչում, երկիր իմ, իմ վերջորածով՝
Քեզ — մեծ ու մեծահագի — որ ինքն, ինքն շնորհես իմ իրաւունքը. եւ այն,
որ խլեցին ինձանից ամէն ժամ ու ամէն օր,
Քե՛զ, բարի ու բարեծին, քեզ եւ կոչում ահա, ընդունիր, ընդունիր ու
պոետիդ արժանի արա...
Եւ իմ արինը, եւ իմ երակների տափ ու փափուկ արինը, որ չի դաւաճանել
ինձ, ու քեզ, երկիր իմ, երբեք,
Քեզ պիտի հռչակի այլևս դատաւոր վերին, ու հաւատ միակ, ու իր
ընթացքի մէջ պիտի քն ոգին պահի կարմիր ու անխորտակ
Քն մէջ պիտի այսուհետ փնտռի ծնունդիս յայտնի ու մահուանքս անշայտ
տարեքուտար բաժանող զծիկի իմաստը,
Քն մէջ, երկիր իմ, մութ ու խորհրդաւոր տառապանք իմ, քն մէջ, երկիր իմ
— արեանքս արինն,
Ու պիտի հոսի մի օր, դժբախտ ու երջանիկ մի օր, քն համար ու յանուն քեզ,
հին ու նոր հոգերիդ վրայ,
Որպէս անազատ ու ծոյլ ապրած կեանքիս միակ ու վերջին արգաթացում.
ու որպէս սկիզբ հազարամեայ երազանքիդ, ու որպէս տեսլու
հաստատում ու կոչ —
Իմ արինը, իմ տափ երակների փափուկ արինը, որ չի դաւաճանել ինձ,
ու քեզ, երկիր իմ, երբեք...

ԴԱԻԻԹ ՅՈՎՀԱՆՆԷՍ

digitised by

A.R.A.R.®

★ ★ ★

Թիթեռը գիտէր,
որ իր կեանքը ընդամէնը մի օր է.
դրա համար էլ երկար տառապեց,
որ լցնի օրը:
Նա իր երազներից գոյն-գոյն աշխարհներ
շաղ տուեց գոյն-գոյն ծծաղիկների վրայ,
որպէսզի ամէն ծաղկի քերթերին հանգատանալիս՝
կարծի, թէ դրանք տարբեր աշխարհներ են,
Թիթեռը գիտէր,
որ երկար է օրը,
անսահման երկար
եւ օրուայ բոլոր վայրկեանները լցնելու համար
տառապեց երկար...
յետոյ՝ մայրամուտին,
երբ արդէն երկրագնդի չափ ճանապարհ էր անցել
աշխարհների միջով,
եւ երբ պոկուել էին ղեղին սերունդները,
որ իր քեւերն էին,
Թիթեռը լուռ դիտեց անցած ճանապարհը:
Եւ երբ գլխի ընկաւ,
որ բոլոր վայրկեանները լիք են տառապանքով,
նա հեզմանքով նայեց
ուրիշների անթիւ օրերի մէջ
կիսատ պատերի պէս կիսատ կեանքերին
ու շունչ փաշեց հանգիստ
ու փայլ առաւ դէպի... մայրամուտի լոյսը...
ԱՐՄԷՆ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

Նա, որ խօսում էր արեւի մասին,
նա հեռացաւ,
նա, որ պատմում էր, թէ ինչպէս է մարդը
քարճրանում պտտուող երկրի վրայ,
նա հեռացաւ,
նա, որ ասում էր, թէ բոլոր գէմների
եւ փարերի վրայ
յարուքեան ձեռք է դրում
նա հեռացաւ:
Իմ հայեացքը, որ կտրուել էր ինձանից,
իմ երէկը, որ ես պահել եմ իմ գեմ,
երկիրը, որ քո մարմինն է
սուգումս իրերի լաուքեան մէջ:
Ես ունեմ մի փողոց եւ մի օր:
ՀԵՆՐԻԿ ԷՂՈՅԵԱՆ

ԹՄԿԱՅ ՁՈՐՈՒՄ

Արեւն այստեղ
 Ուշ է հայտում,
 Հայ քաջեր կան արթուն քնած:
 Առուներն են վնգում
 Թեթեւ,
 Ճերմակաթեւ,
 Հայ քաջեր կան այստեղ քնած:
 Մի կիսաւեր վանք է հանգչում
 ՀայաՎայրի,
 Հրաւէր են կարդում այստեղ
 Հաւքերն այրի:
 Պսակում են ծաղիկները՝
 Առանց գոյնի,
 Հայ քաջեր կան այստեղ քնած:
 Շիրիմներից ծուխ է ելնում
 Ամպ է դառնում
 Բերդի վրայ,
 Եւ ուր-որ է
 Պիտի պայթեն
 Ժայռերն հիմա:

ԹԱԹՈՒՆ ԲՈՒՆՈՐՁԵԱՆ

ԿԱՐԱՊՆԵՐԸ

Լիճը մաքուր ու անհուն է երկնքի նման:
 Կարապները տեսիլներ են կապոյտի վրայ:
 Կարապները կարօտ ունեն, կարօտի թեւեր:
 Կարապները կարօտելիս վարող են թեւել:
 Կարապները երբ սիրում են, չեն դառում երբեք:
 Կարապները երբ սիրում են, չեն կարող երգել:
 Սակայն հին է ու անսասան օրէնքը կեանքի՝
 Կարապները պիտի երգեն երգը կարապի...

ԵՌԻՐԻ ՍԱՀԱԿԵԱՆ

* * *

Ես սիրում եմ քեզ
 եւ խելակորոյս
 սիրով եմ սիրում:
 Եւ եթէ դու էլ
 այդպէս ծայրէծայր
 լցուած ես ինձնով,
 իմ էութիւնով,
 իմ գոյութիւնով
 անսկիզբ, անծայր,
 անվերջին ճգտող
 գուրգուրանքներիս
 տուայտանքներով, —
 Ապա դարձրու ինձ քա աստուածուհին:
 Եւ երկրպագիր իմ սիրոյ առաջ
 ինչպէս քրմերը հոգին ծնրագիր,
 երկրպագել են լոյսն արեգական:

Աստուածացրու, որ
 լիանամ քեզնով,
 հիւանամ քեզնով,
 վերանամ քեզնով:
 Որ խելակորոյս
 դառնամ փոքորիկ,
 մակընթացութեան
 իններորդ ալիք,
 Որ ամսյրոջի պէս
 ճայքեմ
 չսպառուող գրկախառնութեամբ,
 Ու ծլարճակեմ, —
 Բոքք արեւի տակ հողի տափութեամբ,
 Նսեւ անյագուրդ ծարաւով հողի...
 Զի տիեզերքում ծլարճակումն իմ
 կ'իմաստաւորուի մի նոր գոյութեամբ,
 Որից կատարեալ ոչինչ չի եղել,
 Եւ չի լինելու այս մտաբանում:
 ԶՈՒԼԻՆՏ ԳՐԻԳՈՐԵԱՆ

Արեւիկա ԿՈՍՏԱՆԵԱՆ

ԻՆՔՆԱԴՐՈՒՄԱՆ ՏԱՌԱՊԱՆՔԸ

Նրանց միջին տարիքը մօտենում է երեսունին, մի հասուն տարիք, երբ Դուրեանը, Մեծարենցը, Վարուժանը արդէն աւարտել էին իրենց գործը, ու ցաւօք՝ նաեւ կեանքը: Իսկ սա նշանակում է, թէ չի կարելի իմաստուն կուշի գրական նախորդ սերնդին, որ յամառօրէն իր վերաբերմունքն է ճշդում նորերի հանդէպ, տարակուսելով նոյնիսկ նորերի զգալու անհրաժեշտութեան մասին: Սա նշանակում է նաեւ, որ ինքնահաստատման կիրքն ու հոսանքն է նուազ նորերի մէջ, որ չի կարողանում ճեղքել նախորդների, այս ղէպքում հենքի կազմակերպ դիմադրութեան շղթան:

Ինչոր շափով քնական է նաեւ այս վիճակը, քանի որ գրական առաջընթացի շարուած օրէնքն է սա, որից բացառութիւն չի կաղժում եւ ոչ մի գրական սերունդ:

Նորերին կշտամբում են անհասկանալիութեան մէջ: Եթէ անկեղծ են այսպէս ասողները եւ եթէ ճիշդ է այս վերագրումը, ապա երեւոյթը ցաւալի է: Եթէ դա մոլորութիւն է, որի միակ ակունքը անգիտութիւնն է, ապա երեւոյթը առաւել ցաւալի է: Ու երկու ղէպքում էլ աչքի է զարնում անհանդուրժողականութիւնը, որովհետեւ ճանհասկանալի է արտայայտութիւնը, զոնէ այսօր ու մեղանում դատաւճո՞ր զօրութիւն ունի եւ քացառում է անբո՞ր հրապարակումը: Իսկ ու իր հերթին, հասկանալի է, կաշկանդում է ստեղծագործութեան ազատութիւնը:

Բայց եթէ փորձենք լաւատեսօրէն ու տարրական բարեացակամութեամբ նայել երեւոյթին, ապա՝ կը համաձայնենք, որ գրական նոր սերունդը իրատունք ունի կրելու գրական այլ նախադրութիւններ, գրական այլ մշակոյթ, վերջապէս արտայայտելու գրական այլ մտածողութիւն: Եւ փոթորութիւնը, առաջանում է յստակութեան պակասից. սովորաբար շփոթում են գրական սերունդների ու անհատականութիւնների մտածելակերպերը: Ճշմարիտ է, որ գրական նոր սերունդը այսօր միայն անունների շարք է՝ Յովհաննէս Գրիգորեան, Դաւիթ Յովհաննէս, Սյաւիկ Զիւռյան, Հենրիկ Էդոյսեան, Արտեմ Յարութիւնեան, Արտակ Ոսկանեան, Եւրի Սահակեան, Կարօ Մեփիսէթեան, Արեւշատ Աւագեան, Զուլիկա Գրիգորեան, Ռազմիկ Դաւոյսեան. անունների շարք, որից բանաստեղծ ու անհատական բանաստեղծական մտածողութիւն առանձնացնելը պարապ գրաղմունք է: Անկախ այն բանից, որ այդ անուններից մի քանիսը ընթերցող հանրութեանը ծանօթ են մէկ կամ մի քանի գրքերով, իսկ միւսները դեռ ոչ մի գրքի հեղինակ չեն, ինձ թւում է, որ մենք զործ ունենք մէկ գրական սերնդի հետ, որի դիմադիմը դեռեւս պարզակալու ուղի է անցնելու: Բայց սերունդն ամբողջութեամբ ունի իր հոգեբանութիւնը եւ մտածելակերպը, որ իր նմանը չունեցող կենսագրութեան սկիզբն է ու արդէն, այսօրուայ գրութեամբ տարբերում է իր հանգրուանին հասած նախորդ սերնդի հոգեբանութիւնից ու գրական մտածողութիւնից, որ նուիրազործուած է՝ ասենք՝ Շիրազի, Սահեանի ու Սեւակի իրազօրծումներով:

Ահա, եթէ այս տարրական ճշմարտութիւնը դարձնենք արդար խօսակցութեան հիմք, ապա ո՞չ միայն հանդուրժելի, այլեւ հասկանալի կը դառնան նորերիները եւ հիմնական ձգտումը, եւ ծայրայեղութիւնները:

Ժամանակակից մտածելակերպի երանգներ են դրսեւորում այսօրուայ երիտասարդ հեղինակները, այլեւայլ երանգներ, որ հնարաւորութիւն է տալիս խօսելու սերնդի ամբողջական հոգեբանութիւնից եւ յուսալու, որ վաղն արտայայտուելու է նոր բանաստեղծական մտածողութեամբ ու լիարժէք անհատականութեամբ:

(«Ամսօր»-ի գրականութիւն — 1969, թիւ 7)

ՆՈՐԱԳՈՅՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ ԶԳՏՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ասում ենք Ջորգալյն, որովհետև այն բանաստեղծությունը, որ ժամանակի իմաստով փորձում է վերջերս, եւ մեծ մասամբ երիտասարդների կողմից, որպէս նրանց իւրատեսակ ճաշակի ու բովանդակների արտայայտութիւն, յատկանշում է անցիկի բանաստեղծութեան ձեւերին ու աւանդութիւնների յանդիմանելու եւ իր ձեւերով ու ձգտումներով ճնշոքն ու ճնշութիւնն օժանդակելու նկատմաններով:

Ճամբարադիրներն այն է սակայն, որ բանաստեղծությունների ընդունումը սկզբունքից կատարված ամեն մի հեռացում նրան այդ սկզբունքին աւելի մերթոթյն մտնեցալու անհրաժեշտությունը է պայմանաւորում: Այսինքն՝ ույս ղէպընձ, բանաստեղծությունն Հատար բանաստեղծությունից կեղծ տարբերակներումը ուրիշ բան չի կարող հիմնադրել, իմէ՛ն ոչ՝ աւելի Հարազատութեան վերագրար բանաստեղծութեան խակական ոգուն:

Այս տեսակէտէյ, երբ նալում ենք Նոր սերնդի ստեղծագործական փորձերի ընդհանուր արդիւնքին, չենք կարող չնկատել, որ այսպէս կոչուած ճարտարաւոթիւններն ու ճարտամտութիւնները կամ ինչպէս զրականադիտական ձեւակերպմամբ են ստեղծ՝ ճիւղաւորեալներն աստականայն արտասայտութիւնները վերածուել են քանստեղծութեան էաթիւնից կատարւած խզումի, ու արուե՛ւտը, արուեստի՛ ստեղծագործութիւնը քմահան ձեւամոլութեան ու պատկերապաշտութեան անդուստի խարխափումների։ Եւ տաւ, ինչ-որ աւելի է՝ որոճակցողէի, նման մոլորանքները պաշտպաններ են դառնում ու ստանան զտեսանքն ճիւղաւորում։

Արդարեւ, ոչ ոք չի կարող զլուր հանել, թէ բանաստեղծութիւնն ասուած բանը պատկերախա՞ղ է, բառախա՞ղ, քաղաքա-արտայայտութիւն, անանկրկն խո՞ք, յանդաւոր դարձանա՞ք, համեմատութիւններ մըդու-թիւն, թէ փոխաբերութիւններ վարպետութիւն: Այս միջին մէջ ցամաքա-տիկնոցը չբռնել չգտնել, ակնյայտացի է ի սպասէ: Այսպիսի՝ Հոգի մահացել է, եւ կիսնքն ու կիսդանտութիւնը բառերի ու տողերի մահապատանքի տակ ստուել ու զրկանացել են: Եւ ահա, արդարեւ, մի Հասարակ միտք, մի սո-վորակա՜ն ճշմարտութիւն, մի պատկերի թաղ կիս արտայայտութիւնն է քմահաճ ձեւ իրաւունք է տալիս մի քանի անհիմն թողորբ բանաստեղ-ծութիւնն անուրախ կրելու:

— Բայց յո՞՞ժ ախպէ՛՛ն և՛ն գրու՛մ, յ՛ա՛յ է արդիական ո՞՞ր — ասողներէի՛

Խոստում զգնեցեր հնչ նկատումս։
Բայց ո՛չ, Ո՛չ չե կերպ չէ կարելի տարճամոռել, որ այժմ այնպե՛ս
գրեն, ո՛ւր բանաստեղծությունն ապանուի եւ ո՛ւր սնանջ՛ն ու արտոնանդան
ստղերի կամայական իշխանությունը տերապանի։ Ինչպե՛ս էլ գրեն, ինչ ոճով
էլ գրեն, բանաստեղծությունը այն ժամանակ է՝ արուեստի ստեղծագործու-
թյան, երբ մարդկային կրքերի, յուզիկի, արարմանների եւ զգայնութիան
վկայություններն է բերում, Հոգու խոթանք, մտքի թռիչք ու սրացք։

(«Սովետական գրականություն» — 1970, № 3)

Հենրիկ ԳԱԼՍՏԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ ԸՄԲՈՆՈՒՄԸ

Մեր դարի պոեզիան յատկանշական մի կողմ ունի՝ ազգային բանաստեղծության ինստիտուտի տարածարկում՝ իր մեջ առնելու համար ուրիշի այն ստեղծածը, որ կարող է իրենը դարձնել։ Այս «իրենը» ուրիշինը չէ, քեռ դրսից եկած։ Արուեստը գիտութիւն չէ եւ նշմարիտ արուեստը չի կարող վերցրածը նայնութեամբ պահել։

Օտարամուտով գայթակհուելու վտանգը, ի հարկէ՛, կայ։ Եւ դրա օրինակները այժմ մենք շատ ունենք։ Բայց մի՞թէ դա է էականը։ Իսկապէս այն է, ինչ մերն է դառնալու։ Ո՛չ նստած թաւալու կամ նայնիսկ մերութիւն ձեռնով, այլ մե՛ր, հայկական ոճով ներդաշնակելու, ազգային մտածելակերպի ներքին հնարաւարտութիւնները առաւելագոյնս բացդրուելու եւ դարի երեւոյթներին սեփական վերաբերմունք մշակելու եղանակով։

Գրական երկրասարգութեան նորեկ սերունդը պոեզիա է վերադարձրելու բանաստեղծութեան անմիջականութիւնը եւ էփայրեսիան։ Վիլհելմ Գեյթընը՝ ամբողջ Գոթական քուակամներին պոեզիան ազատեց պարզունակութիւնից ու մակերեսայնութիւնից, դիֆերանցներից ու նազուպատումներից։ Նրիտասարգ սերունդը՝ պաշտպանելով բանաստեղծութեան շահերը, միւս կողմից, կարծես, խիստ ներանձնացաւ, ներսուզուեց բարդ, վերացական աստիճանների խորքերը, մի տեսակ հեռացաւ պոեզիայի առաջին գործոնից՝ իրականութիւնից։ Որքան էլ արտայայտման նոր, բարձր ձեւեր յայտնաբերեցին, բանաստեղծութեան արձագանգը, այնուամենայնիւ, թուլացաւ ընթերցողի հոգում։

Վերջին երեք-չորս տարում, ըստ իս, վիճակը փոխուեւ է։ Եւ չնմանում, թէ բանաստեղծութեան գոտի ձեռնկան, արտայայտչական որոնումները պակասել են։ Ընդհակառակն, դրանք աւելի են ծաւալուել։ Բայց, իմ կարծիքով, այս ընդհանուր շարժման մէջ չպէտք է միակողմանիութիւն տեսնել եւ կարծել, թէ այդ որոնումները աւարտուեւ են բանաստեղծութեան միայն արտաքին յատկանիշների յայտնաբերումով։ Լայն քափ ստացած բանաստեղծական նոր շարժման մէջ մի առողջ ու կենսատար աւել է արդէն ձգւում։ Վիճակի փոփոխութիւնը այստեղ դրսեւորւում է այն բանաստեղծութիւններում, որոնք վաղուց եւեթ հեռացել են պարզունակութիւնից ու ներքուզքութիւնից, բայց միաժամանակ աւելի են ազատ պարտաւատային մտքերի ու անեղծածային պատկերների գայթակհութիւնից։

Նորեկները շատ աւելի համարձակ են, քան էին նրանցից առաջ։ Համարձակ՝ ո՛չ միայն «սեփական պարտեզում», այլեւ հեռուներին նայելու խրոնց ազատամտութեան մէջ։

Վերջինս անխտափելիօրէն բերում է նաեւ իր ստուերները։ Թեմայի մանրայնութիւն, իմաստի միտումնաւոր սեքսուէքսմէ, ինքնանպատակ հնարքներ, անլուրդ կրկնաբանութիւններ եւ այլնայլ քերութիւններ, որ շատ դէպքերում անանցում են սակիւքի անորոշութիւնից։

Ամբողջութեամբ վերցրած՝ գրական նոր սերունդին դեռ շատ քան է պակասում, բայց եւ շատ քան իրագործում է արդէն։

(«Սովետական գրականութիւն» — 1970, թիւ 6)

ՎԱՅԷ ՍԱՖԱՐԵԱՆ

ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԵՒ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՃԻԳԵՐ

Փաստ եւ իրողութիւն է երիտասարդական պոեզիայի գոյութիւնը մեղանում: Սա մի երիտասարդութիւն է, որի տարիքը 20-ից մինչեւ 35-ի է հասնում եւ այսօր յաւակնում է հայ գրականութեան զարգացման ծանօթ եւ լնտանի ուղիներին մի նոր պատուաստում կատարել, նորութիւններ բերել՝ զարի մտածողութեանը համընթացաբար ցանկութեամբ լի:

Դարի մտածողութիւնը շատ է անհանդուարեւ երիտասարդութեանը եւ ո՛չ միայն երիտասարդներին, այլեւ՝ երկար ճանապարհ անցածներին: Եւ այն դառնութիւնը, որով լցուած է գրական միջոցաբար, նոր երիտասարդութեան անհանդուարեւ հետեւանքն է: Սակայն նրանք առայժմ անհանդուարեւ են ապրում միայն, անհանդուարեւ լինելով՝ որովայն արդիւնքի չեն հասնում: Մեծ թիւ կազմելով եւ ինչ-ի՜նչ առանձնայատկութիւններ ու տարբերութիւններ ունենալով հանգերմ, մի տեղ նրանք գտնում են նոյնատիպ, նոյնական:

Առաջին հայեացքից թւում է, թէ այս սերունդն ունի իր հոգեբանութիւնն ու մտածելակերպը, աշխարհի գեղարուեստական իմաստաւորման իր ինչ-ի՜նչ սկզբունքն ու պոետիկան: Սակայն, ըստ էութեան, դա տեսապատրանք է, եւ այդ տեսապատրանքը հետզհետէ դառնում է չօչափելի, երբ նորի ու նորարարի յաւակնութիւն ունեցողները իրենց առաջին կամ երկրորդ թոթովանքները հաւաքում են մի գրքոյկի մէջ կամ հանդէս են դալիս երկրորդ գրքոյկով: Այստեղ իր ողջ հասակով գրեւորում է ցաւալի իրողութիւնը, որի տնունն է մեւերի աննպատակ որոնում: Եւ քանի որ նրանցից շատ-շատերի մօտ պակասում է կեանքի ու աշխարհի նկատմամբ ունեցած նայուածքն ու հայեացքը, աւելի շատ գրականութեան դիրքերից են նայում կեանքին, եւ ոչ թէ կեանքից են դալիս գրականութիւն, ուստի եւ շատ յաճախ ստեղծում է կենսագրող, միայն գրական աղբիւրներից սնուած, հաւաքագրուած գործեր: Ո՛չ զգացմունքն է համապատասխան զգացմունքային ձեւակերպում ստանում, ոչ մտածողութիւնը՝ համապատասխան գրեւորում: Շատ յաճախ ստացւում է քաղցեմիական սեթեւեթանքներ՝ մեծ ցուցանակներով մանրամասնութիւն կրպակներ:

Որո՞նք են այն ընդհանրական, նկատելի առանձնայատկութիւնները, որոնց վրայ, իրօք, արժէ ծանրանալ այսօր:

Երիտասարդութեան ամենանկատարական թերացումը ասելիքի պակասն է: Մինչդեռ ասելիք շունենալու դէպքում առաջ է դալիս այն դժուարամարս, առարկայազուրկ խօսքը, որի մէջ շատ է մութը, քիչ՝ լոյսը:

Այսօր եւ բոլոր գարեբում ասելիք ունեցողը վաղ թէ ուշ գտել է մատուցման եղանակը: Ձի բացատրում նաեւ այն, որ երիտասարդները, որոնց մէջ, իրօք, կան շնորհալիները, կը հասնեն ասելիքի եւ մատուցման ձեւերի զաշնութեանը: Այսօր սակայն այդ չկայ, քանի որ ասելիքը շատ է օրապահալ: Ասելիքի պակասի հիմնական պատճառն այն է, որ երիտասարդութեան ճնշող մեծամասնութիւնը սնունդ է ստանում գրական աղբիւրներից եւ ոչ թէ կեանքից:

(«Առկետակա՞մ գրականութիւն» — 1970, Թիւ 7)

Ալեքսանդր ԹՈՓՉԵԱՆ

ՊՈԵՏԱԿԱՆ ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ
ՄԻՖԸ ԵՒ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Փաստ է, որ երիտասարդ բանաստեղծները իրենց մի էանի շարքերով գրական լուրջ վեճերի առիթ են տալի, նրանց մասին գրուած յօդուածներում, շօշափում են գրական հարցեր, հասկացութիւններ եւ պնտական այնպիսի ըմբռնումներ, որոնց մասին մինչ այդ չի խօսուել գրեթէ ոչ մի յօդուածում: Երիտասարդական պոեզիան նեղֆելով իր շուրջը ստեղծուած պոետական արկածախնդրութեան միջը, աստիճանաբար եւ հաստատուն ճայլերով դառնում է գրական իրողութիւն. որի գոյութիւնը եւ գրական արժէքը այլեւս անհնար է հեղեական տոնով եւ դասական ծանրութեամբ անտեսել:

Պոետական նոր սերունդը ձգտում է մի շարք ժամանակակից բանաստեղծների բնագրից թարգմանել եւ ներկայացնել ընթերցողին: Սա պոեզիայի այն օգտակար եւ անհրաժեշտ ունիվերսալիզացիան է, որ գրական իրափանջիւր սերունդը պարտաւոր է անել եւ սուանց որի ստեղծումն են ննչ եւ գաւառական կատեգորիաներ:

Ինչպէ՞ս եղաւ, որ մեր պոեզիայում ուժեղ եւ յաղթանգաւ տղերք եւ ինտելիկ, որ երկտառադ բանաստեղծը յայտարարեց, թէ երգից բացի ոչինչ չունի, ինչո՞ւ պոետների նոր սերունդը փորձեց դուրս գալ բերթութեան ծանօթ շաւիղներից եւ նորերը բացել: Բացատրել այս բոլորը գրքերի, «եամբուրգեան լուսինների», ձեւի ու ջանքերեան խնթութեամբ, նշանակում է խոստովանել սեփական անգորութիւնը՝ բանաստեղծութեան մէջ կատարուող տեղաշարժերը բացատրելու գործում:

Գրական նոր կուլտուրայի ստեղծումը, եթէ չառաջնորդուի ժամանակի եւ հասարակութեան շահերով, ապա կը դառնայ ինքնանպատակ որոնում: Այսօր գնալով աւելի մեծ իմաստ է ստանում *պոետ եւ հասարակութիւն* արտահայտութեան պարզ սխեման: Այդ երկու միաւորի միջեւ պէտք է ընկած լինի «օգտակար նշմարութեան» փոխադարձ եւ տնդադար խորացող ու նորագուծ կապը: Երիտասարդ բանաստեղծների մեծագոյն արժանիքը պոետական նոր կուլտուրան ճաղափայտական լայն շնչով յագեցնելու ձգտումն է:

Պոետական նոր սերունդը արդէն արել է առաջին եւ կարեւոր ճայլը՝ ասպարէզ է բերել բանաստեղծականի նոր ըմբռնումներ: Այս ամբողջ փորձում է յագեցնել ճաղափայտական նորովի շնչով, հասարակական հնչեղութեամբ եւ արդէն կան ուրախացնող արդիւնքներ:

Գրական նոր արակը ստեղծում է սերնդի համատեղ ջանքով: Այնպէս որ բնաւ հարկ չկայ ամբողջ սերունդը (ինչպէս արածելում էր արում) անւանել մէկ հոգու անունով:

Փննդատութիւնը այսուհետեւ տակի մեծ անիւիքներ ունի գիտականօրէն բացատրելու մեր պոեզիայի նոր խմբումները, ճանգի գրականութիւն է մուտք գործում մի նոր սերունդ, որը դեռ շատ մաքառումներ արելի տպրի «լուսի աղբիւրի» դժուարին ճանապարհին:

(«Սովետական գրականութիւն», 1970, Թիւ 10)

ՇՄԱՆԱՆ ԹՈՐՈՍԵԱՆ

ՅԱՆՈՒՆ ՀԻՄՆԱԽՈՐՈՒԱԾ
ԵՒ ՅՍՏԱԿՈՒԱԾ ԶԱՅՆԱՆԻՇՆԵՐԻ

Պարզունակ, քիչ բան տալով, կամ ոչինչ չտալով չափածոյի գէժ բնգ-
վորողներն ընկնում են մէկ այլ ծայրայեղութեան մէջ: Նրանք երեւի ճիշդ
են, երբ կարծում են, որ ժամանակակից մարդու բանաստեղծական աշխար-
հը դժուարութեամբ է տեղաւորուում սոսկ քառասուղային չափուած-ձեւուած
չափածոյում, եւ ազատելով իրենց այդ կաշկանդումից՝ միտում են ընդլայ-
նել, աւելի խոր ու նշանակալից դարձնել ասելիքը, դրա մէջ գտնելով իրենց
ազատութիւնը: Բայց ազատութիւնը գիտակցուած անհրաժեշտութիւն է նախ
եւ առաջ: Շատ է անապատ այն ազատութիւնը, որ չի բխում գիտակցուած
անհրաժեշտութիւնից:

Ամէն մի գիտակցուած անհրաժեշտութիւն (կեանքում եւ արուես-
տում) ունի կառուցուածք: Այստեղութիւնն սկսւում է այնտեղ, որտեղ վերջա-
նում է Քասուր: Բանաստեղծը Քասուային մտայղացումը իր մէջ յստակացնե-
լուց յետոյ է միայն մատուցում ուրիշներին: Շատ հնարաւոր է, որ մտայղ-
ցացման քառուստ եղած բանաստեղծորէն շատ ուժեղ եւ կարեւոր մտքեր ու
զգացումներ յստակուած մարմնաւորելիս անհետանան: Այդ զոհաբերութիւ-
նը արուեստագէտը ենթագիտակցորէն կտաւարում է յանուն յստակութեան,
յանուն այն բանի, որ իր արտագրանքը սպառման համար պիտանի լինի սո-
ցիալական կեանքի պայմաններում: Մարդկային ամենազեղուն ու պոռթ-
կուն զգացումները բանականութեամբ են ձեւաւորում եւ ստանում արժէք:
Միամիտ էր Արթուր Բէժմպոն, որ փառաբանում էր իր մտքերի եւ
զգացումների թափթիւրածութիւնը: Բէժմպոնական ազատութիւնը, գիտակ-
ցուած անհրաժեշտութիւնից չէր բխում, այլ բխում էր յուսահատ ըմբոս-
տութիւնից:

Այս միակողմանի իրացիոնալիզմը մեր երիտասարդական պոեզիայի
մէկ այլ կարեւոր թերութիւնն է: Այն քնարականները, որոնք չեն յենուած
սիւսէի եւ պատումի վրայ (իմ նախադրած լիբիկան եւ բատ իս, լիբիկայի
ապապան), պէտք է գտնեն իրենց զգացմունքի եւ մտորման կառուցուածքը,
պայմանականորէն ասած տրամադրութեան, զգացմունքի, մտորման սիւսէն,
ներքին սխաւածը: Կրկնում եմ, արուեստի բուն նպատակը կեանքի քառուստ յըս-
տակացնելն է եւ ոչ թէ այն օրյեկտիւորէն արժանազեղը: Արուեստագէտը
զաշնութեան օրոնման իր կիրքը զաշնութեամբ է արտայայտում, եւ այդ
է նրա ընդլիզումը անդաշնութեան դէմ:

Երիտասարդական օժտուած ուժերը այս թերութիւնը կարող են յաղ-
թահարել յամառ ու գիտակցուած ջանքով, որովհետեւ, իմ կարծիքով, ճիշդ
էր Ա. Կոստանեանը, որը ինչ-որ ուսցիոնալ բան է գտնում նրանց ասեղծա-
գործութիւններում:

Միւս անհանգստացնող հանգամանքը Էպիգոնիզմն է: Մա մարտնչող
ախտ է, որը յաճախ կալում է ո՛չ միայն գիշտատնոներին, այլեւ շնորհա-
լիներին աւ օժտուածներին: Այս երեւոյթը արտայայտում է բազմաթիւ ձե-
ւերով:

(«Առվետական գրականութիւն» — 1970, Բիւ 12)

Ստեփան ԿՈՒՐՏԻԿԵԱՆ

ԽՍՏԱՊԱՆԱՋՈՒԹԻՒՆ ԱՌԱԽԵԼ ՀՈԳԱՏԱՐՈՒԹԻՒՆ

Մեր երիտասարդ բանաստեղծներից ոմանք (որոնց դուրեմանակամ տա-
րիքը վաղուց է անցել) նորարարություն են համարում նոյնիսկ առանց յան-
գի ու առանց կենտրոնաբեռն գրելը:

Իսկ չէ՞ որ նման ճեշերը վաղուց են կիրարկել նոյնիսկ... պոստհայ
բանաստեղծները:

Մեր նորագույն բանաստեղծների այս հնաբայի մարգամբները տեսնելով
երգիծաբանը գրել է.

«Տարիներու ընթացքին ողջունեցինք մոր տեսակի բանաստեղծու-
թիւններ:

«Ամէն մէկ նորութիւն՝ բանաստեղծութենէն բան մը հանեց ու նետեց:

«Նորութիւնը մերկութիւն ըլլալէ զատ եղաւ նաեւ վերաբուժութիւն մը,
որ անդամահատեց բանաստեղծութիւնը, միշտ անոր մէկ մասը կտրելով ու
նետելով:

Այսպէս՝ բանաստեղծութիւն

Առանց յանգի,

Ապա՝ առանց չափի,

Առանց տունի,

Յետոյ՝ առանց զգացումի,

Հետզհետէ առանց կենտրոնութեան,

Առանց գլուխի (արդէն առանց ոտքի էր),

Ու վերջապէս առանց իմաստի:

«Ի մի բան. բանաստեղծութիւն առանց բանաստեղծութեան»:

Մեր երիտասարդ բանաստեղծներից շատերը չեն կարողանում միա-
ժողովել մեծ հեռանքին ու իրենց հստակ պարտադրած, տանձնափակում են
իրենց մեզ լուսամտի մեզ բովանդակութեամբ, որպէս նորարարութիւն
կրկնում են փառանքալի դարասկզբին եւ գրանից էլ առաջ երազական գրական-
նութեան մէջ մաշուած ըմբռնումներն ու ստեղծագործական հնարանները:

Մեզանում մարդիկ էլ կան, որ անհասկացող ու յետամնաց չհամար-
ւելու համար ճեշերէն հաւանութիւն են տալիս անդերսնեան թագաւո-
րի հագուստին...

Մեր երիտասարդական պոեզիայում յատկապէս չես գտնում աշխարհա-
գրական կոնկրետ միջավայր, ազգային երանգ: Այդ կոսմոպոլիտիզմը ոմանք
համարում են «գերծ լինել ազգային տանձնափակութիւնից» եւ իբր այդ ե-
րեւոյթը «բացայայտում է ազգային կեանքում ու կենցաղում եղած փոփո-
խութիւնները»:

Հասկանալի է, որ անհայրենիք պոեզիան գեղեցիկ նորարարութիւն
կամ ինտերմոդիստիկա չէ: Բարութիւնը համամարդկային հասկացութիւն
է, սակայն բարութեան մասին էլ իրաւաւէտ ժողովուրդ ունի իր ազգային
իւրայատուկ մտածելակերպն ու արտայայտական միջոցները: Այդ բոլորը
չի կարող շրջանցել երիտասարդ գրողը եւ այդ բոլորն ամենեւին էլ չի հա-
նաւում նոր խօսք-տեսլու, հոգեկան նոր ոլորտներ հետախուզելու երիտա-
սարդական առողջ ձգտումներին:

(«Գրական Քեթթ» — 1970, № 85-86)

Սերգեյ ԱՌԱՐԵԿԵԱՆ

ԶԱՊՐՈՒԱԾ ԶԳՏՈՒՄՆԵՐԻ ՅՈՐԶԱՆՈՒՏՈՒՄ

... Այսօր էլ երիտասարդ բանաստեղծների մի քանիսը ջանքեր են անում է բացառիկ արագության հետ հաղթել ինքնագործունեության մեջ։ Վէճ է մղում երկու կարգի բանաստեղծության միջև։ Մի կողմից զգալիորեն պահպանողական մի շերտ մկտում է կայուն պահել ընթերցողի հետ ունեցած դրոշմի պարզությունը (որոշ դեպքերում նրանցից մի ժանրին յաջողում է ստեղծել յստակ ու կենդանի երգեր, իսկ յաճախ էլ դրոշմը ակնյայտ չափով դառնում է մանրանշանի, որը զարմեալ իրատեսակ մոդերնիզմ է), մյուս կողմից՝ մի մեծ խումբ ինչ-որ կենտրոնախույզ ոգևորություններ առաջ է հրում իր այլաբանական հերոսին, որի հորիզոնն առայժմ պատած է միմյուր ու մշտնջող։ Ոմանք այս վերջին երեւոյթն անուանում են նախնական փորձարկում, ուրիշները՝ անգլանի ու տարաշխարհիկի միասնության լուրջ փորձեր, մի ուրիշ խումբ էլ երկիւղած բարեպաշտություն աղօթում է այս յիշատի անհասկանալի խաչքարի առաջ։

Եւ այսպէս՝ մի կողմից ինչ-որ չափով կենցաղային մուլիկություն, մյուս կողմից ապարդիւն ցատկ դէպի ինտելեկտուալ քաղցրերը։ Երկու դեպքում էլ կուտակում է զարմանալի դիմադրող պոեզիա, որից անհնար է զգալ ազդեցիկն ու բնաշխարհիկ գոյն ու կոյրիտ։

Ստեղծուել է շատ զանաչապիւս մի բան։ Երիտասարդ բանաստեղծները, պայքարելով աւանդովի ուժի դէմ, փաստօրէն իրենց դուրս են գնում նաեւ այն միջավայրից ու աշխարհից, ուր զգացել են կենսական ցուներն ու տագնապները, ոգևորություններն ու հոգեկան տատանումները, որ ապրել ու անհշուշտ, հասակ են նետել։ Քննադատությունն ու անհանգստանքները մի պարզ ու հասարակ խրատ են բերում։ Երիտասարդ անհրաժեշտ է դիտել հայ սրտի, հայ մարդու ուրախութեան ու վշտի, նրա կարօտի ու թիպախառնակ, նախազգեստի ու հոգեւոր թռիչքների տեսանկյունից։

Ամբողջ ցան աչի է, որ տարաշխարհիկ պոեզիայի հայկական պոստ-պակետիստներն աչիպէս արտացաւ են մտածելում, ահա պաշտպանում են սեփական պատիւն ու հայրական ժառանգությունը։ Համոզմունքներն, այսօր աչիքան կարծրացած է նրանց մեծ մասի մօտ, որ մնում է պարզապէս ասել՝ ասուր ինձ հասարակական մեծ ու բարդ կրթելով հարուստ ու յստակ բանաստեղծություններ, նրանցից դէն ուզում ես նորարար եղիլ, ուզում ես՝ աւանդապաշտ։

Այսօրուայ մեր երիտասարդական պոեզիայում բացառիկ կրթով մոլեղնում է համատարած գործունէն ու իւրօրինակ շարունը։ Նման են իրար աչիպէս, որ անունների տեղափոխությունից համարեալ ոչինչ չի տուժի։

Արդ, ո՞ւր են ինքնատիպ երանդները, պատկերի ծանրությունները, յղացման առողջ ու յստակ սաղմերը, որն է ներշնչանքի անկեղծությունն ու հոգեկան զօրութիւնը, առանց որի չի կարող կենդանանալ բանաստեղծի մտածողությունը։ Առանց զբաղմունքի տեսանկյան սեփականութեան անհրաժեշտութեան, որ մեր երիտասարդների նախնական խիզախությունն է վերջոյ վերածուում է ջուր պղտորելու։ Դանշանական փխրափայտություն։

(«Գրական Բերք» — 1970, ԲԽ 50)

Սաղաքել ՅԱՐՈՒԹԻՆՆԱՆ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ԳԻՏԱԿՑՈՒԹԵԱՄԲ

Որքան էլ տարօրինակ թուայ, երիտասարդութեան այսօրուայ «մանկանապաշտութեան» հիմնական պատճառներից մէկն էլ հենց ինքը՝ մօրիմ փոքրութիւն *պրիմիտիվիզմ*ն է: Այո՛, երիտասարդութիւնը ձանձորացել է, յագնել մէջնիւմներից, անիմաստ դեզերումներից, մակերեսային, հազար անգամ կրկնուած մտքերից ու ջրիկ զգացմունքներից:

... Իսկ այժմ այս բամաստեղծութիւններին նայեմք այլ տեսանկիւնից, տեսնեմք, թէ որքանով են նրանք արժագանգում պատմական, սոցիալական *պրոցեսներ*ին, որքանով են արժագանգում մեր իրականութեանը եւ ինչ գաղափարական բովանդակութիւն ունեն: Ահա այստեղ է, որ ի յայտ է գալիս զրանց կատարելով անգործութիւնը: Կայ միայն *ձեւ*, թող որ ոչ անպայման արտառոց, բայց *ձեւ*՝ զուրկ բովանդակութիւնից, առանց գաղափարական յագեցումների:

Կայ մի խորը քիւրիմագութիւն եւս: Երբ խօսում է նորարարութեան եւ անհնարապատեան մասին, մեծ մասամբ հաշուի են առնում արտաքին երեւոյթները:

... Աւանդներ ասելով պէտք է հասկանալ նաեւ անցեալի հեղինակների մօտ եղած հնազանդ *ձեւերի* ժխտումը եւ տուեալ ժամանակաշրջանին համապատասխանող *ձեւերի* որոնումը: Յիշեմք Յովհաննիսեանին, Թումանեանին, Տէրեանին ու Ջաբինցին, Սիւսանբոյին ու Դանիէլ Վարուժանին: Տաղաւաքութեան կրկնութիւնը չի կարող անհղապահութեան ապացոյց լինել:

Իսկ նորարարները: Եթէ իրենց նորարար համարող երիտասարդ հեղինակներին հարցնելու լինեմք. «Գոնո՞ւմ է՞, որ դուք մախորդների համեմատութեամբ ինչ-որ նոր բան է՞ք բերում: Դուք եւ ձեզ շրջապատող զրուանքները գգո՞ւմ է՞ք, որ հետաքրքրութիւնների ընդհանրութիւն ունե՞ք: Կարելի՞ է ասել, որ հենքի, նախորդների հետ համեմատած դուք առաջդնում է՞ք: Ձեր ստեղծագործութիւններում որեւէ որոշակի գրական պլան ունե՞ք: Ինչպիսի՞ գրական ստեղծագործական պրոպոզիցիան է՞ք դուք կարծում համարում այսօր (գրականութիւն եւ գաղափարախօսութիւն, գրականութիւն եւ իրականութիւն, գրականութիւն եւ իրականութիւն): Եւ վերջապէս ի՞նչն է՞ք համարում ձեր սերնդի հիմնական խնդիրը: Ահա եթէ այսպիսի հարցերով դիմելու լինեմք նրանց, կը տեսնեմք, որ մեր «նորարարները» պարզապէս չունեն են: Իրենց տեսական յօդուածներում, որոնք տպագրուեցին «Գրական թերթ»ում եւ «Սովետական գրականութիւն» ամսագրում, նրանք խօսում են այնպիսի՝ բաների մասին եւ այնպիսի *ապոմբով*, որ անտեղեկ մարդու վրայ իրօք որ կարող են տպաւորութիւն թողնել: Սակայն, ովքեր գիտեն մեր պոեզիան, նրանց համար պարզ է, որ մեր երիտասարդները պարզապէս թաց դռներն են քարդում: Վկայակոչելով Լարկային ու Ապոլինէրին, Էլիւարին եւ Նուրիշենքին, նրանք թերեւս չեն էլ պատկերացնում, թէ դրանցից ամէն մէկն ինչ է արել իր երկրի պոեզիայի համար, այլապէս չէին տեսնում նրանց պարտականութիւնները մեր պոեզիայում այն ժամանակ, երբ տառամեղակներ առաջ, թերեւս Լարկայի ու Էլիւարի հայ ժամանակակիցներն ու յետնորդները այդ բանն արել են արդէն:

(«Գրական թերթ» — 1971, թիւ 13)

Սուրբ ԱՂԱՔԱՅԵԱՆ

ԴԵՊԻ ԿԵՆԴԱՆԻ ԱՂԲԻՒՐՆԵՐԸ

Բանաստեղծութիւնն իր բնական հիմքերէն կզդրացնելու, նրանից զգացմունքը եւ մտածումը դուրս մղելու կնդն նորարարական փորձերը, որոնք արեւմտեան սկզբնաղբիւրների ձեւափոխումն ու զգեստափոխումն ասորեականներն են, ինքին զատուարտում են ժախողման, որովհետեւ իսկական պոետիկան ծնւում է իրական հողից, մարդկային կենդանի ապրումներից եւ կեանքի բնական դոյններից:

Նոր սերնդի բանաստեղծները յաճախ եւ իրաւացիօրէն յմբոստանում են արդի բանաստեղծութեան մէջ բարդաւանդ նկարագրայնութեան-նազլաբանութեան ու խաբուսիկ հրապարակախոսութեան դէմ, որը բանաստեղծութեան համար նոյնպիսի շարիք է, ինչպէս իրենց Յրանագրային-անառարկայ ոտանաւորագրութիւնը:

Այդ բարոյացումը, սակայն, կարող է լուրջ դիտակցութիւն դառնալ, եթէ հնամաշակ, իսկապէս էլ ձանձրոյթ առաջացնող յղումներին ու ձուներին փոխարինեն ժամանակի լուրջ հոգսերով ու օրերի շնչով նորացած, մարդկայնօրէն իրար ու ճշմարիտ բանաստեղծութիւնները:

Այդպիսի բանաստեղծութիւնները նորերի մօտ աւայտմ չեն երեւում կամ հազուադէպ են երեւում:

Բանաստեղծութիւններ այժմ շատ հեշտ են գրւում, բայց երեւի թէ աշխարհում չկայ աւելի զժուռը գործ, քան պոետիան: Դժուար է ոչ թէ տպագրելը, այլ մի քան ասելը, քնթերցողի հոգում ամուր ու անջնջի հետք թողնելը: Պ. Խմիշե Տիւղէն է գրել. «Դաժան է քա օրէնքը, Պռաւաս»: Սա է, որ յամառօրէն չեն ուղում ըմբռնել շատերը, նաեւ երիտասարդները, որ այնպէս դիւրութեամբ զանազան տեսութիւններ են սարքում, բայց չեն հասնում ժամանակի եւ ապրումի միացման ճակատադրական պահին, այսինքն՝ իսկական բանաստեղծութեան ծնունդին:

Արեւատ ԱԻԱԳԵԱՆ

ՅԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՌԻԺ

Հասկանալի է, որ պեզիայում առանց աւանդական գրականութիւնը ստեղծագործաբար իւրացնելու չի կարելի առաջնալ կատարել: Բայց մեռացւում է մի կարեւոր հանգամանք, մտացում է ուրիշ ազգերի դասակարգն ու ժամանակակից քանաստեղծներին հետեւելու, նրանցից սովորելու գործը: Ընեմ էիլ եմք քարգամում, մեմք պարծնում եմք մեր միջնադարեան պոետիկայով, ուրիշներից ետ չմնալու համար մեմք ցուցադրաբար վկայակցում գիտով, ուրիշներից ետ չմնալու համար մեմք ցուցադրաբար վկայակցում: Եմք նախկինում եւ միւսներին, բայց այսօրուայ վիճակով ետ եմք մնում: Ետ եմք մնում անմաստ ու շարքով տողերով ու պատկերներով լցւած գրքերի առատութեամբ: Կնդտ ազգային ու եայրեանսիրական երգերի հեղձգ-

ներով աւերում է մեր պոետական անդաստանը: Եւ յաճախ գրական մամուլը մի էջում սնանկարժեք փառաբանելով նախկացուն, միւս էջում բարդում է նրիտասարդ քանաստեղծների անյամգ գրելու մարմաքը, մօրը որոնելու մրա ձգտումը: Նման վերաբերմունքով, կանխակալ ձեւով մեր պոետական առաջընթացը ետ կը պահուի եւ գեղարուեստական գրականութեան համաշխարհային չափանիշով մեր գրականութիւնը կ'ընկնի անհաւասարալըշուութեան մէջ:

Ինձ թւում է մեր երիտասարդական պոետիան աչքի է ընկնում իր անհանգիստ, որոնող քննարութեամբ: Վերը նշուած եւ շնչուած պայմանները ստիպում են, որ այդ սերունդը ինչ-որ չափով մտնի գլխական «օպոզիցիայի» մէջ: Սակայն կարծում եմ դրա մէջ ոչ մի վտանգաւոր ու հիւսնդագրին բան չկայ:

Եւ, ի վերջոյ, պէտք է հասկանալ մի տարրական նշանադրութիւն, որ բանաստեղծը գրականութեան մէջ իր տեղը ապահովում է միայն այն դէպքում, երբ ժամանակին բնութիւն տուած ու աւանդական դարձած արժէքներին անկասկածաբար է նօսրը, սեփականը, այսինքն՝ ոչ անանդականը:

Վազգէն ՄՆԱՅԱԿԱՆԵԱՆ

ՀԱՒԱՏՈՒՄ ԵՄ...

Ձարենցից յետոյ բանաստեղծական եւ ոչ մի նոր սերունդ այնպիսի ոգեւորութեամբ, հաստատով ու հանգստութեամբ, երբեմն էլ նաեւ մեծամեծ տութեամբ, իր ստեղծագործական որոնումները չի ներկայացրել ընթերցող հասարակութեան ու գրական քննադատութեան դատաստանին, ինչպէս Վարդանայ աղաները: Այդ համարձակութիւնը առաջին հերթին հոգեւոր անկեղծութեան արտայայտութիւն է, որոնումների տառապանքը մտերմօրէն ընթերցողի հետ կիսելու, դրա իսկական արժէքը որոշելու ցանկութիւն, յետոյ միայն անխճատ աղմկարարութիւն, կռիւի տեսանկիւնից աշխարհներ յայտնաբերածի մոլորութիւն, ձեռք եկել ենք փոխարէն «դուք չկաք» յոխորտում:

Երիտասարդական պոետիան կարելի էր հերկել, եթէ ոչ առաջաման, գոնէ յայտնաբերման պատճառ է դարձել: Երեւացի է շնորհալի քննադատների մի սերունդ, որի գլխաւոր հոգսերից մէկը երիտասարդական պոետիայի այսօրն ու վաղն է:

Վերջում կ'ուզենայի անդրադառնալ այն կարծիքին, թէ նոր սերունդը արդէն գիտի «ինչպէս» լեզուն, մնում է գտնել «ինչ»։ Այդպիսի հրաշքներ չեն լինում: Հակառակը թերեւս աւելի ճիշդ կը լինէր, այն էլ ոչ բոլորի վերաբերելու: Ա՛խր, այդ «անտէր» «ինչպէս» շատ է դժուար, եւ առանց մեծ «ինչի» մարդուն չի մօտենում: Ես՝ գիտեմ մի լեզուաբանի, որի գրածներում եւ «ինչ» է բարձր, եւ «ինչպէս» է, բայց վերջերս պատահմամբ ձեռք ընկաւ նրա չափածոյ գրուածքներից մէկը եւ աւարեկութեամբ ո՛չ «ինչ» էր կար, ո՛չ էլ «ինչպէս»։ Թերեւս առաջին անգամ դառնութիւն ապրեցի տեսնելով, որ հայերէնն էլ այդքան աղաւաղուելու հնարաւորութիւնն ունի:

Արշալոյս ՍԱՐՈՑԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆԸ ՌԵԲՈՒՍ ԶԷ

Պանդիան պէտք է շաղախուած լինի յայտնիքից ու մտքերից: Գրուած կը լինի յանգով, թէ անյանգ, միեւնոյն է, միայն թէ ասելիք ունենայ եւ լինի յուզական:

Մինչդեռ մեր երիտասարդական պանդիան շատ քիչ բան է առում ընկերացի մտքին ու սրտին:

Մեր երիտասարդ բանաստեղծների մէջ, իսկապէս, կան շնորհալի տղաներ, որոնց շնորհքն ակնբախ է անգամ նորամուտէամբ գրուած գործերի մէջ: Դժբախտութիւնը այն է, որ տրամաբանական զարգացումից զուրկ բանաստեղծութիւններ գրելու փորձեր են անում շատ շատերը: Զէ՞ որ դա չափից աւելի հեշտ է: Եւ իսկական բանաստեղծութիւններ գրելու փորձեր են անում շատ շատերը: Զէ՞ որ դա չափից աւելի հեշտ է: Եւ իսկական բանաստեղծն ու շնորհագործը այնքան էլ հեշտ չի միանգամից տարբերել:

Համամիտ եմ Ս. Աղաբաբեանի այն կարծիքին, թէ օտար պանդիայի բացասական ազդեցութիւնը կայ մեր երիտասարդական պանդիայի վրայ: Ի գուր են ունենալ փորձում ժխտել - կայ: Բացասական ազդեցութիւնը ամէնից առաջ արտայայտուած է ունենալ ստեղծագործութիւնների գաղափարագրիկութեամբ, բանաստեղծական խօսքերի անհեթեթութեամբ:

Ձեռամուտիւնն ու մշուշապատ դատողութիւնները նարարութիւն չեն: Նման երեւոյթներ զրակամտութեան պատմութեան մէջ եղել են: Եկել են ու անցել, չլիմանալով ժամանակի քննադատները: Իսկ նշմարիւ օժտուած բանաստեղծները որոնումների ճանապարհին գտել են իրենց:

Սերգէյ ՍԱՐԻՆԵԱՆ

ԵԿԷՔ ԶԳՈՒՇԱԿԵՆՔ...

Բանն այն է, որ ոմանք խնդրիք չբարդացնելու համար, իսկ ոմանք էլ աւանդականի իրենց իրաւունքը պահպանելու համար, պարզապէս, փորձում են հարթել իրողութիւնը մի սովորական հայեացքով՝ որպէս թէ ի՞նչ նորարարութիւնը, ինչո՞ւ սրել ճշգրտութիւնը եւ աւանդականների սահմանազերծելը, կամ ի՞նչ կարիք կայ պոեզիան ենթարկել նման ստորաբաժանումների: Սակայն նման ստորաբաժանումը գրականութեան պատմութեան պարտադիր անհրաժեշտութիւնն է եւ իբրեւ օրէնք դրժում է նաեւ տուեալ պարագան յուսի, ու՛չ միայն չի կարելի անտեսել, այլեւ բացայայտ ասել, որ գերիտասարդական պոեզիան նորարարական պոեզիա է, որ նա միտում ունի տեղեկական մտածողութեան մի ուրոյն եղանակ, պոեզիայի ատրիբուտների, անհրաժեշտական սուբստանցիայի մի իւրօրինակ համակարգ եւ որ այս Բ՝ բանաստեղծական սուբստանցիայի մի իւրօրինակ համակարգ եւ որ այս Բ՝ մասնով նա ո՛չ միայն իր նախորդի իւրացումն է, այլեւ նա բացասումը

(հասկացողութեան փոխադրական իմաստով) : Առհասարակ ամէն մի բանատեղծական անհատականութեան ինքնութիւնն անհասկանալի կը լինէր առանց նախորդի բացատման : Տէրեանը ո՛չ միայն Թումանեանի ու Խաչակեանի հաստատումն էր, այլեւ նրանց բացատումը : Զարեկը ո՛չ միայն Տէրեանի ու Վարուժանի հաստատումն էր, այլեւ նրանց բացատումը : Սահանն ու Պարոյր Սեւակը ո՛չ միայն Զարեկի հաստատումն են, այլեւ նրա բացատումը : Եւ այսպէս շարունակ...

Սիւվա ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆ

ՃԱՄԱՆԱԿԻ ՇՈՒՆՉԸ ԵՒ ԱՍԵԼԻՔԻ ՊԱԿԱՍԸ

Աշխատելով ըմբռնել եւ բացատրել մեր ներիտասարդների ստեղծագործական միտումները, ես ունեմ, սակայն, մի լուրջ առարկութիւն : Ինչպէս ուզում ես, գրի՛ր՝ յանգստի, անյանգ, երկար թէ կարճ տաղերով, ճշմիտ առանց չափի, — բայց գրի՛ր այնպէս, որ քեզ հասկանան, որ ասելիքդ հասնի կարդացողին : Խօսես, ի հարկէ, որոշակի մակարդակի կարդացողի մասին է : Միանգամայն արդարացիօրէն հակադրուելով՝ մեզ մօտ այնքան տարածուած ընթերցողի քոյլ ներկերի վրայ խաղացող եւ արցունք քամող «բալիկ-նայ-րիկային» տառաւորներին, այդ յայտ մատչելի, պարզունակ փարզակալանութեանը, — մեր երիտասարդներից ռմանք ընկնում են մի ուրիշ ծայրայեղութեան մէջ : Իրար են կցում իրար հետ կապ չունեցող բառեր, անկանոններ, սողեր, համարում այն ասոցիատիւ մտածողութեան արդիւնք, ժամանակակից պոստիւմի առանձնատկութիւն եւ յետադարձ, թէ էլ ինչ պոստիւմ, եթէ քեզ պիտի շատերը հասկանան : Եթէ այդպէս է, եթէ դուք զբոսում էք միայն ընտրանի պառնասականների համար, էլ ինչո՞ւ էք ուզում տպագրուել, գրքեր ունենալ : Հաւաքուցե՛ք, կարդացե՛ք իրար, վայելեցե՛ք ձեր արտօնակցիայի արտօնակալ պտուղները եւ սրանով էլ հարցը փակե՛ք : Ո՛չ, յարգելի բարեկամներ, գրողը, քանատեղծը պէտք է ասելիք ունենայ, այբուի այդ ասելիքը աշխարհին իրարարելու տենչից : Ստեղծագործութիւնը առանց հանդիսատեսի, ունկնդրի, ընթերցողի փոխադարձութեան մենալ կէտ է, «իմ իմբիւն» :

ԼԵՆԻՆ ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՊԷՏՔ ԶԷ ԾԱՅՐԱՅԵԼՈՒԹԻՒՆ ՈՒ ԲԵԻԵՐԱՑՈՒՄ

Պէտք չէ դարձնալ եւ ապանայի փող հնչեցնել, որ երիտասարդները մի քիչ այլ կերպ են մտածում : Հիմնովին փոխուել է մեր ապրելակերպն ու կենցաղը, հրեան են եկել նոր երեւոյթներ, արօրի ու գութանի Հայաստանը այժմ արագացուցիչի ու հաշուիչ մեքենայի հանրապետութիւն է, ժամանակակից գիտական մտքի կենտրոն : Հանգիստ խղճով օրինալափ պիտի համարել նաեւ այն, որ կենսեցիք բխող այդ նոր ընկալումը, նոր հոգեբան-

նութիւնը, նոր վերաբերմունքը պիտի մուտք գործի արուեստի ու գրական-
նութեան մէջ, ունենայ իր տեղը բանաստեղծութեան տողերում, կտաւների
միայ, նոստագրերում :

«Ձեռն հասկանում» արտայայտութիւնն արդէն այնքան զօրաւոր է դորձել,
այնքան անբեկանելի ու զնահատման անխաղախ չափանիշ, որ ազատ կարող
է փոխարինել տեսական քննադատական յոգեւածներին մի ամբողջ շարքի :
Եւ տիրուր փիլիսոփայութեամբ չհասկանալու մեղքի առիւծի բաժինը շատ յա-
ճախ վերագրում է բանաստեղծին, ոչ թէ փաթեթիք ոճով «չեմ հասկանում»
գոչողին : Սինֆոնիկ երաժշտութիւնը չհասկանալու համար երբեք չի քար-
կոծւում երաժշտութեան այդ տեսակը, այլ՝ ունկնդիրը, որն անհրաժեշտ
ճաշակ, զարգացութիւն եւ նաեւ հմտութիւն չունի : Ի հարկէ, գնորդիչը գոր-
ծերում կան, իրօք, անհասկանալի քաներ, մանուածապատ ձեւակերպում-
ներ, գրական անիմաստ վարժութիւններ, եւայլն : Ասկայն դա իրաւունք չի
ոտարկում համահարթեցում կատարել եւ շտեմել հետաքրքիր մտածողութիւն,
թարմ շունչ ու նոր երանգ ունեցող ստեղծագործութիւնները, որոնք ե՛ւ
միայն ունեն, ե՛ւ յոյզ ունեն ու... նաեւ հասկանալի են :

Անահիտ ՍԱՀԻՆԵԱՆ

ՊԱՇՏՊԱՆՆԵՐԸ ՄԵՆԱԴՐՈՂԻ ԴԵՐՈՒՄ

Երիտասարդական պոեզիան մօտ տասը տարի է, որ ասպարէզ է իջել
ու տակաւին ճանապարհ չի քացել դէպի ընթերցողի սիրտը : Մինչդեռ այդ
ընթացքում մեր աչքն այնպէս ընտելացաւ նեղ տաքսիին ու մինի-յաւրկային,
որ եիմա էլ լայն փողֆերն ու երկար էզանցքն է մեզ սրտնեղում : Արուեստը
մօղայի այս օրէնքներից վեր է գտնում : Արուեստը, իսկական, լուրջ ու
ծանրակշիռ արուեստը սեփական օրէնքներն ունի. սրտեստը օրը-օրին տա-
րեցտարի, ասպարէզ իջնող ու հասակ արձակող ամէն մի սերնդի հետ զար-
քանում է, առաջ ընթանում : Եւ եթէ մեր երիտասարդացեալ պոեզիայի քա-
րեկամ ֆենագատները նրան վերագրում են ամենասպանիչ քերթիւնները՝
ասելիքի պակաս, մնամօրինակութիւն, անհատների սեփական դիմագծի բա-
ցակայութիւն, սպա պատճառը ուրիշ բան չի կարող լինել. քան այն, որ ե-
րիտասարդները բռնադատել են իրենց իրենց, չարաչար տանջամքների եւ
պատճառներով զնալ շարունակում են հագնել նեղ ու սուրֆիթ կօշիկներ (որոնց
պատճառներով զնալ շարունակում են հագնել նեղ ու սուրֆիթ կօշիկներ կադա-
մադան, ի դէպ՝ արդէն անցել է) եւ այդ նեղ ու սուրֆիթ կօշիկների կադա-
պրների մէջ սեղմելով սեփական ոտքերը, իրենց իրենց զրկել են ազատ ու
անկաշկանդ, բնական փայտածֆից : Իսկ կադապրները, վազուց յայտնի
ճշմարտութիւն է, արուեստի թշնամին են, ճշմարիտ արուեստագէտը երբեք
չի հագնել ու չպէտք է հագնի արեւէ տեղի ու ժամանակի կադապրի վրայ
չի ձեռած կօշիկ, լինեն դրանք լայնաֆիթ, լինեն նեղֆիթ, երկարանիտ, թէ
ձեռած կօշիկ, լինեն դրանք լայնաֆիթ, լինեն նեղֆիթ, երկարանիտ, թէ
պարզ չարապիներ : Արուեստի ու գրականութեան ճանապարհը սրբազան է
աւանդել ամէն մի իսկական գրող, ամէն մի իսկական արուեստագէտ եւ մա
համարել ամէն մի իսկական գրող, ամէն մի իսկական արուեստագէտ եւ մա
նախորդալ ուխտաւորի պէս, քաջիկ շտեմելով է սկսել ու աւարտել իր ճանա-
պարհը, որքան էլ այն փշոտ, որքան էլ փառալուստ է եղել :

Վախանգն ԿԱՐԵՆՑ

ՏԱՂԱՆԴՆԵՐԸ ԿԸ ԳԱՆ

Այսօրուայ գրական միտքը շատ է անհանգստացած մեր պոեզիայի վաղուայ համար եւ դա բնական է: Բայց անբնական մի երեւոյթ եմ նկատում, այնուամենայնիւ, այս ազմուկի մէջ, որ պատուում է ոչինչ չեղածի շուրջ:

Ասել, թէ նորից խախտուել են պոեզիայի չափանիշները, մի քիչ ճիշդ չի լինի, որովհետեւ շատ խաբուսիկ է այսօրուայ պոեզիայի վիճակը:

Երբ քանաստեղծն ասուած մարդը չի տառապում այլեւս տողի վրայ, չի մտածում լանդերի, տաղաչափութեան, բանաստեղծական հնարքների բաղադրանքների ուղղութեամբ, երբ շարադրում է արձակունակ ինչ-որ յոյզ (ոչ կոնկրետ), ինչ-որ հոգեմիջակ, ցանկութիւն կամ խոհ (նոյնպէս ոչ կոնկրետ), տաղանդ պէտք չէ, հարկաւոր է միայն գրագիտութիւն:

Ես այն կարծիքին եմ, որ իւրաքանչիւր տեխնիկական յօդուած, ջունգլիների ու սրճարանների, այգիների եւ հանդիպումների մասին պատմուող իւրաքանչիւր գէպք կարելի է այդ ձեւով գրել եւ վերնագրել:

Ինտելեկտուալ աշուղանութիւնը աւելի յետադիմական է, քան բուն աշուղութիւնը. երկրորդ գէպքում միամտութեան եւ պարզունակութեան մէջ երբեմն աւելի առկայ է կենսափիլիսոփայութիւնը, տողերի փայլատուկումը, քան առաջին գէպքում, քանի որ ինտելեկտուալների մօտ այդ էլ չկայ, կայ միայն սառը՝ մեքենայական ձեռքով գրած եւ ինչ-որ շատ հեռու տեղից լսած ձայների անբնական կրկնութիւն, չափազանց միօրինակ եւ անհասկանալիութեան մէջ տաղտկալի: Իմ ասածին կարող են փայլուն օրինակ հանդիսանալ Գրական քերթքում քանալէճի կարգով տպագրուած այսօրուայ խօսակցութիւնների շարժառիթներ ստեղծող հեղինակները:

ԳԷԱՐԳ ԷՄԻՆ

ԻՄ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Երբեմն այս կամ այն երիտասարդ բանաստեղծին կշտամբում են առ այն, թէ նրա գրածներն անհասկանալի են: Դժբախտաբար, դրա մէջ Յշմարտութիւն կայ եւ դա մեծ մասամբ գալիս է ինքնատիպութեան կամ օրիգինալութեան սխալ հասկացողութիւնից:

Անկասկած է, որ մի բանաստեղծ միւսից տարբերում է ո՛չ միայն եւ ոչ այնքան Յիւթով, ինչքան այդ միւսը իւրովի արտայայտելու կարողութեամբ, եւ ինչքան իրարից տարբեր ու ինքնատիպ բանաստեղծների՝ այնքան աւելի լաւ:

Սակայն այդ ինքնատիպութիւնն ու օրիգինալութիւնն էլ ունեն իրենց որոշակի սահմանը, որը ոչ այլ ինչ է, քան այն, թէ քո զգացածը, մտածածը, պատկերացրածն ու արտայայտածը բացի քեզանից հասկանալի՞ է մտեւ մի ուրիշի, թէ՞ ոչ...

Յայտնի է, որ ամէնից աւելի ինքնատիպ ու իւրօրինակ (այս դէպքում՝ արտառոց) մտքեր, զգացումներ ու պատկերացումներ ունենում են (եւ դեռումք արտայայտում) հոգեկան խանգարում ունեցողները:

Սակայն նրանց այդ մտքերն ու պատկերացումները՝ ինչպես էլ զու-
նեղ, ինքնատիպ ու հետաքրքիր, աւա՛ղ, ո՛չ արուեստ են եւ ոչ էլ քանա-
տեղծութիւն, որովհետեւ պատկանում են միայն եւ միայն մի մարդու եւ
հասկանալի, ըմբռնելի ու ընկալելի չեն ուրիշի համար...

Ամէն էութիւն ու ոգի արտայայտւում է միայն իրեն յատուկ եւ իրեն
բնորոշ ձեւով, եւ եթէ չլինէր «մոդային» հետեւելու վատ սովորոյթը, ինչ-
պէ՛ս կարող էր պատահել, որ յանկարծ երկու հարիւրից անլի պատանի ու
ազդիկ ինկուրաստորից նոր դարս եկած գտերի պէս ծալւոյալին մօյն ձայնով
ու նայմ ձեւով:

Ֆելիքս ՄԵԼՈՅԵԱՆ

ՏԵՍՈՒԹԵԱՄԲ ԲԱՆԱՍԵՂԾ ԶԻ ԾՆԻՈՒՄ

«Պոետական նոր սերունդը» տեսութեան հոգո՞ւմ անեց, թէ՛ բանաս-
տեղծական արտայայտութեան տարուց առաջ նախապէս հրապարակ հանեց պատ-
րաստի իր տեսութիւնը... Հարցադրումը մտացածին չէ եւ կանխակալ մե-
ղադրանք չի յարուցում՝ կա՛մ այս, կա՛մ այն, որովհետեւ ճիշդ սերնդի տե-
սութիւնը չբարձրացաւ տեփական բանաստեղծութեան հիմքի վրայ: Գրական
արժէք չներկայացնող մի քանի ոտանաւոր ազգայնուց յետոյ նորերը հա-
ւատամտարների միջոցով ազդարարեցին իրենց ժամանումը եւ տառադրե-
ցին գրական իրենց բմբուռները: Այդ ուղղակի եղաւ եւ մնում էր անկախել
միայն, որ տեսութիւնը կը ծնի բանաստեղծութիւն, իսկ այդ անկախութիւնն
էլ իր հերթին, թերեւս անհիմն չէր. արուեստագէտների ծննդաբերութեան
պատմութիւնը անլի շուտ բացատրութիւնների «օրինակափ» վարդացում է,
քան տրամաբանութեան ուղղադիր ընթացք:

Եղուարդ ԶՐԲԱՇԵԱՆ

ԳՏՆԵԼ ԺԱՄԱՆԱԿԻ ԶԱՐԿԵՐԸ

Այն անուանները, որոնք ամէնից շատ հալածուեցին մեր գրոյցի ժամա-
նակ, աչքի են ընկնում բանաստեղծական ընդունում ըմբռնումներից եւ կա-
նաններից երաժարուելու, հասարակութեանը նախադրելու ներկայանալու ճշգ-
տումով: Իբրեւ միտում, դա ի հարկէ, լաւ է, մանաւանդ, եթէ յիշենք, որ
բարձր ճաշակի տէր ըմբերցողին վաղուց են ձանձրացրել մաշուած պատկեր-
ներով եւ մակերեսային դաստիարակութիւններով լեցուն էպիգրամային բանաստեղ-
ծութիւնները: Բայց որքանով արդիւնաւէտ ու հետաքրքրեցիկ է այն ոգին,
որի վրայ կանգնել են մեր երիտասարդ բանաստեղծները. այս է հարցը:

Իրենց արձանագիտելի մէջ նրանք, ուղղակի քէ անուղղակի, յենում են
մի քանի տեսական դրոյթների վրայ (արձան, ի գէղ՝ արտայայտուեցին բա-
նավէճերի ժամանակ նրանց գրած յօդուածներում):

Ի հարկէ, դասականները մեծ գրել պէտք չէ եւ հմարաւոր էլ չէ,
քանի որ նրանցից ամէն մէկը գրսեւորել է իր գեղարուեստական ռեի քարձ-

ընդուն հնարաւորութիւնները: Ուրեմն, խօսք կարող է լինել ոչ թէ կյանակ պոնգիային նմանուելու, այլ միայն եւ միայն ճրա նուաճումները ստեղծագործարար շարունակելու մասին: Դժբախտաբար, մեր երիտասարդներից շատերը դա աւելորդ են համարում, կարծում են, թէ այսօրուայ հայ պոնգիան նորող է գորգանալ ազգային աւանդոյթներից դուրս, միայն նորագոյն մեղեդիստական ձեւերին հետեւելով:

Ինչ խոք եւ վնասակար մոլորութիւն է, որն իր հետ բերում է նաեւ պոնգիայի ազգային քովանդակութեան կորուստ: Իրօք, մեր շատ երիտասարդների բանաստեղծութիւններում գրեթէ ոչինչ չկայ, բացի հայերէն լեզուից, որը կապուէր ազգային միջավայրի, բնաւորութեան եւ հոգիբանանքեան հետ: Նրանց «բնարական հերոսը» ընդհանրապէս մարդն է՝ ժամանակի եւ սեփական անձի մասին քառական վերացական խոհերով եւ յեղեղով զգացմունքներով:

Այսպիսի վնասական անցման տեսական «հիմնադրում»-այն է, թէ մեր դարաշրջանում, գիտութեան եւ տեխնիկայի մեծագոյն նուաճումների հետեւանքով, էպոխ փոխում են մարդու մտածողութեան եւ աշխարհընկալման սկզբունքները, հետեւաբար, նաեւ գեղարուեստական հաշակն աւ բանաստեղծական պատկերացումները: Ինչ խօսք, տեխնիկական յեղաշրջումները վերջին հաշուով ազդում են նաեւ մտածողութեան եղանակների վրայ, բայց դա չի կարող լինել բացարձակ խզում անցեալից: Առաւել եւս անհիմն են բանաստեղծական նորարարութիւնը անմիջաբար տեխնիկայի զարգացումից բխողը:

Յատկանշական է, որ այդ սկզբունքով մեր երիտասարդ բանաստեղծները յաճախ հրաժարում են առեւտրական գեղարուեստական կառուցածքի բոլոր հիմնական տարրերից: Քիչ թէ շատ ամբողջական բանաստեղծական պատկերի, տրամաբանօրէն զարգացող խոհի կամ զգացմունքի տեղը գրաւում են իրականութիւնից շտապած առանձին տղաւորութիւններ, քաւարկում են յաճախ իրար հետ բոլորովին չկապուած երեւոյթներ, փաստեր, գծեր: Հեղինակները հրաժարում են նաեւ իրենց նկարագրութիւններից բխող նշանները: Ընդհանրացում, եզրակացութիւն կամ գնահատական:

Այսօր առկարական երեւոյթ է դարձել բանաստեղծական բոլոր «աշխարհայեալանութիւնների»՝ չիքմի, յանգի, տան սկզբունքների բանգումը: Ռմանք աւելորդ համարեցին նոյնիսկ կէտադրութիւնը, սկսեցին գրել առանց ստորակէտի եւ վերջակէտի: Բայց արդեօք այդ ամէնը այնպիսի «երկրորդական» բաներ են, որոնցից հնարաւոր լինէր այդքան հեշտութեամբ հրաժարուել:

Նման «էփոքերիմնաների» հետեւանքով յաճախ վերանում է բուն բանաստեղծութեան հասկացութիւնը: Ձի գգացում բանաստեղծական անհասկանութեան կազմակերպող դերը: Ստեղծում է ռուսաւորի կառուցման բարձրակի սխեմա, շարուն (յեղեղովկ ապրումների եւ մտքերի շարան), որի մէջ դժուար է գտնազանել տարբեր հեղինակների ձայները: Այդ, «ինքնուրաշման համար պայքարող մեր երիտասարդ բանաստեղծները չեն նկատում, որ նրանք յաճախ շատ նման են իրար, գրում են նոյն ձեւով, ռմով, յար եւ նման հնարքներով: Դա չի կարող չանհանգստացնել ինչպէս բնագիտութեանը, այնպէս էլ իրենց՝ բանաստեղծներին:

(«Մովկտական գրականութիւն» — 1971, թիւ 2)

ՎԵՏԵՐՈՐԻ ՀԱՐՑՈՒՄԻՆ ՊԱՏԱՍՆԱՆՆԵՐԸ

«Պարուն» ածադրի յանձնարարութեամբ, երկատարող լրագրող Հայկ Մարտիրոսը ներկայացած է Հայաստանի գրականության միջոցով տարբեր ներկայացուցիչներուն հետ տեղեկաց յիշմամբներն, ներկայանալուն գրական առաջին քայլերուն, գրական խնամքներուն հետ լուսավորչի ստեղծագործութիւններուն վերաբերող հինգ հարցումներ ուղղած է, իսկ վեցերորդը հետ վերջին հարցումը կը վերաբերի գրական նոր սերունդին՝

— Ի՞նչ կ'ուսելիք գրական նոր սերունդի մասին:

Տրուած ըլլալով, որ Վեցիներն ներկայ համարին մէջ լայն տեղ մը յատկացուած է Հայաստանի գրական նոր սերունդին, յարմար նկատեցինք առանձնացուած վերջ հարցումին պատասխանները խմբել ու ներկայացնել ընթերցողին:

Ս Ի Լ Վ Ա Կ Ա Պ Ո Ւ Տ Ի Կ Ե Ա Ն

— Ողջունելին գրական նոր սերունդի մէջ այն է, որ նա աշխատում է քայլել ժամանակի հետ՝ ճիշդ, արտայայտչական միջոցների աշխարհաեականացման տեսակէտից. որ նա պոկուում է քառասուն-յիսունական թուականների մեր պահգիշատում քառական տիրապետող դարձած հնամենի, կեղծ-ժողովրդական, ժամանակավրէպ ստանալորի մթնոլորտից: Ասկայն պակ-ւելով սրանից, նոր սերունդը դեռ կարծէք թէ գտնուում է Վեցիներին տեսնելիք վիճակում: Վստահ եմ, որ սա երկար չի տևի, որ նոր, աւելի ճիշդ նորի մթնոլորտը կը ստեղծուի՝ հայ դասական բանաստեղծութեան հիմքի վրայ բարձրացած, ազգային մտածողութեամբ յամրորէն շաղտխուած, քայքայե-ծամանակից, կիբեռնիտիկայի եւ տիեզերագնացութեան դարի բոլոր ճիւղ-փորձացիաները ընդունող եւ պատասխանող, իսկապէ՛ս երկատարողական պոեզիա:

Խ Ա Չ Ի Կ < Բ Ա Չ Ե Ա Ն

— Միանգամայն առողջ սերունդ է: Ունի (հիմնականում՝ բանաստեղծական թեւը) ընթերցողին զարմացնելու, ապշեցնելու որդի միտում, բայց դա միանշանակ է, հասակի հետ կ'անցնի: Արձակը, անշուշտ, աւելի ուշա-խաջնող է, այստեղ արդէն կան անհասկանալիքներ:

Ա Ղ Ա Ի Ն Ի

— Գրական նոր սերունդը շատ քանով մեզնից լաւ է ու մեզնից քաղ-
բայիս: Զարգացած, բանիմաց, հարուստ իմտելիկտով մի սերունդ է, որին
պէտք է հաւատալ, պէտք է սիրել ու գոյրգուրել:

Ն Ա ժ Ա Կ Գ Ի Ի Ն Ն Ա Ջ Ա Բ Ե Ա Ն

— Նորերը միատարր չեն: Նրանց մէջ կան «տղերք», կան «տղաներ»,
կան «յարգելի ընկերներ»: Յիսուսից շատ են իմ ճանաչածները: Անունները
չեն տալիս, որ, Աստուած չանի, որեւէ մէկին մոռանամ: Բայց, այնուամե-
հայեւ, զրանց մէջ կան արդէն ձեւաւորուած բանաստեղծներ:

Ես սիրում եմ նորերին, չեմ քարկանում անգամ, երբ նրանք ստեղծ-
ատէպ բանաստեղծներին կախում են ծառերից եւ գեղարուեստական արձակն
ու սպիտակ ոտանաւորը խառնում իրար: Բանաստեղծութեան տեղիւրաց-
ցիայի վտանգը նրանց որոնումների մէջ չէ, թէեւ տաղանդաւորների պոլից
քարչ են գալիս տառնեակ խաբուածներ ու խաբել ցանկացողներ:

Իմ կարծիքով, այս սերունդն արժանի է դարին՝ առաջին հերթին իր
խելքով եւ անհանգստութեամբ:

Ա Բ Շ Ա Ի Ի Բ Դ Ա Բ Բ Ն Ի

— Գրական նոր սերունդի մագիմ շատ քան կ'ասէի: Զգիտեմ ինչու, երբ
խօսք է բացւում զբաղան նոր սերնդի մասին, ես միշտ պատկերացնում եմ
սոկինեակ արտ, ուր այնքա՛ն ճնշոյշ ու քաղցր երգում են արտայայտները: Եւ
այդ երգը յուզում է հոգի մշակին ու հնձուարին, իմա՝ ժողովրդի՛ն: Բայց
երբ անիմ մայում ես արտի չորս կողմը, ինչ-որ տեղ նկատում ես փուշ ու
տատաակ, իսկ նրանց մէջ՝ մօտակայ լեակից կամ գետակից «հիւրախաղերի»
եկած գորտեր, որոնք ամէն կերպ կեկորդ են պատռում՝ իրենց կեկոցներով
արտայայտների երգը խլացնելու նպատակով: Բայց չի ստացւում, քէեւ ամանք
եռանդագին «տպացուցում» են, որ գորտերի կեկոցը ա՛յն մօրն է, որը կ'իշ-
խի վաղը: Զեմ հաւատում:

Նոր սերունդն, ընդհանրապէս, հրաշալի սերունդ է, հոգին կապում
եւ ռաւանտիկ, կառուցող եւ երագող, ազնիւ ու մաքուր, ջանասէ՛ր, մուխ-
ւա՛ծ, հերոսակա՛ն: Այդ են վկայում ե՛ւ մեր սահմանապահների սխրանք-
ները, ե՛ւ մեր տիեզերագնացների թռիչքները, ե՛ւ մեր երիտասարդ բանուոր-
ների ու կալոնտեսականների սպիւ աշխատանքը: Թշնութիւններ: Բացե՛ր:
Խորք քարքե՛ր: Կա՛ն, ի հարկէ: Բայց դրանք քնաւ էլ թնորոյ չեն ե՛ւ ոչ էլ
ննջող: Այսպէս կոչւում աւանգարտիգով վտանգ կամ ախտ՝ չի նկատւում:
Բայց կայ մէկ ուրիշ երեւոյթ, որը, իմ կարծիքով, թնորոյ չի ընկել հա-
ղորդ, այնուամենայնիւ, վտանգ է, քէեւ, կրկնում եմ, ո՛չ սպառնացող:
Բանն այն է, որ երիտասարդների մի մասը, ես կ'ասէի՝ չնչի՛ն մասը, ընկնում
է վատ ազդեցութիւնների տակ, պնկւում հարագաւ ժողովրդից, եռանում

նախորդների ու աւագների հրաշալի աւանդութիւններից ու սովորոյթներից, կամայ թէ ակամայ դառնում պարտաբայ՝ եւ անբան, մեծ ու հերոսական գործերից հեռու, մի տեսակ անփայտ ու անտարբեր, անփոփառած անփախան փախրիկ ու մութ պատեանում: Իմ խօսքը այն պատանիներն ու երիտասարդների մասին չէ, որոնք կոտորէն տարւում են ճագերով ու մոզաներով, երբեմն էլ նոյնիսկ փորձում բնորոշեցնել հիպոթեզներն, «կինոաստղերին» ու արկածախնդիր կռոււթայներին: Եթէ կ'սկզբնապէս վստահուաւ չեն եւ շատ են խելքի գալիս՝ շրջապատի եւ հարազատների ազդեցութեան տակ: Դրանց կազմին կան պատանիներ ու երիտասարդներ, որոնք մի տեսակ անհոգ են, անտարբեր, անփայտ եւ կեանքի բոլոր երեւոյթներին՝ թէ՛ լուս, թէ՛ վառ, մայում են մտանքի արանքով եւ դատում որպէս յէզոք գոտու քաղաքացիներ: Բարեբախտաբար չնչին է նրանց թիւը: Եւ կ'ստէ՛ի՝ շա՛տ չնչին: Դրանց համար հասկանալի չէ, օրինակ, Քասախլոյի, Մատրոսովի, Յունաճի Աւետիսեանի, Ջոյսի եւ շատերի անճնադատութիւնը, Նելսոնի եւ Պոկրիշկինի հերոսութիւնը եւ նրանց փառքի յանդիմանութիւնը: Թերեւս այս մասին յղեմք: Ձե՛ռ, որ, ինչպէս արդէն ասացի, չնչին է թիւն այս խորք գաւակների: Եւ այս մասին երկար մտորեցի: Ի վերջոյ եկայ այն եզրակացութեան, որ պէտք է խօսել նաեւ այս մասին: Խօսել՝ խրատելու համար, դաստիարակելու համար, փրկելու համար, երջանիկ դարձնելու համար:

Գ Ո Ւ Ր Գ Ի Ն Բ Ո Ւ Ե Ա Ն

— Ամէն մի դրական նոր սերունդ «հին» շարունակութիւնն է: Գրական սերունդ, բայց ոչ ամէն մի նոր սերունդ: Որովհետեւ «հին» սերնդի գրողները, որոնք խոր հետք են թողել մայրենի դրականութեան մէջ եւ գիմարեցել են ժամանակի քննութեանը, կարող են աւելի նոր եւ աւելի արդիական լինել, քան այսօրուայ (տարիքային իմաստով) ամենաերիտասարդ գրողը: Եղիշէ Ջաւենցը կէս դար ատալ է սկսել իր դրական կեանքը: Այսօր եւ դժուարաւորում եմ հաստատել, թէ մեր ժամանակակից բանաստեղծներից ո՛վ է առաւել նորն ու առաւել ժամանակակիցը, քան Ջաւենցը:

Ուրեմն, դրական նոր սերունդ հասկացողութիւնը պայմանական է: Ճիշդը, ըստ իս, դրականութեան մէջ նորը բերելն է: Տարեքայինը վճռական չէ:

Հարցը այն չէ, թէ երբ է գրողը հրատարակել իր երկը, այլ թէ որքանով է նա խորամուխ եղել իր ժամանակի մէջ եւ իր ժամանակը վերադարձրել արուեստի բարձր մակարդակով: Նա գրել է միայն այսօրուայ համար, թէ իր ստեղծածով կարողացել է վազուան ներկայանալու բարձր իրաւունքը նուաճել:

Միշտ նոր կոչուելու համար ամէն մի գրող դրական երկարակեցութեան հօգործութիւնը պիտի ունենայ:

Անկասկած, ժամանակակից Հայ դրականութիւնը հարստացել է նոր ու յուսատու անուններով: Դա առաւելապէս զգալի է արձակում, մասամբ՝ պոեզիայում եւ նուազ չափերի դրամատուրգիայում:

Եւ անուններ չպիտի տամ: Թող այդ անուններն ընտրի ամենակարող ժամանակը: Միայն կը կամենայի ընդգծել մի հանգամանք. երբեք ոչ մի ժամանակներում գրողից չի պահանջուել կենքի նկատմամբ այնպիսի խո-

բաժնական հայեցք, քննարկածան ուժ եւ բարձր ինտելիկետ, ինչպէս
այսօր: Ինչո՞ւ: Որովհետեւ մեր օրերում աշխարհ եւ միջավայր հասկացու-
թիւնները շատ են լայնացել եւ բարդացել: Մարդը այսօր հոգաւորին չի
հայում այլեւս իր տան կտուրից, այլ՝ տիեզերական բարձունքներից: Նրա
հայեցքը այսօր հետեւներն է ուղղուած: Ուրեմն եւ գրական նոր սերնդի
առաջ ըստ այնմ էլ այսօր շատ պատասխանատու խնդիրներ է գրուած. իր
բարդ եւ անհնդգիտ ժամանակը մեծ հաշուով ներկայացնել ապագային,
նոյն ժամանակի քննութիւնը բռնելու եւ նոր կոչուելու համար: Մենք հա-
ւատացած ենք, որ ինչպէս ամէն մի գրականութիւն, այնպէս եւ հայ գրա-
կանութիւնը կ'ունենայ իր արժանի այդ նորը եւ իր ստեղծած արժէքներով
կը յարատեւի:

Նա կը լինի բարձրաթիւք, նոր Հայաստանի այդ նոր գրական սե-
րունդը:

Ա Ն Ա < Ի Տ Ս Ա < Ի Ն Ե Ա Ն

— Գրական մօր սերնդի մասին ի՞նչ կարող եմ ասել: Գրական երիտասարդ
սերնդին եւ մաշնմանում եմ այն քանի համար, որ նա ասպարէզ իջու ած-
նամ մատ աւելի նպաստաւոր ժամանակ: Նրա գործունէութեան եւ ինքնա-
զորութեան հնարաւորութիւնները անհամեմատ մեծ են: Նա՞ գրական երի-
տասարդ սերունդը, հազարակցուում է ո՛չ միայն Սովետական Միութեան
ժողովուրդների գրականութեան նախնականներին, այլեւ աշխարհի միւս փոքր
ու մեծ ժողովուրդների ստեղծած հոգեկան գանձերին անկի, քան նրան նա-
խորդող սերունդը, դրանով հարստանում է նա, ընդարձակում իր աշխար-
համայնադասիւնը: Պատահական բան չէ, որ այսօր իբրեւ ժողովրդ
անող սերունդը հանդէս է գալիս գրական անհամեմատ աւելի բարձր մակար-
դակով, քան նրանց նոյնքան օժտուած նախորդները: Մեր ծրիտասարդ ար-
ժանագիրների առաւել օժտուածները գրական ասպարէզ իջան իբրեւ պատ-
րաստի գրողներ: Գրողի համար կեանքի մանաշաղութեան աղբիւք է հանդի-
սանում ո՛չ միայն կեանքն ինքն, այլեւ դասական ու ժամանակակից գրակա-
նութիւնը: Եւ յիշում եմ, թէ ծերունի Դերենիկ Դեմիրճեանը ինչպիսի հե-
տադրութեամբ էր հետեւում իր ժամանակի երիտասարդական գրականու-
թեանը, ո՛չ միայն նրա համար, որ հետադրութիւն էր իր համար իմանալ, թէ
ի՞նչ մօր շնորհալի ուժեր են ասպարէզ իջել, այլ նաեւ դրանով էր հետեւում
կեանքի շարժմանը՝ ոչ թէ գրական կեանքի, այլ բուն իսկ կեանքի: Իրար
սերնդակից, թէ ոչ սերնդակից գրողներից խրաֆանչիւրի ճշմարիտ արուես-
տի գործերը իր կողքին ապրող եւ ստեղծագործող ամէն մի գրողի համար
հանդիսանում է կեանքի մանաշաղութեան լրացուցիչ աղբիւր: Քո ժամանակա-
կից գրողների ամէն մէկը, երիտասարդ, թէ ոչ երիտասարդ, իր դիտակէտից
սեռածը հազարգում է քեզ եւ դա զուտարում է քո տեսածին եւ նպաստում
տեսողաշունչ ընդարձակելուն: Եւ շատ կը զարմանամ, եթէ մեր գրողներից
ոեւէ մէկը, երիտասարդ, թէ ոչ երիտասարդ, ասի, թէ վարդգէս Պետրոս-
եանի, Հրանտ Մաքսիմովի, Զորայր Խալափեանի, Մուշեղ Մանուկեանի,
Աղասի Այվազեանի, Ռուբէն Յովհաննէսեանի եւ միւս շնորհալի գրողների
ընթերցանութիւնը իրեն ոչինչ չի տաւ: Ուրիշ ոչինչ եթէ չլինի, նրանք
մտածելու ճիւղ են տալիս, իսկ դա էլ քիչ չէ, դրա համար էլ պէտք է
նրանցից շնորհակալ լինել:

Եւ ամբողջ սրտով Վաղբաւմ եւ մեր երիտասարդ ստեղծագործողներին ուժերի բազմապատիկ ծագելում, դրանով բազմապատիկ ուժ տաւած կը լինեն մրանք իրենց սերնդակից եւ ո՛չ սերնդակից այն բոլոր գործընկերներ, որոնց հետ միասին վիճակուած է կրել մեր գրականութեան ծանր ընդդէմը։

Անհեթեթ է ամենակամայի բան է սերունդներին իրար հակադրելը։ Մենք լծուած ենք մի ընդհանուր գործի, մենք պէտք է մէկս միւսիս զօրացընենք, մէկս միւսովս զօրանանք, անկախ մեր գրական նախասիրութիւններից, որի համար մէկս միւսիս իրաւունք չունենք կշտամբելու։ Իսկ դրա համար պէտք է փոխադարձ յարգանքով աւ սիրով հետեւենք միմեանց գրական շայշերին, չզլանանք նաեւ աներաժեշտութեան դէպքում դառն ճշմարտութիւններ ասելու իրար, ի սէր մեր գրականութեան եւ ի սէր իրար։

Վ Ա Հ Ա Գ Ն Կ Ա Ր Ե Ն Յ

— Գրական նոր սերնդի ձայնը ինձ համար խորթ չէ, ես գտնում եմ այդ սերնդի լաւագոյն բանաստեղծների մէջ (Ռ. Դաւոյեանի, Լ. Դուրեանի, Եռ. Սահակեանի, Յովհ. Գրիգորեանի, Հ. Խղոյեանի եւ ուրիշների) իմ հետաքրքրութիւնները, եւ ամենակարեւորը, սիրում եմ այդ բանաստեղծներին այն բանի համար, որ նրանք ունեն խոսքի խնայողութիւն, աւելի ճիշդ՝ բառի, որ նրանք աւելի համարձակ են պոետական մտածողութեան մէջ, ձեւի, լապի, թեմաների ընտրութեան։ Ինձ յատկապէս դուք են զայնս արձակագիրները, եւ նրանց ստեղծագործութիւնների մէջ տեսնում եմ պետական մտածողութիւն, անհաշտութիւն անտարբերութեան, կեանքի եւ ձեւերի լրճացման եւ այլ խնդիրներում։ Կարող եմ համարձակ տեսլ, որ այնպիսի արձակագիրներ, ինչպիսիք են Վ. Պետրոսեանը, Մ. Մնացականեանը, Հ. Մաթեոսեանը, Ռ. Յովսէփեանը, Յովհ. Մելքոնեանը, Մ. Մանուկեանը, Գ. Աբրահեանը, Զ. Խալափեանը, Գ. Զէյթունցեանը եւ ուրիշներ (արձակագիրները աւելի ձոյլ են, եւ կարելի է աւելի չափ անուններ տալ, քան բանաստեղծներին), կարող են միայն վկայել սովետական արձակի լրջութեան, նրա մեծ հետանկարների մասին։ Զէ՞ որ արձակը պոետական ամենաբարդ ժանրն է, եւ լաւ է, որ երիտասարդական արձակը լաւ հիմքերի վրայ է։

Վ Ա Հ Ա Գ Ն Գ Ր Ի Գ Ո Ր Ե Ա Ն

— Գրական նոր սերնդին յատուկ են պոպուլյար տրոպիւնը, իրականութեան աւելի ընդհանրացուած պատկերումը, հեղինակային անհատականութիւնը արպէտ ստեղծագործական նախաիմք ընդունելը, առաջ քաշուած հարցերը հագեցեալութիւն լուծելը։ Բնորոշ է գեղարուեստական խօսքի սեղմութիւնը, ոչ թէ ռեալիզմ, այլ բառի, նախադասութեան տարադրութեան մեծացման առումով։ Նայենք բնորոշ է նաեւ փաստերի կուտակումից խուսափելը։ Փաստերի կուտակումը լոկ իրականութեան բազմակողմանի ու ճշմարտացի պատկերման պատրանք է ստեղծում, քայց դրա տակ գրեթէ միշտ կորչում է գլխաւորը։

Գրականութիւնը ապրում աւ շնչում է էֆսպերիմենտով, մշտական արժեքումով: Մեզ մօտ այդ բանը աւելի քան երբեւիցէ մկատելի է այսօր: Էֆսպերիմենտը խոհանոցային տերմին չէ, իսկ որոնումը մօր արակի միակ մատակարարումն է: Փամանակաշրջանը բերում է իր պրօքլեմները եւ արտայայտական մօր միջոցների արժեքումը, մայնիսկ ոչ թէ արժեքումը, այլ ծնունդը, ներքինից քեկադրումած երեւոյթ է:

Ն Ո Ր Ա Յ Ր Ա Դ Ա Լ Ե Ա Ն

— Այն սերունդը, որին եւ պատկանում եմ, կարողացաւ ցոյց տալ, թէ ինքը ինչպէս է մտածում: Մօ որքան լաւ է, ախրան էլ՝ քիչ: Քիչ է, որովհետեւ եւս դեռեւս պէտք է յազթահարէ իրեն ամբողջապէս հաստատելու դժուարին եւ ամենադժուար արդեւքը:

Ինչ վերաբերում է զմեզանից յետոյնին, որոնք արդէն քայլում են, ապրում, այդ ամենանորերը (յատկապէս արձակում) առայժմ կրկնում են մեր միայն սխալները: Մաւառում են երկնքում, մոռացած երկիրը՝ իր անհամար ուրախութիւններով եւ տխրութիւններով: Նրանք պէտք է հարաւորին շատ արագ գտնեն նոր ճանապարհ: Եթէ այդ ճանապարհը չգտնուի, ապա դուցէ նման բովանդակութեամբ յաջորդ հարցազրույցի ժամանակ ներանց մոռանան:

Հ Մ Ա Յ Ե Ա Կ Ս Ի Ր Ա Ս

— Իմ հասակի գրողը, բնականաբար, խորին հետաքրքրութեամբ եւ սիրով է նայում տնօր գրական մօր սերնդին:

Ամէն մի գրականութիւն իրաւունք է նուաճում անկաւ եւ յարատեւելու, եւ այն շարունակ քարմանում է մօր ստեղծագործութիւններով: Նօր գրական սերունդը մի առաւելութիւն ունի մախարդ սերնդի մկատմամբ: Եւ այստեղ ի մկատի չունեմ ուսման հնարաւորութիւնները, կենցաղային յարմարութիւնները, շատ բան տեսնելն աւ առանձնաշնորհները, այդ բոլորը լաւ են:

Եւ ի մկատի ունեմ այն, որ մօր սերունդը, շնորհիւ մեր կուսակցութեան լինելեան ճաղաքականութեան, կարող է եւ ստեղծագործում է աւելի ռմկաշկանդ պայմաններում, իսկ դա շատ կարեւօր գրական է, որ ամէն մի ճշմարիտ ստեղծագործող իր գործի մէջ ներդնի իր ունակութիւնների բոլոր հնարաւորութիւնները:

Բարի գալուստ եւ բարի երբ գրական մօր սերնդին:

Վ Ա Հ Ա Ն Գ Ր Ի Գ Ո Ր Ե Ա Ն

— Երիտասարդութիւնը իր ժամանակաշրջանի կամ դարաշրջանի օրինական ժառանգորդն է, որ եկել է եւ իր խօսքը պիտի տա: Այդ ժառանգորդութեան լինելն չէ կարող: Խօսքը կոնկրետացնելով մեր գրական նօր սերնդի

ժառանգելով իր նախորդների գրական հարստությունը, նա փորձում է ստեղծել նորը՝ իրենը, յննուելով անցեալի և ժամանակակից գրական ձևերի վրայ: Ովքեր կը փորձեն զանց առնել այդ հանգամանքը, չարաչար կը տխրուեն: Մենք ունենք եւ արձակագիրներ, եւ բանաստեղծներ, որոնք չհեռանալով անցեալի գրական տրագիդիաներից, ստեղծում են նորը, իրենցը: Գուցէ դա բաւականաչափ պարզ չի երեւում, բայց այդ պրոցեսը կայ, ընթանում է, և դա է էականը. Բայց կան երիտասարդներ, որոնք ուզում են օր առաջ աչքի ընկնել իրենց գրական շնորհաբույսերին: Նրանց խիստ դուր են գալիս փքուած տողեր, կոտորտուած մտքեր, շուռ տուած պատկերներ ևւ երբեմն էլ անպատշաճ արտայայտութիւններ, (զաւ գլխաւորապէս նկատելի է ոտանաւորների գրողների մօտ): Կան աշակերտներ, որոնք վերելից են նայում մեր անցեալի ևւ ժամանակակից բանաստեղծների ու գրողների վրայ ևւ մոլորուած են այն աստիճան, որ կարծում են, թէ իրենք գրական նորարարներ են ևւ մարդիկ իրենց չեն հասկանում: Բայց զաւ անստուղչ, «նորարարութեամբ» տառապելու ևւ վատ ազդեցութիւնների արդիւնք է: Եւ դա չպէտք է ոչ զարմացնի ևւ ոչ էլ վշտացնի մեզ: Գրական վերելքների ևւ շրջադարձների ժամանակ միշտ էլ տեղի են ունեցել նման երեւոյթներ ևւ իսկոյն անյայտացել են:

Երիտասարդ գրողը որքան մօտ կանգնած լինի հայ գրականութեան կենարար ահուեքներին, նրա գրութեանքներն այնքան կենսաթով ու զուարթ կը լինեն:

Ա Ր Ե Ի Շ Ա Տ Ա Ր Ա Գ Ե Ա Ն

— Գրական մօր սերմնի վրայ ընկած է մեծ պարտականութիւն: Ինչպէս միշտ, մօրերը պէտք է մեր հիմաւորց գրականութեանը տան ոտեղծագործական քարմ աւիշ ևւ մօր, կենսատու գրգիռներ:

Ա Ո Ւ Գ Վ Ի Կ Դ Ո Ւ Ր Ե Ա Ն

— Սիրում եմ նրա յախուռն թարմութիւնը, բայց դէմ եմ այն վերացականութեանը, որը նոյնպէս յախուռն է:

Նոր սերնդից ինձ ամէնից առաւել սրտամօտ են ևւ յուզում են Արմէն Մարտիրոսեանը, Դաւիթ Յովհաննէսը ևւ Յովհաննէս Գրիգորեանը:

Սիրելով հանդերձ, նրանց ցանկանում եմ, որ նրանց պոետական յուզմունքը տեսնեմ զուլալուած:

(«Գարուն», 1970, քիւ 11)

Ի Ն Չ-Ը

Ի Ն Չ Պ Է ՍԻ-Ը

Ե Ի Ո Ր Պ Է Ս-Ը

(ԶՐՈՅՑ ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿԻ ՇԵՏ)



— Ե՞րբ եւ ինչպէ՞ս է՛ք սկսել բանաստեղծութիւններ գրել: Ի՞նչը մզեց բանաստեղծութիւն գրելուն: Ե՞րբ եմ տպագրուել Ձեր առաջին գործերը, արտի՞ստ, ի՞նչ հանգամանքներում:

— Բանաստեղծութիւններ սկսել եմ գրել մանկական հասակից, 11 տարեկանից, բնաւ որեւէ իմաստ չգնելով նրանց մէջ: Տարօրինակ ձեւով իմ առաջին տառնաւորը գրել եմ Տուրգենեւի «Առաջին սէր» պատմութեան զարգաց յետոյ: Շատ անբացատրելի բան է. ի՞նչ եմ հասկացել այդ պատմութեան մէջ: Ինչպէ՞ս է ստացուել, չեմ յիշում, միայն դիտեմ, որ նրա աղղկեղութեան տակ եմ գրել իմ առաջին տառնաւորը:

Յետոյ գրել եմ, ինչպէս ընդունուած էր ժամանակին, ըստ օրացոյցի՝ Յունուարի մէկ, Մարտի ութ, Մայիսի մէկ, Նոյեմբերի եօթ, բայց ոչ ոք չի իմացել, որ տառնաւոր եմ գրել եւ ոչ մէկին իմ գրածը ցոյց չեմ տուել, որտառնաւոր գրելը համարելով իմ՝ իրրեւ անհատի ամենաթաքուն, ամենաբացական, ամենաքմական արարողութիւնը: Եւ ինձ թւում է, ով չուեր այդ գրացումը, նա կամ դրամու է, կամ կիսադրող:

Եօթ-ութերորդ դասարանում ես որոշեցի մի չտեսնուած գործ կատարել՝ հայ ժողովրդի պատմութիւնը չափածոյ չարագրել, եւ սկսեցի լրջօրէն գրել: Դպրոցից յետոյ համալսարան ընդունուեցի, որ այդ զաղգային սխալագործութիւնը իրագործեմ: Բայց, ինչպէս եւ պէտք էր սպասել, դրանից ոչինչ չստացուեց եւ գրածս այրեցի:

Գիւղում դիտէի Եղիշէ Զարենցի անունը: Սուրբաթեանի դասադրքից դիտէի Զարենցի մասին, որ շուայ գրականութեամբ զգնաւարմ է՝ խանջեանի խօսքով ասած: Իսկ Սուրբաթեանի խօսքերն էլ անդէր դիտէի. «Ձաքնեցի ինքզինքը համաշխարհն է, մտիւնիքը՝ միջազգային»: Ուստի շատ ցանցի,

երբ իմացայ, որ Չարենցի գրքերը հանելու են դրադարանից, եւ «Գիլ» նա-
մադրանքի մի օրինակը գողացայ ու տուն տարայ: Մինչեւ լսյա կարգացի
գիրքը, չհաւատացի ո՛չ Պանջեանին, ո՛չ Սուրխաթեանին, որովհետեւ Չա-
րենցը, ըստ իմ ճաշակի, բնաւ բանաստեղծ չէր: Երբ համալսարան եկայ,
այս անգամ նորից յոյժ գաղտնի, որ իսկապէս մի կեանք արժէր, կարգացի
Չարենց, կարգացի եւ հասկացայ, որ ինչպէս եւ, այնպէս էլ հրանք, ուժ բա-
նաստեղծ են համարել, բանաստեղծ չեն: Դրանից յետոյ մնտկանապէս հա-
մոգուեցի, որ բանաստեղծ չեմ եւ: Եկեցի դրադարանը բանասերութեամբ, դի-
տակցաբար շարելով ոչ մի տող:

Երեւել Չարենցն ինձ սպանել էր, յետոյ յարութիւն տալու թաքուն
մտադրութեամբ:

Երկու տարի ոչինչ չգրելուց յետոյ, անկախ իմ կամքից, պարզապէս,
բնադժօրէն, եւ նորից ակեցի ռոտմաներներ գրել եւ տեսայ, որ բոլորովին
ուրախ եմ: Եւ իմ առաջին լուրջ փորձերը գալիս են Չարենցից, ապա՝
Սիւսանթոյից ու Վարուժանից, որոնց, բնականաբար, նոր էի կարդում:
Գրական այս փորձերին էլ ոչ ոք տեղեակ չէր, բացի մէկ-երկու շատ մոե-
րիմ մարդկանցից: Այդպէս իմ գրական առաջին փորձերը, իմ կամքից ան-
կախ եւ հակառակ իմ կամքի, ընկան Ռուբին Չարենցի ձեռքը, որ այն ժա-
մանակ ձեռք ամսագրի խմբագիրն էր, եւ նա ապագից երեք բանաստեղծու-
թիւն 1942 թուականին, մեր կեանքի ամենածանր տարում:

— Դուք ասացիք, որ Յայտապետ Երեւել իմաստ չէիք դնում Ձեր աստ-
նադրման մէջ, գրում էիք հեմց այնպէս: Եւ դա եսակնալի է, երբ միտով
ե՛մք ամենում տարիքը. 11-12 տարեկան երիտան ի՞նչ իմաստ պիտի դնէր իր
գրածների մէջ: Բայց հետագայում եւ ընդհանրապէս ի՞նչը Ձեզ մեզ քա-
նաստեղծութեան եւ ինչի՞՞ էք ձգտում պահպանում:

— Պոեզիան մարդկային ինքնարտայայտութեան ձեւերից մէկն է,
մարդկային խօսակցութեան ձեւերից մէկը, ա՛յն խօսակցութեան, որ մար-
դուն տարբերում է կենդանուց: Կենդանիներն էլ դա ունեն, որ արտայայտ-
ւում է ծըլլիցով, մայրենով, բառաշով, մի յատկանիշ, որ որոշակի երեւում
է նաեւ երեխայի մէջ: Դա բնագրական է, ենթագիտակցական: Երեխան
լաց է լինում այն պատճառով, որ ասելիք ունի՝ կամ ջուր է ուզում, կամ
հաց, կամ այլ բան: Իսկ հասուն մարդու համար (մանաւանդ ստանաւորով,
այսինքն՝ անհորմալ, ոչ բնական ձեւով) խօսք ասելը ենթադրում է միայն
մեծ աւելիքի պահանջ: Եթէ չկայ այդ մեծ, ընդհանուրի համար կարեւոր
ասելիքը, բանաստեղծութիւնը դառնում է մկան կերած մի ընկոյզ, երբ ըն-
կոյզի միջուկը չկայ, մնացել է միայն փուչ կեղեւը:

Նա Տոլստոյը մի ասելով ասել է, որ ասելիք ունեցողի համար ոտա-
նաւորով խօսելը նման է այն մարդուն, որ արօր է անում պարելով, փոխա-
նակ մանը բռնելու: Տոլստոյի այս խօսքը շատ անգամ է օգտագործուած
ոտանաւորի դէմ, որ ճիշդ չէ: Բանն այն է, որ Տոլստոյը դա ասել է այն
բանից յետոյ, երբ երեք անգամ փորձել է իր «Կոզակներ» վիպակը իրրեւ
պոեմ գրել եւ եկել է այն եզրակացութեան, որ նիւթը չի տեղաւորում ոտա-
նաւորի մէջ: Տոլստոյը հասկացել է, որ ինքը բանաստեղծ չի: Բայց դա-
նից ասած հասկացել է, որ գրողը նրա համար է, որ իր ասելիքը ասի: Ու-
րեմն՝ Տոլստոյի խօսքը ոչ թէ ստանաւորի դէմ է, այլ ասելիքի օգտին:

Իսկ ի՞նչ ասել է ասելիք բանաստեղծի համար: Ասելիք ունեն բանու-
րը, գիտնականը, երեխան: Ի՞նչ է տարբերութիւնը: Ինձ թւում է, բանաս-
տեղծի եւ գիտնականի գործը տրամադծօրէն տարբեր են ու հակոռակ: Եթէ

յրանք՝ դիտեցականները, ուղղում են ԱՇԽԱՐՀԸ ԲԱՑԱՏՐԵԼ, բունաստեղծն ուղղում է ԱՇԽԱՐՀԸ ՊՆԱՀԱՏԵԼ, Իսկ դնահատելու մի շափ ու կշիռ կայ՝ ճշմարտությունը, որ չի կարող լինել յուրեքական, եւ, փառք Աստուծոյ, յուրեքական չէ. թէ չէ կեանքը վաղուց մեռած կը լինէր։ Ըշմարտությունը չի կղել, չի կարող լինել ո՛չ պաշտօնական, ո՛չ կանխորոշեալ, ո՛չ քարացած։ Այո՛, բանաստեղծը ճշմարտութիւն որոնող է, եւ դա վաղուց է ասուած, բայց եւ աւելին. ո՛չ միայն որոնող, որ կրաւորականութիւն է հնթադրում, այլեւ զարնող, որ կեանքին նուիրարեւում է պարտադրում։ Առանց զբա բանաստեղծ ո՛չ եղել է, ո՛չ էլ կը լինի. վկայ՝ Համաշխարհային գրականութիւնը։

— Ինչպէ՛ս է Ձեր մէջ ծնունդ առնում բանաստեղծութիւնը։ Ինչպէ՛ս է գրում բանաստեղծութիւնը՝ միանգամի՛ց, քէ՞ մաս առ մաս։

— Գոնէ ինձ Համար բանաստեղծութեան ծնունդը նման է աստղերի ծնունդին։ Ինչպէս աստղերը, բանաստեղծութիւնը առաջանում է միգամածութիւնից։ Ուստի եւ անորոշ միգամածութեան մասին որոշակի որեւէ բան տեսել կը լինի անհեթեթութիւն։ ՈՏԱՆԱՌՈՐԸ միգամածութեան հետ կապ չունի. ամէն ինչ այնտեղ որոշակի է, ամէն ինչ պլանաւորուած ու յայտնի, եւ հենց այդ պատճառով էլ ոտանաւորները ոչ լոյս են տալիս, ոչ էլ յարատեւում։ Բայց եթէ խօսքը իսկական ԲԱՆԱՏՐԵԼՈՒԹԻՒՆ մասին է, ապա նա չի կարող չծնուել հոգեկան մի Հրահեղուկ, քառասային վիճակից, որով եւ ստեղծուել է մեր երկրագունտը. նախապէս ոչ ոք Մասիսի մակեռ չի սարքել։ Բայց ինչպէս աշխարհաստեղծութեան մէջ, այնպէս էլ բանաստեղծի սեղանի շուրջ այդ միգամածութիւն-անորոշութիւնը տեսում է անորոշ ժամանակ. կարող է պատահել միգամածութիւնից նոր աստղ ծնուի երեք ժամուայ ընթացքում՝ իր որոշակի մեծութեամբ, լոյսի որոշակի զոյնով, իր որոշակի ուղեծրով եւ, ընդհանրապէս, կարող է դա կատարուել տասնը-հինգից-քսան տարի յետոյ։ Ես չառ բանաստեղծութիւններ ունեմ, որոնք ձեւ ու կերպարանք են ստացել իրենց առաջին տողերի ծնունդից տասնը-ինը-քսան տարի յետոյ։

Անձնապէս ինձ Համար մեծ նշանակութիւն ունի բանաստեղծութեան վերնագիրը։ Մեծ մասամբ վերնագիրը եմ յղանում, յետոյ զբա տակ՝ բանաստեղծութիւն։ Ես չեմ կարող բանաստեղծութիւն գրել մէջտեղից կամ վերջից։ Եթէ առաջին տողերը պատրաստ չեն կամ դուր չեն գալիս ինձ, բանաստեղծութիւնը շարունակել չեմ կարող։ Մահաւանդ նաեւ այն պատճառով, որ, ինչպէս իմ հօտու ընթերցողները նկատած պիտի լինեն, գոնէ իմ յաջողուած բանաստեղծութիւնների մէջ առաջին քառեակից յետոյ ոչ ոք չի կարող հնթադրել, թէ երկրորդ քառեակը ինչպիսին պիտի լինի, առաւել եւս՝ այդ ամէնը ինչո՞վ պիտի վերջանայ։

— Ի՞նչ կանգամանքներում էք ամէնից աւելի լաւ աշխատում, օրուայ ո՞ր ժամերին էք գրում։

— Մենակութեան մէջ։ Եթէ երկու-երեք օր մենակ մնամ, ապա յաջորդ օրն անպայման կը գրեմ։ Բայց, աւա՛ղ, վերջին ժամանակներս ամիսներ են անցնում եւ երկու-երեք օր մենակ մնալու հնարաւորութիւն չի տեսնուում։ Եւ մի՞թէ այս ասելուց յետոյ պարզ չէ, որ իմ աշխատանքային լաւագոյն ժամերը գարձեալ մնում են կէսգիշերային ժամերը, երբ կարելի է մենակ մնալ, իր հետ լինել։

— Իսկ ի՞նչ կ'ասէիք «Անլուրի դանդաղատուն» պոեմը ծնունդի մասին։ Որո՞նք են եղել այն առաջին տողերը, որոնցով դուք սկսել էք այդ պոեմը։

դիտակցութեան, որ իրենք իրենց կեանքի երզնիները չեն, այլ իրենց ժողովրդի, հանարակութեան ու զարարչականի Ուստի եւ սա մի յատկանիշ է, որ բանաստեղծին ոչ թէ պիտի սովորեցնեն զպրոցում կամ համալսարանում, այլ որով պիտի ծնուած լինի ինքը: Կայ այդ յատկանիշը՝ անձնական բանաստեղծութիւնը հնչելու է իրրեւ հասարակական, ընդհանրական, ինքնակենսապրութիւնը՝ իրրեւ գարի գհիւանդութեան պատմութիւնը, սեփական պաշտօնիքները՝ իրրեւ արխիւային գործ: Պոեզիան երբեք մանրամունք բաներից չի ծնուած: Նորից եմ կրկնում. որքան էլ մարդը օծառուած, տաղանդաւոր լինի, միւսումնային է, բանաստեղծ չի գտնայ, եթէ մեծ բաների մասին չի մտածում:

— Ինչպէս ամօճակաճը, անհատականն է մերդաշնակումս պոեզիայում ընդհանուրի, հասարակականի հետ, այնպէս էլ, երեւի, ազգայինն ու համամարդկայինը: Ի՞նչ կ'ըստէիք այս կապակցութեամբ:

— Անկարելի է չպատկանել տեւէ ժողովրդի եւ դառնալ միջազգային: Եւ անկարելի է երեւակայել տեւէ ազգային մեծ գրող, որ չունի միջազգային արժէք: Չէ՞ որ սա նոյն ինքնակենսապրութեան ու զարի գհիւանդութեան պատմութեան, նոյն անձնական պաշտօնիքի եւ արխիւային գործի հարցն է: Եւ ինչպէս փոքր են մտում կամ ընաւ բանաստեղծ չեն դառնում այն օծառուած մարդիկ, ովքեր իրենց անձնականը չեն հասցնում համընդհանուր հնչողութեան, ճիշդ նոյն ձեւով էլ չի կարող միջազգային հեղինակութիւն վայելել այն ազգային գրողը, որ իր ԱԶԳԱՅԻՆ ԻՆՓՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆԸ չի բարձրացրել ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ:

— Իսկ որո՞նք են, Ձեր կարծիքով, ազգային յատկանիշները պոեզիայում, ընդհանրապէս գրականութեան մէջ:

— Աղբյուրներ նախ եւ առաջ լեզուն է, որ բառերի կոյտ չէ, այլ հոգեբանութիւն, եւ իմ ասածը բնաւ խօսք չէ, այլ շօշափելի իրականութիւն: Եւ այն երկը, ուր կայ ազգային հոգեբանութիւն՝ ԱՐՏԱՅԱՅՈՒՄՈՒՄ ՄԻԱՅՆ ԼԵԶՈՒԻ ՄԻՋՈՑՈՎ, արդէն այնքան է ազգային, որ նոյնիսկ, եթէ պատկերաւոր նկար ազգային էլ չլինի, կը մասնի իր ազգայնութիւնը: Յիշենք ամենամիտ օրինակը՝ Գրիգոր Նարեկացիին: Նրա հանճարեղ պոեմը իր նկարով ոչ մի առեւտրութիւն չունի հայ ժողովրդի հետ: Նոյնիսկ ՀԱՅ ԲԱՐՈՋ չկայ պոեմում: Նկարը՝ ո՛չ ազգային, գաղափարը՝ ո՛չ ազգային, ցանկութիւնը՝ ո՛չ ազգային, պահանջը՝ նոյնպէս, բայց այդպէս աղօթել, մարդային տառապանքների, տուժալտանքների մասին այդպէս ճենճերալով խօսել կարող էր միայն զուտաւր այն ժողովրդի, որ աւելի քան Հինգ հարիւր տարի զրկուած էր պետականութիւնից, գտնուում էր ազգային ահաւոր ճշմարտների տակ, կորցրել էր միասնական հայրենիքի գաղափարը, ամէն օր (եւ հարիւրավոր տարիներ) տեսնում էր կենդանի դժոխքը նախկին գերիկի դրախտափայլումը, միասնական եւ բարեբախտ թագաւորութիւն չունէր, ուստի առաւելագոյնս նրողում էր հոգեւոր հայրենիքի մասին, որ թւում էր՝ կը գտնի Արքայութիւնում:

Այս ամէնի ուղիղ անդրադարձումը չկայ «Մատնանում» եւ, փա՛ռք Աստուծոյ, որ չկայ, եթէ լինէր, իր այդ կոնկրետութեամբ, ինչպէս վերջ կախուած քարով, վաղուց ջրասոյզ արած կը լինէր «Մատնանը»: Բայց այդ ամէնի արտացոլանքը արտայայտուած է այնքան ուժգնօրէն, այնքան հայեցի, ազգային ինքնակենսապրութեան այնպիսի՝ բեկրեկութիւնով, որ դժուար է Նարեկացուն թարգմանել ոչ միայն օտար լեզուով, այլ նաեւ Հին հայերէնից նոր հայերէնի: Ազգային եւ միջազգային դարձում Նարեկացու ճշ-

ւորը ԻնՉՊէՍն է եւ ոչ թէ ԻնՉը: Եւ առանձնապէս պէտք է ներհուսն դրահանապէս լինել քաջատրեկու համար, թէ դա ինչից էր բխում: Գոհանիկ սոցիոլոգիզմի անթափանց առանձնականներում, զրականութեան իբրեւ վերնաշէնքային երեւոյթի առանձնայատկութիւնների համարեալ մոռացութեան պայմաններում, երբ կար ոչ միայն անհատի պաշտամունք, այլեւ որոշակի բառերի պաշտամունք, որոնցից մէկն էր ԹեՄԱՆ, միւսը՝ ՀՐԱՏԱՊԸ, երբորդը՝ ԿՈՄՊԱՆԻԱՆ, չորրորդը՝ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ, այս քառաթեւութեան վրայ զտաթեւում էր (այսինքն՝ խաչում էր) նոյն ինքը արուեստը: Ուստի եւ ոչ միայն արուեստի գործիչները, այլեւ պարզապէս արուեստ հասկացողները չէին կարող բարձրագոյն չափել, թէ կարեւորը ոչ թէ ԻնՉն է (այդ ԻնՉի տակ հաղանալով՝ ԹեՄԱՆ, ՀՐԱՏԱՊԸ, ԿՈՄՊԱՆԻԱՆ եւ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ), այլ ԻնՉՊէՍը՝ որս տակ հաղանալով արուեստի այն տարրական իւրայատկութիւնները, առանց որոնց արուեստը արհեստ էլ չի դառնում, այլ աւելի վատթարագոյն մի բան: Հիմա, երբ մեզ համար, բարբախտաբար, այդ ամէնը զարձել է անցած մի փուլ, հիմա է, որ արուեստի պատմութեանը տեղեակ, արուեստի զարգացման կեանքներով մտովի անցած մարդը չի կարող ինքն իրեն եւ ի լուր ամենեցուն չափել, որ վերջին հաշուով կարեւորը ոչ թէ ԻնՉՊէՍն է, այլ ԻնՉը: Բերեմ միայն երկու օրինակ: ԻնՉՊէՍի տեսակէտից նայելիս «Դոն-Կիխոտը» մի զէրք է, որ անկարելի է կարգաւ «ԻնՉՊէՍԱՅԻՆ» հաճոյք ստանալու ակնկալիքով: Բայց դանք դէպի մեղածու ժամանակները. եթէ ոեւէ երիտասարդ արձակագիր զբի այնպէս, ինչպէս Լեւ Տոլստոյը (այնպիսի նախադասութիւններով, որոնք մի ամբողջ էջ են բռնում կամ կէս էջից ոչ պակաս), ապա չգիտեմ, թէ նրան ինչպէ՞ս պիտի կոչել: Էլ չեմ խօսում Բալզակից ու Դոստոեւսկուց, որոնց մասին ես չեմ, որ ասում եմ. «Աւելի վատ գրել անկարելի է»: Ինչպէս տեսնում էք, ոչ Սերվանտէսի ու Բալզակի, ոչ էլ Տոլստոյի ու Դոստոեւսկու ԻնՉՊէՍը այսօր մեզ բնու չի բաւարարում: Բայց առայսօր մարդկութեան մեծագոյն վէպերի հեղինակները նրանք են: Եւ այստեղ ուրիշ զարդերից չկայ, բայց ԻնՉի զաղտնիքից: Սրանով, նորից եմ կրկնում, ես բոլորովին չեմ ուզում ասած լինել, թէ ԻնՉՊէՍը կարեւոր չէ, եւ առանց ԻնՉՊէՍի հնարաւոր է ԻնՉը աւել: Բնա՛ւ ոչ: Գրականութեան պատմութեանը վերջին հաշուով ԻնՉՊէՍի զարգացման պատմութիւն է, արտայայտչական նոր ձեւերի ու եղանակների փնտռումների պատմութիւն: Եւ պարզապէս ուղղում եմ ասած լինել, որ նոր ձեւեր ու նոր եղանակներ փնտռում են ա՛յն նպատակով միայն, որ պէտքի բան առնեն, ասեն աւելի թարմ եւ աւելի խոր: Հակառակը կոչում է երազախարութիւն, որից զաւակ չի ծնւում:

— Պոեզիայում, ընդհանրապէս գրականութեան մէջ ինչի աւ ինչպէ՞սի հետ կապում է մտի մի այլ հարց: Խօսեմ այն մասին է, թէ ինչպէ՞ս է տարբերում մի գլուղը միւսից, աւելի պարզ ասած՝ գրողի ինքնատիպութեան հարցը: Ձեր կարծիքով արտե՞ր պէտք է փնտռել բանաստեղծի ինքնատիպութիւնը, այն, որ նրան առանձնացնում է իր ժամանակակիցներից:

— Շատ հասարակ մի բանով, որ մեր հենց նոր տեղի ունեցած խոսակցութեան շարունակութիւնն է՝ ԻնՉի եւ ԻնՉՊէՍի ներգաղնականութեան մէջ: Հին, շատ հին խօսք է՝ «նոր գիտի՛ն՝ հին տկերում», որ ենթադրում է նաեւ իր հակառակը՝ «հին գիտի՛ն՝ նոր տկերում»: Մենք նոր պայմանաւորւածից ենք, որ վերջին հաշուով ԻնՉն է կարեւոր եւ ոչ թէ ԻնՉՊէՍը: Ուրեմն՝ կարծե՞ք թէ գիտին եւ ոչ թէ տիկը, բայց մեր այդ ամբողջ խօսակցութիւնը զուտ պայմանական էր՝ չեղտելու համար երեւոյթի այս կամ այն բաղադրի-

չի կարեւորութիւնը: Իսկ Հնարաւոր է ասել, թէ ո՞վ է կարեւոր երեխայի ծնունդի համար՝ հա՞յրը, թէ՞ մայրը: Ամէն անդամ այս նոյն անհեթեթութեանը կը հասնենք, եթէ մեր պայմանական խօսակցութիւնը չընդհատուի: Ուրեմն եւ, բնականաբար, ինքնատիպ կարող է լինել միայն այն բանաստեղծը, որ իր նոր ասելիքը արտայայտում է նոր մեղով, որ իր նոր դիմին լցնում է նոր տիկի մէջ: Բայց սա նորից մի ընդհանուր դեղատոմս է եւ դա այն զէպքում, երբ բանաստեղծական քննարկման մէջ նոյն հիւանդութիւնը միշտ էլ աւարբեր կերպերով է արտայայտւում:

Հետեւ չղնալու համար յիշենք մեր երէկուայ դրականութիւնը. միաժամանակ տարում էին եւ իրար հետ գործում Վարուժանը եւ Սիւսանթը, Տէրեանը եւ Թէքեանը, չորսն էլ միանգամայն ժամանակակից բանաստեղծներ. չորսն էլ դարձի մակարդակին համապատասխան: Իրենց ասելիքով էլ շատ ու շատ բաներով նրանք նման էին իրար (յիշենք, թէկուզ, նրանց այն թաշտանաբար շարքերը, որ մէկը կոչեց՝ «Հայրդիմներ», միւսը՝ «Հայրեզու-իրիմ», երբորդը՝ «Յնգին սիրտը», չորրորդը՝ «Երկիր նայիրի»: Բայց շնայած ինքի եւ ինքի ինքի առարկային նմանութիւններին, մեր այս չորս բանաստեղծները շատ անկի տարբեր են, քան նման:

Ըստ այսմ՝ կայ ինքնութիւն, ինքնութիւն եւ մի երբորդ բան, որ ես ինձ թոյլ եմ ապրիս կոչելու՝ ՈրդիՍոսանթիւն, դրա տակ հասկանալով ոչ այլ ինչ, քան ՊԱՏԿԵՐԱՆՈՐ ՄՏԱՆՈՂՈՒԹԻՒՆԸ: Գրական նոյն դպրոցին պատկանող, գրական նոյն կրթութիւնը ստացած, կենսագրական նոյն տրեւեայնրն ունեցող վարուժանն ու Սիւսանթն իրարից տարբերում են ոչ այլ ինչով, քան իրենց պատկերաւոր մտածողութեամբ: Այսպէս նաեւ Տէրեանն ու Թէքեանը եւ բոլորը միասին: Եթէ չկայ ինքնութիւն, չի կարող լինել տուեալ ժամանակաշրջանի ՄԱԿԱՆՈՒԹԻՒՆ: Բայց եթէ չկայ ՈՐԳԱՆՈՒԹԻՒՆ, կտորով է լինել տուեալ ժամանակաշրջանի մակարդակը, որ ունենում է նաեւ այդ ժամանակաշրջանի հետեւող-ընդորդակող-կրթութիւնը: Ուստի եւ բանաստեղծի ինքնատիպութիւնը պիտի փնտռել նաեւ եւ առաջ նրա ՊԱՏԿԵՐԱՆՈՐ ՄՏԱՆՈՂՈՒԹԻՒՆԸ մէջ:

— Իւրաքանչիւր բանաստեղծ յիշուի ճշմարիտ բանաստեղծի մասին է) ինքնուրոյն, ինքնատիպ մի աշխարհ է, ինչպէս ասացիք: Այդ ինքնատիպ աշխարհը ստեղծուում է լեզուի միջոցով, եւ կարելի է ասել, որ իւրաքանչիւր բանաստեղծ ունի իր քառերի աշխարհը: Դուք ինչպէ՞ս եք օգտուում բանաստեղծի մեծագոյն գեղից՝ լեզուից: Ի՞նչ վերաբերմամբ ունեւք քառի նկատմամբ:

— Ընդունում եւ սարսափելի մաշում խօսք է, որ լուում է ամէն քայլափոխի՝ «բառեր չկան ասելու, որ...», «ես բառեր չեմ գտնում ասելու, որ...»: Այսպիսի տողեր օգտագործելու իրաւունք ունի ամէն ոք, բացի բանաստեղծից: Ինչպէ՞ս թէ բառեր չկան, ինչպէ՞ս թէ բառեր չեմ գտնում: Իսկ բանաստեղծի գործն ի՞նչ է: Բառեր միշտ կան, միայն գտնողներն են քիչ: Եւ այդ քիչն էլ կոչւում են բանաստեղծ:

Բառեր կան եւ շատ կան: Բայց, զգալիորաբար, բառերի մի մասը քնած է (եւ ոչ երբեք մեռած), ուստի եւ յարութիւն տուող է պէտք: Բառերի միւս մասը պարզապէս լուում է, ուստի եւ խօսեցնող է պէտք: Իսկ բառերի երեւի դերակշիռ մասը պարզապէս (շատ գործածուելուց եւ անհարկի գործածուելուց) մաշում է անտանելի, ուստի եւ նրանց նախահիշատակ իմաստը վերականգնել ու փրկել է պէտք:

Ահա այս եռակի դժուարութիւններն են, որ պիտի յաղթահարի բանաստեղծը:

նաստեղծը: Կայ մի շորթորդ՝ նանտպար՝ էլ՝ դա նոր բառերի ստեղծման ուղին է, որ կարող է բացուել, ի հարկէ, միայն նրա՝ առջեւ, ով դիտի քնած բառերին յարութիւն տալ, լռածներին՝ խօսեցնել եւ մաշուածներին՝ վերաթարմացնել:

Այս շորթ ուղիներով է, որ ստեղծուեւ է այն աշխարհը, ինչ մէկը կոչում ենք այսինչ կամ այնինչ բանաստեղծի աշխարհ, ըստ որում մի աշխարհ, որ առերեւոյթ չի փարտէ պարտաւոր իր «պետական» սահմաններով, բայց այդ սահմանների ամէն մի խախտում տեղի ու տեղը որսւում է քիչ թէ շատ հմուտ ընթերցողի կողմից: Այսպէս են բռնուում «սահմանազան» գրադոյններն ու ընդօրինակողները:

— Զեր Վեանուն եւ ընդդէմ «Նախաճիւղերի» յօդուածը, որ տպագրուեց 1966 թ. «Գրական թերթ»ում, ուրիշ խօսակցութիւնների հետ միասին առիթ տուեց քանակիւնորսին (գրաւոր թէ քանաւոր) ասելու, թէ դուք պահանջում էք քանաւորութիւններից դուրս հանել զգացմունքը, յայդը եւ պաշտպանում էք գուտ դատարանին, քաջիւնալ պնդիւն: Ճիշդ էիմ Զեր ընդդիմութիւնները:

— Անհասարակ իմ այդ յօդուածը ճիշդ կարգացողների թիւը շատ քիչ էր: Յամենայնդէպ ինձ դրաւոր պատասխաններից ոչ մէկը իրեն նեղութիւն չտուեց հասկանալու, թէ ինչու եմ ես իմ յօդուածը վերադարձնում «Յանուն» եւ ընդդէմ...: Եւ եթէ չհասկացուեց վերադարձը, որ ամենակարեւորն էր, ուստի եւ ինձ համար բնաւ էլ դարձանալի չէր, երբ ինձ վերադարձնեին այնպիսի մտքեր ու պահանջներ, որոնք չկային ու չէին կարող լինել իմ յօդուածում:

Պօքս չերկարացնելու համար ուղղակի ասեմ, որ խելագական մարդը կարող է միայն ասել, թէ բանաստեղծութիւնից դուրս պիտի վերադառնա: Բայց միաժամանակ մարդ իսկապէս «Նախաճիւղ» նախաձեռնելու, այլ կերպ ասած՝ պարզունակութեան, նախադրեանութեան եւ ժառանգ խեղճութեան դիրքերի վրայ պիտի լինի՝ մի վայրկեան մտածելու համար, թէ բանաստեղծութիւնը, էլ չեմ ասում 20րդ դարի բանաստեղծութիւնը, ոչ այլ ինչ է, քան այսպէս կոչուած ՅՈՅԶ: Ասեմ նաեւ, որ ես բնաւ համամիտ չեմ իմ այն քննադատների հետ, որոնք ինձ լիթուանական համար յաճախ են դրում, թէ ես բանական-դատողական-ուսցիտես-խնայելիկաւ բանաստեղծ եմ: Ես ստիպուած եմ յանդգնելով ասելու, որ ես ինձ շատ աւելի յուզական-զգացումային բանաստեղծ եմ համարում, քան իմ այն բանաստեղծ-ընդդիմախօսները, որոնք երբեք են յայդի ու զգացմունքի անունով: Մտքով հարցն այն է, թէ ով ինչ է հասկանում յոյզ կամ զգացում ասելով:

Ո՞վ չի մասնակցել թաղման տխուր արարողութեանը՝ Ահաւոր Ծանր վիշտ, երկու ջոյրեր թաղում են իրենց եղբորը եւ, ինչ ասել կ'ուզի, ողբում են նրան աւելի, քան ունէ այլ ոք: Քոյրերից մէկը կուրծք է Ծեծում, մազ է փետրում, երգ ու խօսք իրար խառնում, իսկ միւսը ողբում է զուսպ, համարեա՛ն անխօս եւ երեք-չորս ժամուայ ընթացքում յանկարծ ասում է մի այնպիսի նախադասութիւն, որից փառադուում ես, ո՛չ միայն արտասում, այլեւ ժամանակ անց, հարկ եղած դէպքում, բոլորովին օտար միջավայրում պատմում ես դրանով օտարներին անգամ փառադնունդ՝ ջոյրական անհուն վիշտ վերաբարձելով:

Եթէ ոմանք կարծում են, որ առաջին ջոյրն էր յոյզով ու զգացմունքով սղում էր եղբորը, Աստուած իրենց հետ իսկ կ'իրթ, զգայուն, ժամա-

նականից մարդու համար առաջին քրոջ ողբը ոչ միայն կսկիծ չի յարուցում, այլևս յարգանք:

Նոյնն է նաեւ բանաստեղծութեան մէջ: Յաճախ յուզական-զգացմունքային են համարուում այն բանաստեղծները, որոնք լաց ու կոծ են անում կամ իրենց ուրախութեան ճիչերն են արձակում այնպէս, ինչպէս երեքից-չորս հարիւր տարի առաջ: Մինչդեռ նրանց աշուղտ կոչուած յուզական-զգացմունքային բառերի տակ ոչ մի զբաղ յոյժ ու զգացմունք չկայ, կայ յայտարարութիւն, թէ առանց քեզ ապրել չեմ կարող, թէ քեզ սիրում եմ ձեռնանի բոլոր գոյներով, կայ հաւաստեցում, թէ իմ տատկից աւելի սիրուն կին չկայ աշխարհում: Բայց չկայ ո՛չ վիշտ, ո՛չ սիրոյ, ո՛չ հաւատի, եւ ո՛չ նուիրումութեան այն լուցկու հատիկը, որից բոց է բռնկուում եւ խորոյն առաջացում:

Գալով ոչ թէ փուշ-պարկային յոյզ-զգացմունքին, այլ յիրաւի յոյզին՝ զգացմունքին, այնուամենայնիւ, մենք իբրեւ Սիրդ դարի րնթերցողներ՝ չենք կարող չնկատել, որ անխառն յոյժ ու զգացումը յատկանշիչներն են նախնական (այսինքն՝ պրիմիտիւ) մտածողութեան՝ ինի դա երաժշտութեան մէջ, թէ բանաստեղծութեան: Դա բանաստեղծութեան հիմքն է բոլոր ժողովուրդների մէջ, Հիմք է, բայց ոչ ՊԼԵՏԻՆՔ, առաւել եւս՝ ոչ ԱՌԱՅՏԱՂԷ: Չմոռանանք, որ եթէ խօսքը մարդու մասին է, այլևս զգացումը չի կարող լինել ԱՆՆԱՅԻՆ. դա արդէն ԲԱՆԱԿԱՆ-ԻՄԱՅՆԱԿԱՆ ԶԻՆՆԱԿԱՆՆԵՐԷ: Եւ չմոռանանք, որ այնպէս է ո՛չ միայն այսօր, այլ այդպէս է եղել մեր արդի բանաստեղծութեան սկզբում էլ: Կարգացէ՛ք մ. թ. 2-5 դար առաջ գրուած եւ, բարեբախտաբար, պահպանուած հրէական բանաստեղծութիւնը: Ձէ՛ որ դեռ այն ժամանակ Դաւթի եւ Սողոմոնի բանաստեղծութիւնները այնքան էին հեռացած այսպէս կոչուած անխառն յոյզ-զգացմունքից, որ այսօր էլ դժուար թէ պարզ հասկացուեն այս վերջիններիս ջատագովների կողմից: Այլ կերպ ասած՝ յիշեալ բանաստեղծութիւններն արդէն նախնական-ՊՐԻՄԻՏԻՒԱՐԱՆՈՒԹԻՒՆԱԿԱՆ արդարեւ չէին, այլ ՉԱՐԳԱՅԻՄ արուեստի արտադրանք: Եւ միայն այդ պատճառով էլ նրանք չեն կորցրել իրենց արժէքն ու թարմութիւնն այսօր: Ուրեմն, նորից ասեմ եւ նախնական-ՊՐԻՄԻՏԻՒ անով ասեմ, որ ես ոչ թէ դէմ եմ բանաստեղծութեան յուզական-զգացմունքային ազդեցին, այլ ճիշդ հակառակը՝ սխերիմ թշնամի եմ բանաստեղծութեան սուղ-դատողական, էժանագին խոհա-խրատական ճամբարտակութիւններին, որոնցով տարօրինակ ձեւով սնոււմ են այսօրուայ մեր ամենակրօտեր սերունդի շատ ներկայացուցիչներ: Եթէ խորատաւ առաջ եւ քարոզ կարգալը բանաստեղծութիւն կոչուէր, ապա աշխարհի ամենամեծ բանաստեղծները կը լինէին մեր անդրադէտ տառիկներն ու պատկերները:

Իսկական բանաստեղծութիւնը չի կարող չլինել զգացմունքային, բայց այդ զգացումն էլ չի կարող չլինել խոհական, որովհետեւ մենք մարդ ենք ոչ ոչ ու, այսինքն՝ Homo sapiens, այսինքն՝ ԲԱՆԱԿԱՆ արարած, որի զգացումներն էլ պիտի լինեն բանական, ինչպէս որ բանականութիւնն է զգայական:

— Նայմ յօդուածը անիթ տուեց ճան. ստեղծ, քէ Դուք Ձեր ստեղծագործութեան մէջ առատօրէն օգտուիմ էի ժողովրդական բանաստեղծութիւնից, ի՞նչ կ'ստիժ այս կանխ տեսակարարէն կոչ էի անում նրաժարուել դրանից: Ի՞նչ կ'ստիժ այս կանխ տեսակարարէն կոչ էի անում նրաժարուել դրանից: Ի՞նչ կ'ստիժ այս կանխ տեսակարարէն կոչ էի անում նրաժարուել դրանից: Ի՞նչ կ'ստիժ այս կանխ տեսակարարէն կոչ էի անում նրաժարուել դրանից:

իւնչ պիտի անի քանաստեղծը, որպէսզի քանահիւտութիւնից կատարած նրա մշակումը դառնայ ստեղծագործական:

— Ամէն ժողովուրդ, որ չի ոչնչացել իր զարգացման նախնական տա-
տիճանի վրայ, չի կարող իր գոյութեան հետագայ բոլոր դարերում չօգտա-
ւել իր բանահիւտական նիւթից ու մտածողութիւնից, որովհետեւ այդ նիւթն
ու մտածողութիւնը շարունակում են ապրել ո՛չ միայն եւ ոչ այնքան մեծ
ՆԱԲԱՒՈՐԻՆ, որքան իրրեւ լեզու, իրրեւ ազգային մտածողութիւն եւ ժո-
ղովրդական հոգեբանութիւն: Այս նոյն միտքը, մի քիչ այլ բառերով, ես
ասել եմ նոյն այդ յօդուածում. «Բանահիւտութիւնն ունի իր անկրկնելի ել-
մայքն ու հարստութիւնը: Եւ ամէն ազգի գրող էլ, ծնունդով եւ միջոցաւ մեռ-
նելը, օգտուած է դրանից, ինչպէս օղից»: Ուրեմն իմ խօսքը եղել է ոչ թէ
բանահիւտական նիւթը շօգտագործելու կամ չփորձակելու մասին: Անձնա-
պէս իմ կենսաճիւղի մեծագոյն նպատակներից մէկն է երբեքէ վերաճակել
«Ստեղծ ծնորդ»՝ իմ հասկացողութեամբ եւ իմ բոլորումով: Խոսքն այն
մասին է, որ եթէ բանահիւտութեան մշակում է, ապա դա պէտք է լինի ոչ
թէ պարզ վերաշարադրանք, կամ լաւագոյն-երազելի գէշքում՝ վերափոխու-
թիւն, այլ ՎԵՐԱՍՏԵՂՄՈՒՄ, ոչ թէ ռմաւորում, այլ ՎԵՐԱԽՄԱՍՏՄՈՒՄ
ՐՈՒՄ:

Խօսքը նաեւ այն մասին է, ինչը ըստ էութեան արդէն կապ չունի բա-
նահիւտութեան հետ, այլ այն յետամնացութեան, այլ այն խեղճ ու կրակ
մտածողութեան, որ ես կոչել եմ ՖՈՒԿՆՈՐԱՅԻՆ ՄՏԱՄՈՂՈՒԹԻՒՆ, որ
տակ հասկանալով ամենանախնականը վատ իմաստով, ամենապարզունակը
վատ իմաստով, ամենամահաւանականը եւ մտացածինը, որ ո՛չ միայն ես,
այլեւ բոլորս էլ ստիպուած ենք կոչել ՀԵՔԻԱՅԻՆ-ՆԱԳԻՆԱՅԻՆ: Խօսքն այն
մասին է, որ այսօրուայ դրողը իր երէկուայ կամ այսօրուայ հերոսների
չպիտի սիրեցնել տայ այնպէս, ինչպէս այդ արւում է Հեքիաթներում, նը-
րանց ձեռք ու լոյս աշխարհը՝ չպիտի դարձնի նոյնը, ինչ Հեքիաթներում:
Եթէ Հեքիաթ կարդալու մի նախապայման կայ, այն, որ անվերապահօրէն
պիտի հաւատաս Հեքիաթաբանին, Հեքիաթ պատմողի բոլոր ասածներին, ա-
ռանց հարցնելու, թէ այդպէս կարո՞ղ էր պատահել, ապա ժամանակակից
գրականութեան ընթերցողի համար կայ բոլորովին հակառակ նախապայմա-
նը, որ նոյնպէս սկսում է նոյն հարցով՝ «Իսկ այդպէս կարո՞ղ էր պատա-
հել»: Եւ մի՞թէ դադարի՞ք է, որ մենք այսօր կարդում ենք երէկուայ ու այ-
սօրուայ մասին գրուած հաստատոր դրքեր, որոնց հեղինակները պարզապէս
վատ թէ լաւ գրական լեզուով պատմում են մի անծայրածիր Հեքիաթ, մո-
ռանալով, որ մենք երեխայ չենք եւ կարող ենք հարցնել. «Քեզի՞, բա այդ-
պէս լինո՞ւմ է»: Ահա հենց սա է, որ ես կոչում եմ ՖՈՒԿՆՈՐԱՅԻՆ ՄՏԱՄ-
ՈՂՈՒԹԻՒՆ:

— Քանի որ խօսք է բացուել Ձեր «Եանուս եւ Ընդդէմ ոգաւորման» նա-
խահիւրէրի յօդուածի մասին, ապա եւս մի եարց, որ առնչուում է դարձ-
եալ այդ յօդուածին: Խօսելով ժամանակակից քանաստեղծութեան մասին,
Դուք գրում էիք, թէ նա «անցման հասակ»ի ժամանակաշրջան է ապրում
եւ ձգտում է «բանաստեղծական անբանաստեղծութեան»: Եւ մեր երիտա-
ւարդ բանաստեղծներին խորհուրդ էիք տալիս գնալ այդ ուղղութեամբ:
Միաժամանակ Դուք երիտասարդներին զգուշացնում էիք հեռու մնալ արձա-
նագրական ոտանաւորից եւ բանը չհասցնել նաեւ սղագրութեան: Ի՞նչ կ'ա-
սէիք այս կապակցութեամբ մեր ծրիստաարդների պոեզիայի մասին:

ԲՈՐԲ ու ԲՈՍՈՐ, ՍՈՒՐԲ ու ՍՐԲԱՋԱՆ, ապա հասել՝ ԵՐԱՆԱՆ ու ԵՐԻՄԱՂԱ-
ԽԻՏ, ԼՈՒՍԷ ու ԽԱՆԴԱԿՈՒԹ, հաշվի, հաշվի, բառեր եւ նբանցից կազմու-
ած արտայայտութիւններ, որոնք վաղուց դադարել էին կշիռ ու արժէք ու-
նենալուց: Այդ պատճառով էլ ես մի ժամանակ ստիպուած եմ հղել գրեկու.

Եւ ա՛յն հասկացայ,
Որ դրամի պէս,
Մաշուկ եմ արդէն բառերը բոլոր,
Հասկացայ ման,
Որ մինչեւ անգամ լաւ է անլի
Բառերն իրար հետ կապ իսկ չունենան,
Քան քէ չունենան կշիռ ու արժէք:

Ահա այս անկշիռ ու անարժէք բառերի կոյտն է, որ տարիներ շարունակ հա-
մարուել է բանաստեղծական, սպաննելով ճիշդ ու ճշմարիտ բանաստեղծու-
թիւնը եւ խցելով բանաստեղծութեան ընկալման ունկերն ու ակունքները.
«Ամբարնատեղծական քանատեղծութեան» իմ պահանջը, այսպիսով, այլ քան
չէ, քան ճշմարիտ բանաստեղծութեան պաշտպանութիւն, ընդդէմ փուչ եւ
նոճոան, զանգրահեր ու ռուսցիկ բառերի ոտանաւորութեան:

Եւ Քանատեղծական քանատեղծութիւնն ասելով ես երբեք չեմ
հասկացել, թէ կարելի է բանաստեղծութիւնը դրել՝ իրար հետ կցելով բա-
ռերը, թերթի յօդուածի նման, ինչպէս երբեմն տեսեմ եւ մեր «ԿՏՐԻՃ ՏԸ-
ՂԵՐՔԸ»: Վերջերս նոյնիսկ այս կարիճներից մէկը գրեց, թէ նրանց ճիշդ չեն
ընկալում այն պատճառով, որ մինչեւ Հիմա բանաստեղծութիւնը համարել են
երգ: Եւ շատ աւելի վաղուց եմ գրել, որ արդի բանաստեղծութեանը չպիտի
նայել իրրեւ սովորական միաձայն երգի, որ ժամանակն է երգային մասնու-
ղութեան փոխարէն մենք նոյնիսկ 5-10 տողանոց բանաստեղծութեան մէջ
ունենանք սիմֆոնիկ մասնուղութիւն եւ միաձայնութեան փոխարէն՝ բազմա-
ձայնութիւն: Եւ նոյնը պնդում եմ նաեւ Հիմա: Բայց միաձայնութեան փո-
խարէն բազմաձայնութիւն եւ ոչ թէ պարզապէս դոռում-գոչում, եւ երգայ-
նութեան փոխարէն՝ սիմֆոնիկ՝ բայց ոչ թէ խոխոց-գոգոցութիւն: Եւ
եթէ խօսում ենք, ապա քան ասելու եւ հասկանալու համար, եւ ոչ թէ՝ Ռե-
ֆոն: «Ցանաւն եւ ընդդէմ «Ուլալիզմի մախախտման» յօդուածը գրելու
ժամանակ ես այդ վախն արդէն զգում էի: Դժբախտաբար, իմ վախն ար-
դարացաւ: Մեր շատ երիտասարդներն արդէն իրենց գրածը հասցրել են ու-
րուսի, եւ եթէ այսպէս գնա՝ Հիմա էլ ես մի ուրիշ վախի զգացողութիւն
ունեմ, վախենում եմ, որ բանաստեղծութիւնը Ռեֆոնիմ հասնի ԽԱՋ-
ՐԱՌԻ:

Գալով ողագրութեանը, իմ նախկին վախի ապացուցման օրինակ բե-
րելու հարկ չկայ, որովհետեւ կարծեմ սովորական գրութեան ու ողագրու-
թեան տարբերութիւններից մէկն էլ կէտագրութեան նշանների բացակայու-
թիւնն է: Իսկ այս ամէնը, դժբախտաբար, դալիս է ոչ թէ ասելիքի շատու-
թիւնից եւ բարդութիւնից, այլ ճիշդ ՀԱՅԱՍՏԱՆԻՑԻ թող ասելիք լինի, թող
պատմա-գրական արժէքի փաստ արժանագրուի, խնդրե՛մ, թող արժանագրուի
նաեւ առանց կէտագրական նշանների, ինչպէս դարեր առաջ արել են մեր
պուպերը մեր սրբատաշ քարերի վրայ:

Ջրոյցը վարեց՝ Ա. ԱՐԻՍՏԱՆԿԵՍԵԱՆԸ
A.R.A.R.®

Բ. ՓԱՓԱԶԵԱՆ

Պարոյր Սեւակի Դիմագծին
Անտաթարս Պաշտպանման համար

Ներկայ տողերը պիտի չզրուհին, էթէ բարեկամս, տղթ. Տ. Վարձապետեան Վարդաօմէին 8 Օգոստոս 1971ի Թիւին Տէջ լոյս ընծայած չըլլալ էիր մահով կեանքի տուաւ մեզի՝ յոյսեամբ, Պարոյր Սեւակի թահուան բառաստեւերն ոտքի՞ծով: Պարոյր Սեւակի մասին շատ սրբեցաւ, առէր ձեռնուռն դրէ՛ններն կողմէ՛ տրուեցաւ անոր կորուստիս ձեռնութեան պատկերացումը: Պարոյր Սեւակէն իմ անցածս տպաւորութիւններ ու ապրումներս պիտի ուզէի Թուղթին յայտնել: Պարոյր Սեւակին ամէն Հանդիպող էթէ իր տպաւորութիւններն թուղթին յայտնել...

Թող այդ պարտականությունը կատարեն իր գրեկորայինները, զինք չաս
տելի մտան իսկ չաստ ասելի լաւ ճանաչողները... Այսպէս կը մտածէի:

Աղջկազն կը մտածեմ նաեւ հիմա, սաբայն թարեւորմամբ, տղթք-Վար-
ժապետեանի գրի առած տղաւորութեանց մէջ Պարոյր Սեւակի դիմագործը
հիմնական աղաւաղութի մը ենթարկուած ըլլալուն (վառահ եմ, ոկամայ) կը
ստիպուիմ ահա դրի առնել մեր հանդիպումը իր մանրամասնութեանց մէջ,
կարեւոր սնաղաղարս ձեւով վերականգնելու համար Պարոյր Սեւակի դիմա-
դիրն:

Իր առջև դրույթնան մէջ՝ առաջիկ. Տ. Վարժապետեանն Հետեւեալ ձեւով կը
հերկայայցէ իմ եւ Պարոյր Մեհակի խոսակցութիւնը, Արմէնիա պանդոգի
ճաշաբարհէն մէջ:

«Եւ մեր խօսակցութիւնը հեգհատեալ առուակի մը պէս կը կարկաշէր, հայրենի գովաբանի մը բերելով մեր ծագիներէն ներս: Պարտքը խնկի խօսք մըն էր, սրամիտ եւ պատրաստաբան: Իր խօսքերը երեւթեզ էին եւ ինտստով լեցուն: Ինկալան ահա, զիս գիտեր արկէջ ուր, կուտուր Աջարեան ճեւաբ չէրանք վրայ» վկայը, ու վերջերս վրանարարաբարեւած էր Հայաստանի մէջ, եւս գար թաւր կամգնէլու մեր խօսակցութեան առուակին առջեւ:

— Իրաւունք չունի այդպէս փոփոխութեամբ քաղաքակրթութիւն վէպը, — կը պնդէր թիշկ Բ.ը:

— Իր իրաւունքին մէջն է, — կը շեշտէր քառերը՝ Սեւակ:

Եւ թիշկը իր գրպանէն հանեց քուզք մը, ուր մանրամասն գրուած էր երկու վէպերուն միջեւ եղած տարբերութիւնը, կարծես այդ օրուան հաւասար պատրաստած ըլլար:

Խօսակցութիւնը տակաւ կը վերածուէր վիճարարութեան, ուր կը դըրսէր նաեւ կիրք:

— Նոր պայմաններու մէջ հեղինակը իրաւունք ունի սրբագրութիւններ կատարելու, երբ անդրադառնայ, թէ սխալած է ինք, կամ սխալ են եղած իր քաղաքական տեսութիւնները, — ուժգնօրէն կը պնդէր Սեւակ, նորը կրնայ ըլլալ նաեւ քաղաքագիտ, — եւ մեզմ ժպիտ մը ուրաւագոյնեցաւ շրթներուն վրայ: Եկար, տեսար եւ համոզուեցար, թէ առողջ ու շքեղ իրականութիւններ կան հայրենիքին մէջ, զորս կարելի չէ ուրանալ: Եւ հաւանաբար դուն ես սրբագրութիւններ կատարես քաւ կեանքէդ ներս:

Մեզմ ժպիտի փոխարէն, հիմա ծիծաղ կար թուր շրթներուն վրայ:

— Գրականութիւնը տարբեր բան, հայրենիքը՝ տարբեր բան...

— Սակայն հայրենիքը ամէն բանէ վեր է, — բարձրացուց ձեռքը Սեւակ, կարծես Արարատի գագաթին յաղթանակի դրօշակը ուզէր խորսխիլ: Հետգեծտէ միւս թիշկներն ալ սկսան մասնակցիլ այդ վիճարարութեան, որ տակաւ թափ կ'առնէր:

— Տղաք, — ընդմիջեց Գրիգորը, — ելէ՛ք «Արագիլ» սրճարանը երթանք: Հնմ այդ քարձանքին ու գով օդին թերեւս գիրար լաւ հասկնա՞նք:

Երեւակայութեան թափը ո՛չ միայն ընդունելի, այլեւ անհրաժեշտ տուեալ մըն է պատմութեան գրած ատեն, գրականութիւնը ըրած ատեն: Վկայող գրութեանց մէջ տակաւ, տնիկա ո՛չ միայն օգտակար կրնայ ըլլալ, այլեւ կրնայ նաեւ վնասակար ըլլալ: Ա՛յդ է պարտական Պարոյր Սեւակին նուիրուած այս փոքր յուշագրութեան մէջ, ուր գրական երեւակայութեան բժրոժով Պարոյր Սեւակի դիմապիծը ահամայ կ'աղաւաղուի ու կը կազմէ մեր դիմաց բոլորովին այլ, անճանաչելի Պարոյր Սեւակ մը, որ կ'արժեքէր իրեն, եթէ իրապէս այդ նկարագրին տէրը եղած ըլլար: Ահա թէ ինչու կ'ըստիպուիմ վերականգնել իրականութիւնը եւ այդ ճամբով՝ Պարոյր Սեւակի դիմապիծը, պատմելով Պարոյրի հետ մեր հանդիպման մանրամասնութիւնները, իրենց ամբողջական հարադատութեամբ:

1964 Հոկտեմբեր 1ին էր, ուշ տունն վերադարձած էինք Գեղարդ-Գառնի այցելութենէն ու ճաշը ըրած էինք կէսօրէ հաջ, ժամը 4.30ին: Արմէնիա պանդոկի ճաշարանն էինք, ժամը 5ի մօտերը ճաշարանէն ներս մտան Գ. Քէչիշեան ու Պարոյր Սեւակ:

Առաջին անգամն էր, որ կը տեսնէի Սեւակը, այնքան ծանօթ էր ան սակայն իր կորիւնի դիմապիծով, զոտուղ մազերով, որ պաշտօնական ծանօթացումէն առաջ գիտէի, թէ Պ. Սեւակն էր մեր սեղանին մօտեցողը:

Ծանօթացումները կատարեց Գ. Քէչիշեանը:

— Տղաք. Տ. Վարժապետեան, որ տեսնել կը փափաքէիք, տղք. Սիմոնեան, տղք. Սաղբերեան, տղք. Գասպարեան, տղք. Աղնաւորեան, տղք. Փափազեան «Բաղին» խմբագրութեան:

— Եղա՞ւ ասիկա, — ըսի Քէչիշեանին:

— Ինչո՞ւ, ի՞նչ եղաւ որ, — հարցուց իրապէս դարձացած:

— Ներկայացուցիր իբրեւ Քաղինձի խմբագրներէն, կը Նշանակէ կը-
նիքը վրան դրիր, — ըսի ժպտալով: Ենդաց, զճոռ չնկած պիտէր արդէն,
բոսաւ: Քոսակցութիւնը սկսաւ ու շարունակուեցաւ, բնականաբար, գրական
ու հայութեան վերաբերող հարցերուն շուրջ:

Քաղինձի խմբագրութեան յիշատակումը արդէն առիթը կ'ընծայէ Սե-
ւակին արտայայտուելու իրեն համար կենսական եղող հարցի մը մասին:

— Պօզոսին ասա (Պ. Մնայեանի մասին էր հարցը), որ ես սղարում
էի, որ զէք դուք, ձեր պայմանների մէջ, օտար գրականութեան հետ մէկ
ունեցած յարաբերութիւններով կը կարողանայիք տեսիլ ծանր մօտեցում ու-
նենալ գրականութեան եւ արուեստի գործերին: Իսկ դուք նոյն ձեռքով էք
վարում այդ հարցերում, ինչ որ մեր կոմսոմոլները:

Գրական քննադատութեան աւելի խոր թափանցումի, աւելի հիմնական
արժէքներու փնտռումի հարցն էր, որ Սեւակ կը դնէր սեղանին: Զէի կըր-
նար տարակարծիք ըլլալ. արուեստի ու գրական ստեղծագործութեանց վե-
րաբերմամբ խոստապահանջ քննադատութիւն մը իրական արժէքներու ծնուն-
դին նախապայման համարած եմ ինքս ալ, տարիներով: Պատասխանեցի այդ
ուզողութեամբ ալ, յիշեցնելով միայն այն պայմանները, որոնց տակ կ'ապ-
րէի Սփիւռքը եւ որ շատ ալ չէր նպաստեր իրական արժէքներու ծաղկո-
մին, որով՝ խմբագրները կը ստիպուէին երբեմն զոհանալ նուազ իրական
արժէք ունեցող գրութեան:

Տօքթ. Յ. Սաղըրեան Նիթը փոխադրելով Պարոյր Սեւակի գրակա-
նութեան, եւ Վեյնիկի զանգեկատան՝ պոսիի մասին իր հիացումը արտա-
յայտելէ ետք (այդ առիթով ալ տեղի ունեցաւ տօքթ. Վարժապետեանի յի-
շատական խօսակցութիւնը Յ. Կիւրոյեանի Վեյնիկի Զանգեկատանը ար-
տասանելու մասին) հարցուց.

— Հիմա ինչի՞ մասին կը գրէք:

— Ես «մասին» մասին պիտի չգրեմ, — պատասխանեց Պ. Սեւակ, —
ժամանակն է, որ հայ գրագէտը գրէ առանց «մասին»ի: Զեք մօտ վերջին
բարձունքը բանաստեղծութեան մէջ վստահ թէ՛ բնական է, որ կը համարուի
մեր բարձունքներէն տալիս անգամ աւելի վեր. լա՛ւ, սակայն յետո՞յ... Որ-
պէսզի հայ աղջիկը, հայ տղան օտար գրականութիւնը չգնահատի. չգերա-
զասի մեր գրականութիւնից. պէ՛տք է, որ մեր գրագէտները այլեւս տան
արժէքաւոր միութիւն եւ ոչ թէ նոյն տեղը կանգ առնեն, կրկնեն նոյն բան-
ընելը: Ես «մասին» մասին պիտի չգրեմ: Դեհ, ի հարկէ, չեմ կարող բնա-
յայտել. արուեստի մի բան եմ չէ՞, եւ հա՛յ եմ. ամերիկացի չեմ, քաքար չեմ:
Սակայն պէտք է աշխատեմ «մասին» մասին չգրել. գրել եիմնական հար-
ցերի, մարդկային էական միութիւնի մղումով:

Քոսակցութիւնը շարունակուեցաւ ու դեռ յիշատակուեցան Եղուարդ
Պօյանեանը, իր գրած «2 նամակներ»ը, որուն մասին Գ. Քէչիւհան այն կար-
ձիքին էր, թէ «Եղուարդը այդ նամակները գրելու պէտք չունէր, կարիքը
չկար նման քանի»:

Ու յանկարծ, Պ. Սեւակ ինծի դառնալով հարցուց.

— Լսել եմ, թէ Պէյրութում այնպիսին է եղած, որ հայը հայի հետ չի
խօսում, հայը հայի հետ տեսնուել չի ցանկանում. ուղի՞ղ է, թի՞շկ:

— Դժբախտաբար ուղի՞ղ է, Պարոյր:

— Բա, ինչպէ՞ս կարելի է դա, ի՞նչ էք անում դուք, ի՞նչ եմ անում
մտաւորականները, ինչպէ՞ս կարելի է ընդունել, որ հայը հայի հետ չիօտայ:

— Եթէ թոյլ տաս, կը բացատրեմ թերեւս նման երեւոյթներու պատճառները:

Ձեռ գիտեր, թէ դուք ձեռք մօտ կրցած էք, շնորհիւ ձեր ունեցած պետականութեան, անցնող քառասունամեակի ընթացքին Հայութիւնը վարժեցընել քաղաքացիական պարտաւորութեանց եւ գիտակցութեանց. մեզ մօտ, սկսած Սփիւռքէ տարածքին վրայ, մի մոռնար, որ մենք ուղղակի շարունակութիւնն ենք 1915ին աշխարհացրիւ դարձած Հայութեան մը, որ աւելի քան վեց հարիւր տարի առանց պետականութեան ապրած էր իր երկրին վերայ: Աշխարհացրիւ դարձած Հայութեան մեծ մասին կեանքը, ազգային, եկեղեցական, զարոյցական կեանքը կը զննվարուի ազգային Մահմանդարութեան կամ անոր շատ մօտ, գրեթէ Համանման կոնտրադիկցիաներով, որոնք վաւերացուած են այն պետութեանց կողմէ, որոնք Համայնքային դրութիւնը կ'ընդունին: Որով, բնականաբար, ժողովրդային ընտրութիւններով է, որ պիտի մտնուի, թէ ո՞վ, կամ որո՞նք պիտի դառնան ազգային Գաւառական Ժողով, Թաղական Ժողով, եւ այլն: Երբ նման ընտրութեանց մէջ մենք կը կորսնցնենք, — ինչպէս օրինակ Եգիպտոսի մէջ, բազմաթիւ անգամներ, «Յուսարեք» կը գրէ: «Շահեցա՛մ ընտրութիւնները, յաջողութիւն ձեռք: Եթէ լաւ վարժէ գործերը՝ մեր ուրախութիւնը պիտի յայտնենք, եթէ զէշ վարժէ՝ մեր քննադատութիւնները պիտի ընենք: Սեղի պէտք ունենա՛մ» մեր պարտականութիւնը պիտի ընենք»: Եթէ ուղղակի այս բառերով չէ, որ կը գրէ, այս կ'ըլլայ միշտ իմաստը, այս կ'ըլլայ մեր կեցուածքը: Իսկ երբ մենք կը չանք այդ ընտրութիւնները, օրինակի համար Պէյրութի մէջ, փոխանակ քաղաքացիական պարտաւորութեանց գիտակցութեամբ մօտենալու Հարցին, կը պատահի, որ ազմուկ բարձրանայ, ընտրութիւններուն արդիւնքը մերժուի, չենք մտնչմար, չենք ընդունիր: Դեռ արտայայտութիւններ երեւան կու գան, որոնց հետեւանքով ալ կապերը կը կտրուին, կ'իջեմք կը լարուին՝ այն աստիճան, որ մարդիկ իրարու հետ յարաբերութիւնները խզեն:

— Ախր, ինչպէ՞ս կարելի է դա, ես էլ այդ մասին եմ հարցնում: Ի՞նչ է անում առաջնորդութիւնը, ի՞նչ եմ անում մտաւարականները, որ մեզ երեւոյթ գոյութիւն չունենայ, վերանայ հայ կեանքի միջից:

Ա՛յս այդ ատեն էր, որ ես գրպանէս հանեցի կոստան Զարեանի «Նաւը Լեւրան վրայ» գրքէն տունուած հետեւեալ կարճ պարբերութիւնը ու կարդացի (եւ ոչ թէ «Նաւը Լեւրան վրայ» գրքէ հարազատ ազգագրութեան եւ բարեփոխեալ՝ ազգագրութեանց միջեւ գոյութիւն ունեցող տարբերութիւնները, որ «Կարծես այդ օրումս համար պատրաստած ըլլար», ինչպէս կը գրէ տեքստը):

«... Համայնութեան մի անդամը, ազգի մի գաւաղը, ընկերային մարդը — եւ մեզից աւել մէկը ընկերային մարդ է — ճերկայանում է նախ եւ առաջ իրրեւ նկարագիր:

«Նկարագիրը անձնաւորութիւնն է, եմքադրեալ, փոփոխաւոր, ծամամակաւոր...: Անձը տարբեր է: Նա կանգնած է մեր փորձնական խի շերտերի տակ. նկարագիր չէ, փոփոխաւոր չէ, եմքադրեալ չէ, ծամամակաւոր չէ, այլ մնայուն է, տեւական է, ինչպէս անմար թրագ:

«Իսկական մարդկային էութիւնը պէտք է հասնի այդ թրագին, պէտք է տարածէ նրա լոյսը, որովհետեւ այդ լոյսը գալիս է ուղղակի արեւից, համայն տիեզերքից. այդ լոյսը ճանապարհն է:

«Ասել է Լաօզեն՝ երբ կորցնում եմ ճանապարհը, մնում է առաքիմութիւնը. երբ կորցնում եմ առաքիմութիւնը՝ մնում է քաղաքականութիւնը, երբ

կորցնում են բարոյականութիւնը՝ մնում է օրէնքը. երբ կորցնում են օրէնքը, մնում է սովորութիւնը: Իսկ սովորութիւնը բարոյականի արտաքինն է միայն եւ նրանից է սկսում այլասերումը:

«Ասել է մաթ ճամապարհը. ճամապարհը՝ Անձը...»:

Պարոյր Սեւակ խանդավառուած, ուժգնութեամբ բաւ,

— Ի՞նչ լաւ գտար, մի՛շո՞ղ դա եմ ասում, դա եմ ասում, այդ ճամապարհը ինչո՞ւ ժողովուրդին ցայց չեն տալիս ձեր մտաւորականները:

— Մէկ վայրկեան, Պարոյր. այդ բոլորը հիշէ՞ նո՞ւ, գախախնի ի՞նչ գտնաբերեցիք: Մտաւորական տաճ ետ աղջկանս՝ Շաղիկին, երբ ինձի կը դառնայ ու կը հարցունէ. «Այդ ինչպէ՞ս է, որ այս սողները գրող մտաւորականը ինքը, ինքզինքին թոյլ տուաւ չլարգել իր իսկ գծած ուղին. թոյլ տուաւ, որ իր գրքի նոր տըպագրութեան մէջ մտցաւ ինքն, այնպիսի՝ փոփոխութիւններ, որոնք ներքին չեն նկարագրի ունեցող գրագէտի մը, մտաւորականի մը»:

Գրեթէ անդէն ցատկելով, ուժգնութեամբ պատասխանեցաւ ինձի.

— Պիտի ըսես, որ Կոստան Զարեան անճամապարհութիւն գործեց:

— Այդպէս ալ կ'ըսեմ արդէն, Պարոյր: Կ'ուզեմ սակայն աւելցնել, թէ կարեք չկայ ամբողջ գիրք մը աղաւաղել, չեղած ըլլալու համար ժողովրդականի, դրադէտի կոչումէն: Կը բաւէ, որ երեք բանաստեղծութիւնը դրուած ըլլայ, որոնք բանաստեղծի կոչումին շնորհիւ, այլ տարբեր բաներու ծառայեն, որպէսզի բանաստեղծը ծառայած չըլլայ իր կոչումին, նախապէս ցոյց տուած չըլլայ:

— Հի՛շո՞ղ է ասում, մի՛շո՞ղ է ասում. քան ունէ՞ք տանիք, — գրեթէ պոռալով դարձաւ Պարոյր Սեւակ բոլորին:

Պատկերասրահը շարունակուեցաւ անուշադիր. քիչ ետք մեկնեցան ներկայ ըմբռնողներէն ոմանք: Յետոյ մնացող երեք ըմբռնողներ, Պ. Սեւակն ու Գ. Քէշիշեանը «Արագիլ» գացինք. այնտեղ եւս հետաքրքրական ու անուշ զբոսը տեղի ունեցաւ. նպատակս, սակայն, յուշեր պատմել չէ, ոչ ալ Պարոյր Սեւակի մասին գրել, որով՝ կանգ կ'առնեմ այնտեղ:

Յուշերու այս պատաստիկին գրի առնուելուն միակ նպատակը Պարոյր Սեւակի նկարագրին ու դիմագիծին անաղարտ պահպանութիւնն նպատակն էր: Կը կարծեմ, թէ հակայական տարբերութիւն գոյութիւն ունի Կոստան Զարեանի իր գրքին մէջ փոփոխութիւններ կատարելուն թոյլտուութիւնը տալուն առթիւ:

«Իր իրաւունքին մէջն է: Նոր պայմաններու մէջ եղի՞նակը իրաւունք ունի սրբագրութիւններ կատարելու, երբ անդրադառնայ, քէ սթալած է ինք, կամ սխալ են ինչո՞ւ իր քաղած տեղեկութիւնները՝ արտայայտութեան — ինչպէս որքեթ. Տ. Վարժապետեան կը վերագրէ Պարոյր Սեւակին, եւ՝

«Պիտի ըսես, քէ Կոստան Զարեան անճամապարհութիւն գործեց» արտայայտութեան միջեւ, զոր Պարոյր Սեւակ ունեցաւ:

Երկու հակառակի նկարագրներու արտայայտութիւններ են անոնք:

Առաջինը անյարբէր է Պարոյր Սեւակի նկարագրին, դրականութեան, իր ամբողջ ըմբռնութեան, եւ կ'աղաւաղէ իր դիմագիծը:

Այդ դիմագիծը պէտք է այդպէս անաղարտ ալ պահել:

Բ. ՓԱՓԱՋԵԱՆ

Լ. ՄԿՐՏԶԵԱՆ

Յակոբ Մանուկեանի

«ԼՈՒՄՆԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ»

Գ ի ռ ի ը

«Լումայիմ նամակապետի» բանաստեղծութիւնների գրքի հեղինակ՝ Յակոբ Մանուկեանի մասին կենսագրական ոչ մի տուեալ չունեմ։ Յայտնի է միայն, որ «Բագին» ամսագրում աւարիներից ի վեր կարելի է հանդիպել նրա տնուկին։ Ի՞նչ հասկացաւ է անցել հեղինակը, արդեօք գրքում գետեզուածներէջ քաջի նա ունի՞ր ուրիշ գործեր կամ էլ գալիք ինչպիսի՞ նշանակեալ կան, — ահա հարցեր, որոնք ինքնաբերաբար ծագում են որեւէ այսպիսի գիրք կարգալիս։ Բայց այդ կապակցութեամբ իմ այժմեան անտեղեկութիւնը ունի եւ իր առուելութիւնները, նպատաւոր կողմերը։ Այս գէշագում, լիովին հնարաւոր է դառնում կենտրոնանալ յատկապէս մէկ առանձին գրքի վրայ, առանց ծանարեռնուելու հեղինակին վերաբերող բոլոր կողմնակի տուեալներով ու նրանցից բխող համապատասխան տգիտութիւններով։ Հարկ չկայ անպայման հետազոտել ակունքները եւ գտնել կամ երաշխաւորել հեղինակները։ Բաւական է ջոյս տալ միայն, թէ ինչպիսի՞ հեղինակ է երեւում ներկայացուող գրքում։

Չնայած գրքի «լումայիմ» վերնագրին եւ կազմի համապարտական մեւտորմանը, նրա բովանդակութիւնը եւ ընդամեն հեղինակի մտածելակերպն ու նախասիրութիւնները խիստ եւ շեշտուած ձերկւայինն ընդմիջ են կրում։

Այստեղ, բնականաբար, ոչ մի հակասութիւն չկայ Լումայիին հեղինակի համար ո՛չ թէ արեւմտուող նիւթն է կամ միջավայրը, այլ՝ մաքի՜ր անհապարհը, երկրային իրաւիւնութիւնը ըստ հետաւորին յայն համայնապատկերի մէջ՝ առնելու ճիշդը։ Հեղինակը ներքուստ վերածւած է անխառնել առօրեականից եւ այդ նորն առօրեան տեսնել ու քննադատել զրոյց, տարբեր երեւոյթների փոխադարձ կապակցութեան մէջ, որքան էլ որ թանձրացեալ լինի այս կամ այն երկի միտումը։ Նա չի ձգարձ տարբերքի մէջ հարուել ու չգտնաւ, այլ՝ ընդհանրապէս, իր անձով անխառնել ու անկախանալ եւ միայն այդպիսի հոգեւոր բերեղացեան հանապարհով տեսնել ու նաեւ, այս կամ այն առումով, վայելել աշխարհը։

Յակոբ Մանուկեանի երկրային նախասիրութիւնների մասին յատուկ խորիմաստ կոաււումներ կարիք չկայ, քանի որ բուն ապացոյցները ինքնին բաւական շատ են։ Նա ինքն է անընդհատ այդպիսի խոստովանութիւններ անում։ Ահա՛ թէ ինչ է առում, որի նաեւ, գրքի հեջ առաջին թագ՝ «Յալ առ երկիր» երկում։

Տիեզերքի ենաշող մայրակներն ափ առի
 Ու շրջեցայ ճամփ՝ հեզ իր շողաւէտ ծագերուն,
 Երկիր՝, օրոյսդ պէս դիւրեզ, բոյրի՜ն՝ հաւակ խնկեմի՜,
 Ես չգտայ ոչ մէկ սէր, ոչ մէկ անանձ արարիւմ:
 Լուսամուտէն երբեքս երբ կը դիտեմ քեզ լսիմ
 Հասկ շողերուն տակ մեռնող վերալուսի արեւուն՝
 Կեդրոնածիր պաւսով խոնքս քեզ կը մնկնիմ,
 Կը խոյսանան ցնորճերս լանդերդ ի վար փողփողուն:

*Թաւրոզ՝ «Հռվունքներուն լուսնային» քառյակներէն մէկն է, որ աւելի ուշ ընդ-
 արձան է դրածու շեղանակի միտքը, միմեանց յետեւից արտայայտելով այսպիսի երկրա-
 պաշտ արտադրութիւնները:—*

Քող առաւել խորութեամբ կոտորեմ վերներս բիրաւար.
 Անցնին օրերս տալարուն քարք կարտով հեշտութեամ,
 Բա՛ւ է միայն, որ շնեմ բոյրք երկրիս դարաւոր,
 Որուն հաւակ էսքեմն ես մտնիկն իմ անբաժան...
 Երկիրն իմաստն է կեանքիս, տարումներս ինքնակամ,
 Որուն ծովերն յորճանուն, մայլ վիկերն իսկ միջին
 Ես չեմ փոխեր ոչ մէկ շինք դրախտի հետ լուսնային:

*Այս երկրապաշտ արտադրութիւնները որոշակի աշխարհայեցման ու աշխարհաբ-
 րոնման բանաստեղծական արտայայտութիւններ են, այլ ոչ թէ արդէն առանձին երաժշտ-
 ագիտական «փոխադրութիւններ» հաշտեալ ուրախութիւններէ դիմաց: Հեղինակը երկրային
 կեանքի չփայտեալ պաւսակներէց չէ, ինչպէս երեւում է նրա այս տողերէց:*

Հոս երկրային տփերուն սիրով շա՛տ եմ ստապում,
 Կրած վերեր վշտաբոք, քափած արցունք շառնուրեմն,
 Զո՛ւնն եմ քարձած կարեւոր խոստումներու դքսանոմ,
 Գարունն մէջ կենսախալ՝ երգած քալիսը աշման:

*Բայց, այդպէս զերծ, ես կապում է աշխարհին ու մարդկանց, որպէս ժիւղ ու
 արամադրելի բրականութեան, որպէս իր իսկ գոյութիւնը յիշեցնող ու հաստատող միայնակ
 ներկայութեան: Այս կապակցութեամբ արժէ արձանագրել, որ մանուկեանդ գրեթէ ամբող-
 լովին ձեռքբերած՝ կարեւոր է հոշիւ ճանապարհի աւ ձգտումներն երգ: Հեղինակը գոյութեան
 ա՛յլ տառիկներ, վրայ է դառնում: Նրան, ինչպէս երեւում է, անտեսող չեն կեանքի դա-
 նութիւնները: Երազմութիւնները, բայց կարծես թէ չի էլ ձգտում յաւաքութեան
 գաղափարը: Առճորտութեամբ՝ որպէս է լինում, երբ մարդ, առեւել զգլքում բանաստեղծը,
 երբեքն ուժ է: զգում հնարաւոր բոլոր անակնկալների ժամանակ վեր է վերել: Երկրային
 դուրս գալու համար: Ես պայմանաւորաբար է մեն մասամբ նպատակաւ տարբերակն ա-
 ռանմայրութիւններով ու խառն մանուկեան հոգեկան դիմադրութեան համապատասխան
 զենքերով: Ներքին՝ զգի՜ հազարապարկան թէ՛ պատահական, պարտաւր ինքնաբերական հոգ
 է՝ տանգետում ամեն կարգի՝ հիմնաւոր կամ անհիմն յոռետեսութիւններէ համար: Արտաքին
 աշխարհն ու գոյականները չեն, որ իրականում այսպէս կամ այնպէս, այսինքն՝ միակողմա-
 րեւելի, սեւ կամ մուգ, են լինում, այլ՝ բարդութեամբ են հանդիսանում յիշելի աշխարհի հետ
 հաղորդ թիւերի, ամբողջական ապրիմանները, ինքնը, գոյնը, հաւաստութեան չափը: Մար-
 դուն են, քանակական: Ներքին ինքնաբերական հիմնականում, անկախ ինքնաբերական են եւ ոչ մի*

արտաքին աշխարհ չի կարող գրանց լուսնելու, դեպատման առաջարկել, նոյնիսկ զգամենա-
յուշ գէղարմ, եթէ չկան ազատ ընթացքի ներքին նախադրեալներ:

Այս մասնումները թելադրուեցին Մանուկեանի մի շարք բանաստեղծութիւնները
կարգաւիս: Այս տաթիւ եւ օւղղութեամբ շատ բան կարելի է ասել, բայց նպատակս չէ ո՛ր
Հիմնաւոր սուսմանութիւնները կրելու եւ ոչ էլ ներկայացուող գրքից այլեւայլ կտորներ այս-
տեղ յաջորդաբար արտադրելու ու քննութեանը չհանելու: Կարգաւիս ընդգծել, որ բանաս-
տեղի Մանուկեանի երկրպագուութիւնը, զատելով քաղաքական առեւտրերէն, ամբողջական
Հիմք ունի եւ ասել բանաստեղծական մեղք յայտարարութիւններ անելու սխալն չի մեղ-
կերպում:

Արդէն որոշ շփոթ ակնարկուեց, որ Վլասնայիմ անապարհով գրքի մէջ այսպէս
ասած լուսնային տարրը բանաստեղծի մտորումներէ Համար Եթ ու միջավայր չէ, այլ՝
իրեն ծանօթ երկրային իրականութիւնը որոշ հեռաւորութիւնից գիտելու եւ տեղեկութեան
կազմակերպութիւններէ մէջ անանելու պարզ արտադրութիւն: Այդ արտադրութեամբ է կան-
խորշուած նաեւ բանաստեղծութիւններէ մեծ մասի մեղքուն կողմը, կատայցը, շարադրան-
քը: Ան նաեւ Հեղինակի չեղուն եւ սքը: Տողերը Հիմնականում երկար են, լարեալունչ ու
շաշնակաւ, Հորիզոններ ընդգրկելու միշտ պատրաստ: Կտայց յորդապատ է, վարար, ինքն
իր ուժով շարժուող, ինքն իրենով սնուող եւ առանց նկատելի սեթեւեթութիւնների: Ըստ
երեւոյթի Հաւասար կարող են Համարուել Վլասնայի բանաստեղծութեան Հետեւեալ ինք-
նաշուքագրական առգրքը:

Սո կը տիրեմ լեռնաժայռի մը վերեւ
Կուրծեմ պարզել ձաղմբուս խօլ համբոյրին
Սո անյաղապարհ ձաղկել զինները մահուան,
Ըսել անոց քէ եւ տէրն եմ իմ կեանքիմ,
Ճամբորդի անշուք գիտակցութեամբ խնայեմ
Սո զնկավարն խորախորհուրդ քննաքննալ:
Տիկեմքիմ է, որ կու տայ լոյս տարփայլի
Խնայեմ յաղացմբուս զերպոյնի:

Երբ այստեղ է մէջէ այլոց յիշատակում է առգրքի երկարութիւնը, դա, ի Հորիզ, նրանց
որեւէ արժանիք զերազրելու Համար չէ, այլ՝ աչքի ընկնող բնորոշ իրողութիւնը
Հաստատելու: Քանզի առգրքի երկարութիւնն ու կարճութիւնը ինքնին չի կարող զրական
կամ քաղաքական յատկութիւն Համարուել: Բայց չենք էլ կարող պատահական Համարել,
որ Մանուկեանի բանաստեղծական խորքը արտայայտութիւն է զանազան յատկանքի երկարա-
տող մեծերի մէջ: Տողերի երկարութիւնը ընդհանրապէս կապուած է նաեւ անգղապարծա-
կան Հիզից խորս առեւտ, Համար, լսենէլ ամէն անգամ պատահական բառերով ու արտայա-
տութիւններով եւ այլպիսով ինքնին զարմանալով բառերի բնատուր արժէքը, առաւել զի
առանձին ու նուազ կամ ոչ-պիտանի մեղքնայարգէն կաղք-կողքի շարել: Պէտք է լեռնել, որ
Մանուկեանը, որպէս կահն, այդ ճանապարհով չի ընթանում: Նրա առգրքը առաւելագոյն
կատարուած են անշուք զործածուող բառերից, ուստի եւ յաջորդում կտորներէ մէջ նկատելի
է Համարականութեան խառնութիւնն ու իմաստային ներդաշնակութիւնը:

Դրան զուգընթաց, Մանուկեանի բանաստեղծութիւններէ Համար բնորոշ են եւ Հա-
մայապի կտորներն ու երաժշտականութիւնը: Նրան զներքին ականջը, պէտք է ասել, լաւ է
զարմում: Խոտորումներ գրեթէ չկան: Այդ բնագաւառում բնահնչութեան Համար մեծ
խնամք եւ ուշադրութիւն է նկատուում: Բայց տեղ-տեղ թւում է, թէ այդ բնահնչութեան
պատճառով որոշ առգրք առեւտն է ներքին կողմից: Երաժշտականութիւնը ապահովելու Հա-
մար կրքեմ գործ եւ անուամբ շարադրական արհեստական մեղք, բառերը իրար յաջոր-
դում են անմիջապէս դառնալով բնական: Թմբուս Հեղինակի աչքում գրանց միանգամայն բնա-

կան են, բայց ըստ իս տղայութենէն Հազիւ թէ երբեւէ ընդհանրանան եւ Հեռանկար ունենան: Այստեղ յատուկ սրբնակներ քերելու հարկ կայ: Բայց իւրաքանչիւր ընթերցող կարող է հանդիպել բաւական թուով նման խորթ դարձուածքներ:

Ահաւասարակ, Մանուկեանի բանաստեղծութիւններէ մեծ մասը ընթերցումը բազմաթիւ մտքեր է յարուցում: Այդ կարգի քանաստեղծութիւններէ մէջ գերակշռում են ինքնուրոյն գիւտերը, թարմ ու անմիջական ազդեցութիւնները: Անկան կէտերէ լիցիւրական կապը պարզելուց յետոյ՝ կարելի է հասնել անհամեմատ մեծ ծաւալումներէ եւ ընդհանրացումներէ: Բայց այդ ամէնի Հեռանկարով դիտել ըստ Հեռանկար կը տանի: Ուստի բաւարարուենք առաւել լուկան ու մտայնիկ նշումներով:

Բանաստեղծի երկրորդին կողմէն աբստրակցիւրաց յետոյ, հարկուոր է ունիլ տալի դեմք եւ հնչել այդ կողմերէ մի ըստ կարեւոր ընդգուշում: Հայաստանն ու հայութիւնը, Բանաստեղծի շերտերէն ուղեւորը ըստ տեսլի ու տեղիէ կը մտայնի, եթէ անտեսուէր այդ պարագան: Յիշուի, Մանուկեանը անմիջական, նոյնիմի լափից աւելի լիբերալացում թեւոր է արտայայտուում հայկական արժէքներէ նկատմամբ, հին թէ նոր, մասիկ թէ հեռու: Եւ ուղղակի չի հանաւում ժամանակագրական կամ աշխարհագրական արեւէ օտը՝ մանափակում, քանի Հայկականը ապրող ամբողջութիւն է նրա աչքով, ինչ որ անխառնաբերէ ներքին հոգեմտաւոր անողջութեան նշան է եւ հետագայ անհնազանդութեան ծաւալումներէ անհրաժեշտ նախադրման, ունիլ լայն բացուելու երաշխիք: Հարցը, բնականաբար, գտնական մեծագուտ անուններ ու վայրեր թուարկելու մէջ չէ, այլ՝ նրանց նկատմամբ յատուկ ու մեկին վերաբերմանը հնչելու եւ բանաստեղծի տեղը որոշելու:

Օրը տաւում է, թէ հայտնական ամբողջութիւն է բանաստեղծի այնքան, որ չի նշանակում, թէ հարկէ, թէ նրա համար ամէն ինչ միեւնոյն է եւ նա արեւմտեան արարեութիւն չի դնում կենսաբիւրացի երեւոյթներէ միջեւ: Ո՛ր, Բանաստեղծ չի թաքցնում իր համակրանքները, թէ եւ հակադրանքներէ մասին կարծես թէ ըստ խոնարհ ամբողջութիւն չունի: Եւ քարտեմայն հնչակում է իր նախադրութիւնները եւ ինքն ինքն համարում մասնաւորապէս անմիջական հայրերի շարունակ, նրանց վրէժ գործերէ օրինական ժողովրդագրութիւն: Ուստի միանգամայն քննական է, որ իր մային էլ հնչի նրանց էութեանն ու ոգւին համարադրութեան, արեւմտափայլի ինքնամոտահանութեամբ: Այսպէս, զլուսապարս Բանաստեղծութեան մէջ տաւում է.

Տալերսու մէջ մի՛ փնտաւէ հեղեղանքներ աշխարհիմ,
Ոչ հառաչանք պանդուխտի եւ ոչ իսկ հեծք որդւորեան,
Ձի լուսեղանքում եւ յոնգում մեր կենսաշուք երկնքիմ
Սւ օրհնեղանքում՝ ցալիքի ալգարացիմ ասկեմում:
Երգս լարովմ է քրքաւում հայրենական ցնծութեան,
Ձոր գարուններմ եմ երկման մեր հալուսերգակ սարերում,
Ու սիրտս յորդ բերկրամէջ ու պարմամէջ պատարում:
Փոխում մառյալ մաներգի կ'երգեմ պարս իսկական,
Օ՛ր, լուսապարս հնչում Սարգսարգատս կ'երգիմ:

Յակար Մանուկեանը տեղայման լաւ գիտէ, թէ ինչն են պատանի հայութեան տեսած հանապարհիմ, նոյն ժամանակ գիտէ եւ աշխարհայ կացութիւնը: Բայց եւ կարողանում է ինքնուրոյն Բանաստեղծութեամբ է համակրանք հայութեան մեղք բերան նուազումներէ ու արագայի հանգչել: Այդ կարգի զգացումներէ ամփոփ արտայայտութիւն է զերգ հայութեանն երգել, թէ ըստ այլ իրկերի:

Ի հարկէ, Մանուկեանի գիրքը իր ամբողջութեամբ ո՛ր հայերգութիւն է եւ ոչ էլ ամբողջութեամբ: Եւստ մէջ կան ընդհանրապէս մարդկային խորք ունեցող խոնք ու արարումներ, սիրոյ եւ յորդ, վշտի եւ անհնազանդութեան արտայայտութիւններ, իրենց անմի-

«Թոռեկի քեղարձան» Վարդգիսի գիծերով (էջ՝ 13-14), բանաստեղծը զոհադան խորհուրդներ է տալիս, թե ինչ համազումով ինչ պետք է անել մեք դարում, սկզբունք՝

Հո՛ւ՛ ամենց, քե՛ն ոգին ես վնասկամ
Արգարտազատ գոյութեանս.
Պանն է հնչած քե՛ն ամաչառ դատումի՛
Բարդ ու առկաթ հաշիմներ
Հարկ է յանգին հուսկ եւ արդար լուծումի:
Հո՛ւ՛, Վարդգիս, քե՛ն Արարեամ հնամեայ,
Որ քուրմերու կողմանքին տակ կը սգայ,
Հարկ է յամենի կայերուն,
Որո՞՞ք յայտնի եւ հաւատեալ անհամում
Դաքեր ամբողջ զայն պաշտեցին հոգեւի՛մ
Ազատութեան իբրեւ կոքոզ գերագոյն...

Պարզ է, թե ինչ է ուղղում տան հեղինակը: Եւ այս հարցում սկզբունքային տարբերությունն ինքնին անհնգի կը լինէր: Բայց այդպիսի մի միտք այդպիսի հասկացման արտայայտումը մի միտքի կապ չունի առհասարակ եւ մանավանդ արտիկուլ բանաստեղծության հետ, այնչառ թույլ է նախիպ լրացրական որոնք յոգուածում կամ սովորական խոսակցութեան ընթացքում: Ի հարկէ, հեղինակն ունի որոշակի նուիրական զգացումներ ու մտածանքներ եւ ուղղում է գրեթե անպայման արտայայտելու: Բայց ինչն ճիշդ դրա համար էլ հեղինակային պատասխանատուութիւնն ունի է մեծանում եւ ուստի առաւել նախանձախորհրդութեամբ պէտք է որոնել համապատասխան մեւ եւ ընթանալ: Այլապէս ոչ մի նախապահութիւն երբեք ոչինչ չի շահի, էլ յետեւում մտքի անխուսափելի հասարակացման վտանգի մասին:

Ուշագրաւ է, որ Մանուկեանի դրումն այդ կարգի թույլ եւ անձակ ճեղքները պիտաւարապէս նկատելի են ազգային-հասարակական եւ բարոյախոսական հարցեր շուրջից երկերում, ի տարբերութիւն զուտ քննարկան ու մանուկեան խառնակ երկերի: Սրինակ, այդպիսի վերլուծում պէտք է համարել եւ զվեցիւսի հետ: Երկի մի շարք հատուկներ: Դարձեալ խոսքը հեղինակի լրացման ու արտայայտած մտքերին չի վերաբերում, այլ նրանց բանաստեղծական մարմնաւորումը: Եւ յանուն Մանուկեանի բանաստեղծական անհատականութեան առաւել բնութագրական, պէտք է մտքին, որ այդպիսի անձակ սողներ ուրիշ անգամ տեղ չգտնեն ապագայ երկերի մէջ: Իւրաքանչիւր ստեղծագործութեան կազմաւորման շրջանում դրանք իրենց յաջորդական տարբերակներով անխուսափելի են, մինչեւ վերջնական կերպարանք ստանալը: Բայց այստեղ անհնգիւց յետոյ հաւանքին անկարելի է եւ այնչառ ներողամիտ զիջումներ չեն կարող լինել: Աւարտուած երկը պէտք է սեփական դիմագիծով ամբողջութեամբ լինի եւ հանդիսանայ տուեալ հեղինակի ստեղծագործական պատասխանատուութեան զերազոյն արդարագրը: Կարող են բազմաթիւ սեւագրութիւններ լինել, զա ինքնին հետեւանալի է, սակայն ապուստը վերջնական է համարում: Եթէ արձանական յատուկ վերանայումներ չի՞մք չկան:

Արժէ թնթեակի անդրադառնալ նրա մի այլ կէտի:
Մանուկեանի երկերում բառական դերակշռում է պատմողական ու նկարագրական, ինչպէս եւ մանագրական կողմը, առանց կատարյալաբար լինուած ելուէյնների: Շատ զեղքերում դրանք առարձ զարեին չեն վնասում, բայց անընդհատ կրկնուելու պարագայում կարող են միապատկերական եւ փակուղու վտանգ ստեղծել:

Առհասարակ երկար ու միապիսի, անսահման ու միապատկեր ճանապարհը բանաստեղծութեան մաս է նշանակում:
Բանաստեղծական խոսքը արտայայտել է դանձում ոչ թէ հերթականորեն ծաղած

ժողովին նշելով ժողովի գումարները, շարադրանքի նախընտրելիության մասին Թիվերի կողմից գանձան հորիզոններ ընդգրկելու և այդպիսի առարկեր տարրերի մեղմեցման նախադրանքը հարմարեցնելու միջոցով:

Ուղիղ և անմայրենի անհաղթելի պարզապես բանաստեղծություն չկա:

Բանաստեղծությունը կենդանի, շարժման, ելուկ-շուկի, անդիպումների, արժանաչների, արտացոլումների, թրթռումների և բարախումների նման է:


Բազմազան երևույթների միջև խառնասուկ կապ ստեղծելու արուեստ, սահմանափակ ստեղծության վրայ անսահմանությունը ամփոփելու հոգևոր արարչը: Տեսանք և լսույթը թվում է չափանշան պատմելի և նկարագրելի առհասարակ չի ապահովում բանաստեղծության բան քաղմանը և բարձր ընդգրկումները:

Թանկ Մանուկների այժման զուգահեռային անապատների գիրքը, տեղում, հանրապետություն, այլ՝ ելակետ և իր անուկի գրական ցատկառատության: Գրքի բովանդակությունը ընդհանուր առմամբ վերաբերում է, որ հեղինակն ունի ներաշխարհ, բանաստեղծական ընկալունակություն, գեղարուեստական խաղի սեր և ճշգրիտ: Բայց այդ բարձրաստիճանի ներքին միջին հիմա ստեղծագործական շրջանառություն մեջ են գրում: զերապակցական ներքին անհաղթելի: ուստի զնայական և խաղական ապարդիզում հեղինակը անհամեմատ առկա ներքին և արդիական և ինչ է հարկել, անհի և արդ լսում է հասունացել: Միևնույն ժամանակ, արտաքին աշխարհի գերազանցող պատկերացումները նկատելիորեն կրում են զրգային և զուտ գաղափարական գրքի, կենսափորձը չի հասնում առարկային փոխել, եթե խոսելու լինենք միայն նրա բանաստեղծական մարմնավորման մասին, այլ ոչ թե անհասանելի ապրումների նկարագրի խորություն և վառարկանություն: Այդ ապարդիզում գեղեստ չի գտնում համապատասխան գեղարուեստական միջոցը՝ ժողովին նկատում համար:

Ճիշդ է, որ առհասարակ բանաստեղծ նկատում են, այլ ոչ թե դառնում: Բայց բանաստեղծ նկատումներն էլ իրենց ներքին գիտեն, թե ինչպիսի անուկի աշխատանք և լսումանություն է պահանջում իրենցից, որպիսի կարողական ամեն անգամ յուրյան սաղմերը անհեղինակ և վերապահ իրենց կերպարանքով աշխարհին յանձնել: Նրանք գիտեն, որ բանաստեղծություն չի ներկայացնում բացառապես բաներն են, բայց դա չի նշանակում, թե ամեն ուսուսակ բան միևնույն կցելով անգամյան բանաստեղծություն կը ստացուի: Ուրեմն, միշտ էլ հարկավոր է բանաստեղծական ներքին հոգ, յարատև աշխատանք և զարմանալ աշխատանք:

Այն ժամանակ միայն կարելի է արդիական ակնկալել՝ բանաստեղծական լավանքով: Եւ իրականում էլ արուեստի համը թեկապետ հաշված բանաստեղծները ամբողջ կենսական շարունակում են իրենց գործը, առանց կողմնակի յորդորանքների:

Լ. ՄԿՏՅՈՒՆ



digitised by

A.R.A.R.@

ԱՆՆԱԴՆՔԱՅ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՍԸ

Շուտով հրապարակ կ'ելլէ Սփիւռքի վերջին շրջա-
նին (1940-1965) սկսած եւ դիմագիծ կազմած գրողնե-
րուն նուիրուած շուրջ երեք հարիւր էջոց հաւաքածոն՝

ԱՆՄԻՋԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

անունով, ուր ներկայացուած են 17 գրողներ՝ իրենց
լուսանկարներով, կենսագրականներով, գրական քն-
նքնումներով եւ գիրքնէ լուսագոյնս յատկանշող գրա-
թիւններով:

Հսկայական այս գործին համար խնայուած են ոչ
ժամանակ եւ ոչ ալ նիւթական զոհողութիւններ:

Նոր Տարուան ձեր լուսագոյն նուէրը եւ գրասէրնե-
րուն համար մնայուն գանձ մը՝

ԱՆՄԻՋԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Հրատարակութիւն

«ԳՐԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԽՐԱԿ»-ի

Տեղի անվանութեան պատճառով՝ այս թիւին համար
խոստացուած գրութիւններէն երկուքը՝ Տիգրան Ոս-
կանիի պատրաստած «Ընդհանուր ակնարկ յետպատե-
րազմեան գրականութեան վրայ» խորագրով յօդուածը
եւ Սուի Յակոբեանի հայացուցած «Հեղինակներ, գրու-
թիւններ, ձգտումներ» անուն համապատկերը պիտի
տանք մեր յաջորդ թիւով:

پاکین
مجله شریعی، ادبی و فنی علمی
مدیر المسؤول
السید ارتین کارنیک فزائجیان

PAKINE
REVUE MENSUELLE
LITTÉRAIRE & ARTISTIQUE

Propriétaire
Dr. A. KAZANDJIAN

Բ Ա Գ Ի Ն

ԱՄՍԱԳԻՐ

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Եւ ՍՏԱՆԲՈՒԼ

ՎԱՐՈՋ ԽՍՐԱԳԻՐ

Գ. ՍԱՍՈՒՆԻ

ԽՍՐԱԳԻՐ

Գ. ՍԱՍՈՒՆԻ

ԽՍՐԱԳԻՐՈՒԹԵԱՆ

ԱՆՊԱՄՆԵՐ

Յ. ԳԵՂԱՐԻ

Տ. ՈՍԿԱՆԻ

Բ. ՓԱՓԱՋԵԱՆ

Ն. ՊԱՐԹԵՆԵԱՆ

Ժ. ՍՅՐԱՐԵԱՆ

ՀԻՄՆԱԳԻՐ ԱՆՊԱՄՆԵՐ

† ԵՒ. ՊՈՍՏԱՆԵԱՆ

Խմբագրութեան հասցէ

G. SASSOUNI

Rue Sélim Boustani,
Beyrouth-Liban

Հեռաւայրի թիւ 296898

ՏԳ. ՀԱՄԱԳՈՒՄԻՆ

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ

ԼԻԲԱՆԱՆ	22 Լ. ՈՍԿԻ
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ	8 ՏՈՂԱՐ
ՀԱՏԱՎԱՃԱՌ	2 Լ. ՈՍԿԻ



Վարչութեան հասցէն

G. SASSOUNI

Rue Sélim Boustani
Beyrouth - Liban